ԱՐԻՍՏԱԿԵՍ ՏԵՎԿԱՆՑ

# ԱՅՑԵԼՈՒՄՅՈՒՆ Ի ՀԱՅԱՍՏԱՆ 1878 Թ.

ԵՐԵՎԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

АРИСТАКЕС ТЕВКАНЦ

# ПОСЕЩЕНИЕ В АРМЕНИЮ 1878 г.

Рукопись комментирована и подготовлена
А. М. ПОГОСЯНОМ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1985

9(47.925)
Հ17-35
Հ2
22228

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՏԵՎԿԱՆՑ

# ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՀԱՅԱՍՏԱՆ 1878 Թ.

Ձեռագիրը պատրաստել և ծանոթագրել է
Հ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1985

ՀԱՅԿ ՍՍՀ ԱՐՎԵՍՏԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴ.
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ակ-ի գրադարան-թանգարան АН Арм. ССР

63. 3 (2 Հ) 5
Տ 354

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր
Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր Վ. Ա. ՊԱՐՍԱՄՅԱՆը և
գիտությունների թեկնածու Է. Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆը

Տեկանց, Ա.

Տ 354

*Այցելություն ի Հայաստան 1878 թ. /Տեքստը պատրաստեց և ծանոթագրեց Հ. Մ. Պողոսյանը [Պատ. խմբ.՝ Ա. Ս. Համբարյան] —Եր.: ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1985.—137 էջ:*

*Ա. Տեկանցը 1878 թ. ճանապարհորդել է Բարձր Հայքի վրայով դեպի Մշո դաշտ և Բաղեշ ու կազմել է այդ տարածքի վրա գտնվող բնակիչների վիճակագրությունը: Զեկագիր աշխատության մեջ հետաքրքիր տվյալներ կան այդ վայրերի աշխարհագրական միջավայրի, բնակիչների զբաղմունքի, սոցիալ-տնտեսական հարաբերությունների, դպրոցական գործի և այլ հարցերի մասին:*

*Գիրքը հասցեագրվում է պատմության հարցերով զբաղվողներին:*

0505040000
Տ ———— 21—85 63. 3 (2 Հ) 5
703 (02)-85

© Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1985

## ԱՐԻՍՏԱԿԵՍ ՏԵՎԿԱՆՑ (ՏԵՐ ՍԱՐԳՍԵՆՑ)

*Տեկանց գերդաստանը Վան քաղաքի ամենահին տոհմերից մեկն էր և տեր Սարգսից ժառանգել էր Տեր Սարգսենց կամ Տեր Սարգսյանց ազգանունը: Տեր Սարգսի որդին՝ Հարությունը ուներ 7 տղաներ, որոնցից Երեմիան, Արիստակեսը, Սեդրակը և Վրթանեսը Վասպուրականի զարգացած և առաջավոր մտավորականներից էին: Եղբայրներից Մելքոնը քահանա էր, Ավետիսը՝ ոսկերիչ, իսկ Պողոսը՝ հնեավաճառ: Ավետիսից սերվեցին Հարություն, Հայկ և Արամ Տեկանցները:*

*Հայկ Տեկանցի մասին կենսագրական քիչ տեղեկություններ են պահպանվել: 1909 թ. նա Թիֆլիսում լույս ընծայեց «Պատկերներ արցունքի հովտեն, թուրքահայոց կյանքեն» գիրքը, որը գրական լեզվի և Վանի բարբառի խառնուրդով գրված բանաստեղծությունների մի ժողովածու է:*

*Հ. Տեկանցը 1918 թ. Թիֆլիսում հրատարակեց բանաստեղծությունների մի նոր ժողովածու՝ «Խորտակված քնար» վերնագրով, որի մեջ տպագրեց նաև Վանի գավառաբարբառով փոքրիկ և գողտրիկ երգեր: Վրաստանում սովետական կարգերի հաստատումից հետո Հայկ Տեկանցը ապրում էր Թիֆլիսում և 1924 թ. հրատարակեց «Դեպի ժպիտ» երգիծական ժողովածուն, իսկ 1930 թ.՝ «Շփացած աշխարհակալը» գիրքը:*

*Հարություն Տեկանցը (1874—1906) սկզբնական կրթությունը Վանում ստանալուց հետո սովորել և ավարտել է Էրզրումի Սանասարյան վարժարանը: Գրել է պատմվածքներ, բանաստեղծություններ, մանկական երգեր, թղթակցել է մի շարք թերթերի, կատարել է ֆրանսերենից թարգմանություններ:*

*Միսակ Տեր Սարգսյանը (1855—1906) Մելքոնի որդին էր: Երկար ժամանակ ուսուցիչ էր Վանի ծխական դպրոցներից մեկում, ամերիկյան որբանոցում և Դատվան, Գործոթ և Կյուշակ գյուղերում: 1900 թ. Շատախում ուսուցիչ էր, որը*

հնարավորություն տվեց նրան գրելու այդ գավառի ժողովրդի սովորությունների ու բարքերի մասին իր տպավորությունները։ Գրի է առել Վասպուրականի շատ ժողովրդական երգեր։

1965 թ. Թեհրանում Հ. Աճեմյանի խմբագրությամբ հրատարակվեց նրա թողած ժառանգության այն մասը, որը պահպանվել էր նրա թոռան՝ Հեղինեի մոտ[1]։

**Միհրան Տեր Սարգսյանը** (1885—1958) Միսակ վարժապետի որդին էր։ 1915 թ. Հայաստան գաղթելուց հետո մինչև իր կյանքի վերջը ապրեց և որպես ուսուցիչ աշխատեց Դիլիջանում (1929—1958 թթ.)։ Ավարտել է Վանի Երեմյան վարժարանը, իսկ 1901 թ.՝ ամերիկյան միջնակարգ դպրոցը։ 1901—1905 թթ. զբաղվել է ատաղձագործությամբ, իսկ դրանից հետո՝ ուսուցչությամբ։ Գրել է հուշեր Վանի 1915 թ. գաղթի, կենսագրական ակնարկ Մոկսի Մոհթուլա բեկի մասին, որոնք լույս չեն տեսել և հավանաբար գտնվում են նրա ժառանգների մոտ։

**Վրթանես վարդապետ Տեկանց** (1850—1915)։ Տեկանց եղբայրներից էր, սովորել և ավարտել է Վարագի ժառանգավորաց վարժարանը։ Շատ հմուտ է եղել հայկական եկեղեցական երաժշտության մեջ, որը և դասավանդում էր ժառանգավորաց վարժարանում։ Նա 20 տարի վարում էր Վարագա վանքի վանահայրության պաշտոնը և սպանվեց 1915 թ. Թուրքական ջարդարարների կողմից։

**Երեմիա Տեկանց** (1829—1885)։ Լիմ անապատի միաբաններից էր, ապա դարձավ Վարագա վանքի վանահայրը։ Վարդապետական ապա եպիսկոպոսական աստիճան ստանալուց հետո տարիներ շարունակ եղել է Վանի, Մուշի, Բաղեշի, Զմշկածագի, Արաբկիրի և Խարբերդի հոգևոր առաջնորդը[2]։

Երեմիա Տեկանցի անդրանիկ գիրքը՝ «Հայրենյաց երգերը» (1865 թ.) տպագրվեց Վարագում, որից հետո հրատարակվեց նրա «Հայրենասիրությունք հայոց» (Կ. Պոլիս, 1872) մեծածավալ աշխատությունը։ Երեմիայի գրչի արգասիքն է մինչև այսօր ձեռագիր վիճակում գտնվող 11 հատորանոց «Տոհմային հիշատակարանը», և դրանից բացի, 6 հատոր այլ աշխատություններ, որոնք գտնվում են Երևանի մատենադարանում։ Այդ հատորներում կան շատ ուշագրավ տեղեկություններ Արևմտյան Հայաստանի, Թուրքիայի հայաբնակ վայրերի ժողովրդի, նիստ ու կացի, սովորությունների և թուրքական դժնդակ պայմաններում նրանց կրած տառապանքների մասին։ Աշխատություններից մի քանիսը Երեմիան գրել է 1872 թ., երբ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Մ. Խրիմյանին անհրաժեշտ էր իմանալ իր ժողովրդի հարստահարությունների մանրամասները։ Երեմիայից մեզ ժառանգություն մնացած 17 հատորները Արևմտյան Հայաստանի ժողովրդի կյանքի նկարագրի իսկական հայելիներն են և կազմում են մոտ 5000 էջ։

Ե. Տեկանցը 1862 թ. Զեյթունի ապստամբության օրերին պաշտոնավարել է Կոստանդնուպոլսի պատրիարքարանում և իր «Տոհմային հիշատակարանում» շատ արժեքավոր տեղեկություններ է թողել ապստամբության օրերին Կոստանդնուպոլսի հայ համայնքում տիրող իրադարձությունների մասին[3]։

**Սեդրակ Տեր Սարգսյան** (1853—1938)։ Սկզբնական կրթությունը ստացել է Վանում, ապա անցնում է Կոստանդնուպոլիս, որտեղ ուսուցչությամբ զբաղվելու հետ միասին գրում է «Շահեն ի Սիպիր» (Կ. Պոլիս 1876) վեպը։ Դրանից հետո հրատարակում է «Վառարանի մը կայծեր» բանաստեղծությունների ժողովածուն։ «Արևելյան մամուլի» մեջ Ասպետ ստորագրությամբ հրատարակել է ժողովրդական շատ երգեր[4]։ 1920 թվականից Լոնդոնում ուսուցիչ էր Կյուլպենկյանի ընտանիքում, ապա տեղափոխվում է Ֆրանսիայի Նիցցա քաղաքը, որտեղ էլ 1938 թ. կնքում է իր մահկանացուն։ Թողել է «մի քանի անտիպ վեպեր և ուրիշ գրվածքներ, որոնց ուր ըլլալը կմնա անհայտ։ Գուցե կմնան Կյուլպենկ-

---

1 Միսակ վարժապետ Տեր Սարգսյանց, Երգեր, խոհեր, կրոնական, բարոյական, խրատական, ազգագրական, ժողովրդական և բարբառական հին ոտանավորներ, Թեհրան, 1965։

2 «Արևելք» (Կ. Պոլիս), 2/22 դեկտեմբերի, 1900։

3 Հուշերի այդ մասը մենք հրատարակել ենք «Բանբեր Հայաստանի արխիվների» պարբերականում (№ 3/9, 1964 թ. էջ 56, 78)։

4 «Արևելյան մամուլ», Հոկտեմբեր, Զմյուռնիա, 1875, էջ 386։

ներու հոգատարության տակ»[5]։ Նույն գրքի հեղինակի կարծիքով Սեդրակը մամուլում հանդես է եկել նաև «Մանուկ դպիր» կեղծանունով։

Սեդրակ Տեր Սարգսյանի «Շահեն ի Սիպիր» վեպը Վասպուրականի և Տարոնի ժողովրդի այն ժամանակաշրջանի կյանքի իսկական նկարագիրն է։ Այնտեղ տրված է Վանա ծովի կղզիներում ապրող խստակյաց վանականների անհրապույր կյանքի նկարագրությունը, մանրամասնորեն շարադրված է Մշո ս. Կարապետ վանքի տոնախմբությունների մեկը։ Վեպի գլխավոր հերոսը՝ Շահենը փախչելով անապատից, իր համագյուղացիների հետ գաղթում է Արևելյան Հայաստան, սակայն որոշ ժամանակ անց ցարական իշխանությունների կողմից աքսորվում է Սիբիր։

Արիստակես Տեկանց (1849—1896)։ Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրում՝ Վանում, ապա սովորել է Վարագի ժառանգավորաց վարժարանում։ Կարճ ժամանակ եղել է Վարագի վանահայրը. սկսած 1870 թ. իբրև վարդապետ գտնվել է Էջմիածնում։ 1884 թ. Նարեկի վանքի վանահոր տեղապահն էր, իսկ 1890 թ. սեպտեմբերի 27-ին կարգվեց Տրապիզոնի առաջնորդի տեղապահ և այնտեղից հեռացավ 1892 թ. հունիսի 2-ին[6]։ 1894 թ. վերադառնում է Վան և 1896 թ. դեպքերի ժամանակ սպանվում Վարագա վանքում։ Արիստակես Տեկանցը գրող էր, բանահավաք. նրա տպագրված աշխատություններից են «Պանդուխտ վանցին» (Կ. Պոլիս 1875) և «Հայերգ» (Թիֆլիս, 1883) գրքերը։

«Պանդուխտ վանցին» նամակների, երգերի, առածների և առեղծվածների՝ ծավալով փոքր, սակայն շատ արժեքավոր մի ժողովածու է, որի վերջում հեղինակը կազմել է Վասպուրականի գավառաբարբառի համառոտ բառարանը։ Գրքի առաջաբանը Մ. Խրիմյանինն է, որը ժողովածուն համարում է «պանդուխտներու և նոցա ընտանյաց կյանքին սրտառուչ նկարագիրը»[7]։

«Պանդուխտ վանցին» գրքի մասին ջերմ խոսքեր է գրել Գ. Սրվանձտյանը, անվանելով այդ գիրքը «սիրուն գրքույկ», որի մեջ «կը տեսնվի մտքի ճարտարություն և զգացմանց փափկություն»[8]։ Ա. Տեկանցը ունեցել է «բանասիրական և հայագիտական աշխատություններ» «զորս դժվարությամբ հավաքեց և խնամքով պահեց *կենդանի մնացած եղբայրներեն արք. Վրդանես վարժապետը»[9]։ Թե ինչ եղան այդ աշխատությունները, դժբախտաբար մեզ հայտնի չէ։

Գրքում հեղինակը, ելնելով ժամանակի դառն իրականությունից, հորինել է պանդուխտների սրտաճմլիկ նամակները՝ ուղղված իրենց ծնողներին, կանանց և ընկերներին ու նրանց պատասխանները։ Նամակները պանդուխտների ու նրանց ընտանիքների անդամների դժնդակ կյանքի նկարագրությունն է, որոնք ցողված են անհուն կարոտի զգացմունքներով։ Հայրենիքի, պանդուխտի ու նրա ընտանիքի նկատմամբ երկուստեք կարոտը դառնում է բազմաթիվ սրտամաշ երգերի հիմքը։

Վասպուրականի մայրերը, տարիներ շարունակ երազելով իրենց որդիների վերադարձի մասին, հորինել են շատ թախիծով ու կարոտով լեցուն երգեր։ Գրքում կան տխուր, արցունքով ցողված, հոգոցներով լեցուն պանդխտային երգեր, որոնք հոգեմոլոր սրտերից բխած, պարզունակ ու տխուր, մելամաղձոտ մրմունջներով լի երգեր են։ Այդ փոքրիկ գրքի մեջ Ա. Տեկանցը գետեղել է Վան-Վասպուրականի շատ օրորոցային, հարսանեկան, պանդխտային, սիրային, աշխատանքային ու կատակ երգեր, պերճախոս ասացվածքներ։

Ա. Տեկանցի «Հայերգը» տաղերի ու երգերի մի հիանալի շտեմարան է, որի մի բաժինը կոչվում է «Մեղեդիք և տաղք», որտեղ կան զգալի թվով միջնադարյան տաղեր։ Մյուս մասը կոչվում է «Հայ աշուղներաց սիրերգ», որտեղ

5 «Գանձեր Վասպուրականի», էջ 266։

6 «Արևելք», 14/27 մայիսի, 1901։

7 «Պանդուխտ վանցին», նամակներ, երգեր, առածներ, առեղծվածներ, գրեց Արիստակես վարդապետ Տեր Սարգսենց, Կ. Պոլիս, 1875, էջ Ա։

8 Գ. Սրվանձտյան, Երկեր, հատ. առաջին, Երևան, 1978, էջ 230։

9 «Արևելք», 5/18 մարտի, 1910։

գետեղված են Քուչակի, Ֆրիկի, Հովհաննես Թլկուրանցու, Գրիգորիս Աղթամարցու, Զաքարիա Գնունեցու և այլոց տաղերը։ «Հայերգից» երևում է, որ իր ժողովրդին անկեղծ ըզգացումով սիրող բանահավաքն ու գրողը շատ է զբաղվել նաև գողթան երգիչների երգերով և նրանց մասին հիացմունքով գրում է. «Գողթան երգիչներաց չնկյուռեն թափած մեղրանուշ բանք ու եղանակք, որք հազար տարիեն ետքը, հազար ու մեկ կտոր լինելեն վերջ անգամ, դեռ ընդ մեզ շատերու ուշկն ու աղիք, սիրտն ու հոգին կհափշտակեն իրենց անթառամ լարովն ու տամով և քաղցուվենի համովն ու հոտով, որոնք քանի հնանան, այնքան կազնվանան, քանի ճմլվին այնքան աղդու կը բուրեն, ի հոտ անուշ քնքուշ երգասերներուն...»[10]։

«Հայերգի» առաջաբանում հեղինակը նշում է, որ այցելել է Հայաստանի մեծ մասը և հայկական հին ձեռագրերից երգեր է ընդօրինակել։ Գրքի առաջաբանից երևում է, որ նա բացի «Այցելություն ի Հայաստան» հուշերից գրել է նաև «Պանդուխտ վանեցվո ժողովրդական նամակներ, վեպեր, Շատախու, Գիգոսիկ, Կաճետու ծոեր, երգեր, առակներ, առեղծվածներ և անապատի մոնթ։ Սոքա և այլ որ ասոնց կարգին, երկար տարիներ տառապակիր աշխատությամբ ժողոված եմ բազմաթիվ քաղաքաց և գյուղօրեից մութն ու խորթ քունջերու հող-մոխրեն-որպես սիրահար՝ տարփավոր, անքուն, անդադար անհանգիստ երբեմն և անօթևան, հայն ժամ երբ տարերքն անգամ կպայքարեին ընդիս»[11]։ Ըստ հեղինակի, իր անթիվ ճանապարհորդությունների ընթացքում շատ դեպքերում նա ստիպված էր լինում նայել այնպիսի ձեռագրեր, որոնցից «շատերն անընթեռնելի էին, քոնած ու սևացած»[12]։ Սակայն որտեղ են նրա նշած այդ երգերն ու աշխատությունները, դժվար է այժմ ասել։ Նրանցից լույս

10 Հայերգ, մեղեդիք տաղք եւ երգք, հաւաքեց Արիստակէս վարդապետ Տէվկանց ուխտէն Վարագայ, Թիֆլիս, 1883, էջ Ա։

11 Հայերգ..., էջ է։

12 Նույն տեղում։



են տեսել միայն «Հայերգ», «Պանդուխտ վանցին» և մեր ձեռքի տակ է «Այցելություն ի Հայաստան» ձեռագիր աշխատությունը։ «Հայերգի» վերջում տպագրված է «Գավառական երգերը», որոնց տակ Ա. Տեկանցը գրել է իր ստորագրությունը։ Անկասկած, այդ երգերը հորինվել են կամ նրա կողմից, կամ Վանի բարբառով եղած ժողովրդական երգերի մշակություններ են, որոնք շատ գեղեցիկ են ու դմայլելի։ Գրքում նշված է նաև, որ Ա. Տեկանցն ունի մի աշխատություն՝ «Այցելություն ի Հայաստան» վերնագրով։ Մեր ուսումնասիրությունների ժամանակ պարզվեց, որ այդ աշխատությունը գտնվում է Երևանի մատենադարանի արխիվային բաժնում։ Հայտնի է, որ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը վերջացավ Ռուսաստանի հաղթանակով և 1878 թ. փետրվարի 19-ին (մարտի 3) Սան-Ստեֆանոյում կնքված հաշտության նախնական պայմանագրի 16-րդ հոդվածի համաձայն նախատեսվում էր Արևմտյան Հայաստանում և հայկական մարզերում ռեֆորմներ անցկացնել։ Հենց այդ ժամանակ էլ եվրոպական պետությունները պահանջեցին վերանայել Ռուսաստանի համար ձեռնտու, սակայն իրենց համար ոչ հաճելի այդ պայմանագիրը։ Պետք է 1878 թ. հրավիրվեր Բեռլինի կոնգրեսը։ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Ն. Վարժապետյանը որոշեց Բեռլին գնացող պատգամավորության միջոցով ներկայացնել իր հուշագիրը՝ հայերի համար թուրքական պետության սահմաններում ինքնավար վիճակ ստեղծելու մասին։ Հուշագրի համար հարկավոր էին ճիշտ վիճակագրական տվյալներ հայերի թվի վերաբերյալ. այդ նպատակով Արևմտյան Հայաստանի նահանգները գործուղվեցին մի շարք առաջավոր եկեղեցական-մտավորականներ Գ. Սրվանձտյանցը, Վահան Տեր-Մինասյան Պարտիզակցին, ինչպես նաև Արիստակես Տեկանցը։ 1878 թ. շրջագայելով Տարոնի, Բիթլիսի և Վանի բազմաթիվ շրջանները, Ա. Տեկանցը երեք ամսվա համառ և քրտնաջան աշխատանքի շնորհիվ կազմեց «Այցելություն ի Հայաստան» աշխատությունը. ձեռագիրը բաղկացած է 63 թերթից (126

էջ), որի մեջ հավաստի և շատ արժեքավոր տեղեկություններ կան այդ վայրերի մասին[13]։

Ա. Տեկանցը 1878 թ. մայիսի 2-ին դուրս գալով Կոստանդնուպոլսից ուրախացած նշում է, որ «ալ իմ հայրենիքս դիս կկանչէ»[14]։ Մայիսի 6-ին նա արդեն Տրապիզոնում էր, իսկ երեք օրից հասնում է Բաբերդ։ Աշխատության մեջ շատ գեղեցիկ տողեր են նվիրված անցած ճանապարհի նկարագրությանը։ Հիացած Արևմտյան Հայաստանի բնության գեղեցկություններով, գրում է. «Մայիս 10. աղօթքնին շուտ մենք ճամբա կելնենք, օդը խիստ հանդարտ է, ու շքեղ-վարդաղարդ լեռներ ու շքեղաղարդ բլուրներ, ձորեր ու հովիտներ գույնզգույն ականց պես կանաչ, կարմիր, ալ նարընջի կփողփողային գեղանկար արտեր ու դաշտեր բյուր հազար պճրանքով շփացած կճխան և կիաղտան։ Սոխակի ձայն ընդ բլբուլին. ճնճղուկն ընդ սարեկին, լծե լծեն ընդ ապռնակին հովիտն ու ակն, անտառն ու պրակ ի դայլայլիկս կորորեին ու կը փռկեին»[15]։

Ա. Տեկանցը մայիսի 15-ին գտնվում էր Բարձր Հայքի վաքչական կենտրոնում՝ Կարինում, իսկ 25-ին՝ Խնուսում, որտեղից անցնում է Վարդո, իսկ հունիսի 1-ին Մշո դաշտումն էր։ Հեղինակն այդ վայրերի վիճակագրական տվյալները հավաքելու հետ միասին շատ է հետաքրքրվել նաև դպրոցական գործով, գտնելով, որ «ուսումն ու կրթությունը մարդուս լոյս ու կորով կուտա» և ցավով է նշում, որ Մշո դաշտի գյուղերում դպրոցները քիչ են. «Մշո դաշտը հոծ հայկական գյուղերու մեջ դպրոց չես տեսնար նմուշի համար բացի Աղբան գյուղեն»[16]։ Աշխատության մեջ նա հանգամանորեն կանգ է առնում Մուշ քաղաքի նկարագրության վրա, շարադրում իր հետ հանդիպած մարդկանց զրույցների մասին։ Մուշ գյուղաքաղաքի 8 թաղից 5-ը հայկական էր (Վերին, Ջորո, Ջուշ, Բրտի, Ճիկրաշեն). և մի դպրոց կար 200 աշակերտներով։ Քաղաքում այդ ժամանակ ապրում էին 4987 հայեր[17]։ Հեղինակը հավաստի և ճշգրտված վիճակագրական տվյալներ ունի այն ժամանակվա Մշո դաշտի գյուղերի մասին։ Աշխատության մեջ նշված են բոլոր գյուղերի անունները, նրանց ունեցած եկեղեցիներն ու դպրոցները և բնակիչների քանակը։ Նույնպիսի մանրամասն տվյալներ կան նաև Սասունի և նրա գավառակների գյուղերի մասին։

Ա. Տեկանցը իր ճանապարհորդության ընթացքում այցելել է բոլոր վանքերը, տվել է ճիշտ տվյալներ նրանց կալվածքների և եկամուտների մասին, չմոռանալով նշել, թե այդ եկամուտների հաշվին քանի աշակերտ կարելի է պահել։ Վանքում։ Ըստ նրա, Մշո ս. Կարապետի վանքը տարեկան 100—150 հազար դահեկան եկամուտ ուներ, չհաշված ժողովրդից հավաքված տուրքը և կալվածքներից ստացված եկամուտները[18]։

Նույնանման տեղեկություններ է բերված Մշո մնացած վանքերի մասին, ցավով նշելով, որ այդ վանքերում եղած բազմաթիվ սպասավորների կողքին «Մշո աշխարհի և այն միայն Ջուխուրա և դաշտի հարյուրավոր գյուղերն, որ դրպրոց չունին, վարժապետ չունին»[19]։

Սասունի լեռներում ապրող հայերի և քրդերի մասին ասում է, որ «տեղացի հայն ու քուրդ ընդհանրապես կայտառ են»[20]։ Դժվարամատչելի լեռները հնարավորություն էր տվել նրա բնակիչներին ապրել ինքնավար կյանքով և տեղի ինչպես հայերը, այնպես էլ քրդերը ազատ էին «քաղաքական վարչության բռնությենեն և տանուտերական իշխանությամբ կկառավարեն իրենց...»[21]։ Ա. Տեկանցի կազմած վիճակագրության համաձայն, Սասունի լեռներում, քրդերի հետ համեմատած, ավելի շատ հայեր էին ապրում։ Մշո դաշ-

13 Մատենադարան, Ջանազան հեղինակների արխիվ, թղթ. 54, վավ. 135։

14 Նույն տեղում, թ. 4։

15 Նույն տեղում, թ. 5։

16 Նույն տեղում, թ. 11։

17 Թղթ. 54, վավ. 135, թ. 13։

18 Նույն տեղում, թ. 21։

19 Նույն տեղում, էջ 23։

20 Թղթ. 54, վավ. 135, թ. 25։

21 Նույն տեղում։

տում և նրա շրջակայքում կային 124.153 բնակիչ, որից հայեր 66808 և քրդեր 57345[22]։ Գրքում ամփոփիչ տվյալներ կան նաև Բաղեշ քաղաքի և նրա գյուղերի բնակչության մասին։ Ըստ նրա, Սալնո Զորի (Բաղեշ) աշխարհի բնակիչների թիվը 31113 է, որից հայեր 20473 և քրդեր 10640[23]։

Ա. Տեկանցի «Այցելություն ի Հայաստան» աշխատությունը շատ կարևոր աղբյուր է Արևմտյան Հայաստանի XIX դարի երկրորդ կեսի պատմության ուսումնասիրության համար։ Գիրքը գրելիս նա իր ձեռքի տակ ունեցել է հավաստի տվյալներ, որոնք հավաքել է անձամբ։ Նրան այդ գործում օգնել են գյուղերի հոգևորականները, տանուտերերը և մնացած ազդեցիկ մարդիկ։ Մուշի, Սասունի և Բաղեշի պատմությամբ զբաղվող յուրաքանչյուր անձ այժմ ամենից առաջ դիմում է Ղ. Ինճիճյանի աշխատություններին, որոնք շատ կարևոր են, սակայն բազմավաստակ այդ գիտնականի բերած տվյալները վերաբերում են XVIII դարի վերջին և XIX դարի առաջին տասնամյակին։ Այդ նահանգների մասին եղած մյուս արժեքավոր աշխատությունը Ա—Դ0-ի «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» աշխատությունն է, որը լույս է տեսել 1912 թվականին, և նրա տվյալները վերաբերում են XX դարի սկզբին։ Այսպիսով, Ա. Տեկանցի այս աշխատության տվյալները վերաբերում են 1878 թվականի Մշո, Սասունի, Բիթլիսի, Սղերդի հայերի վիճակագրությանը և բազմաթիվ այլ հարցերի, որոնք շատ արժեքավոր են։ Աշխատության մեջ կան նաև շատ տեղեկություններ Ա. Տեկանցի այցելած վայրերի բուսական ու կենդանական աշխարհի, ժողովրդական արհեստների, սոցիալ-տնտեսական հարաբերությունների և այլ հարցերի մասին։ Ա. Տեկանցի աշխատությունը գրված է արևմտահայերենով. տեղ-տեղ զգացնել են տալիս Վանի բարբառի երանգները, գրված է ժամանակի ուղղագրությամբ։ Աշխատությունը հրատարակության նախապատրաստելիս փոխել ենք նրա ուղղագրությունը և կատարել որոշ կրճատումներ։

22 Նույն տեղում։

23 Նույն տեղում, թ. 49։



# ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՀԱՅԱՍՏԱՆ 1878 Թ.

1875 թվականն անմոռանալի տարեգիր մի է համայն աշխարհի համար. հետևապես նույն Հայաստանի համար յուր ազդեցություն և վերաբերություն ունի անշուշտ. նույն տարին յուր ընդերաց մեջ չորս հարյուր տարիեն ավելի մթերված խռովություններուն կճատ մոմի մը ծայրով կը-դրպնար ի Հերսեք[1] և ի Պոսնիա[2], յորմե անմիջապես կսկսեր մրկած սրտերու հին հրաբուխն յուր վառն ու ծավալը բղխել ու սփռել, որուն անմիջապես Սերվից ու Սև լեռն[3] օգնեցին իրենց ակաղձուն և թոթոուն իրենց հոգելի և սիրելի սրտի ծծումբներով ու կրակներով, որ ատեն արդեն կտագ-նապեին ու կտատանեին երկրիս դատավորներու ուշն ու կուրծ, ընդ որս մանավանդ Ավստրիա, որն որ ուզեց այս տարօրինակ տենդառաջին դեմն առնիլ, որպեսզի մի գուցե այդ բնական և բռնական հրաբուխն յուր երկրի խավերն մտնալով նորա կապերն ալ չխանձին, բայց դժբախտա-բար յուր ջրկիրներն անբավական եղան ազգային իրավանց վառարան մարելու և ետ ընդ ետ ուժը տվին կրակի ծառի ծավալման։

1876 արդեն համաշխարհական թատրոնիմ պետք եղած շողշողուն ջահերու պես սկսեր էին վառել վեր հիշած հրաց-յալ սրտերն և Հերովդիայում կելլեր արյունով կարմրացած դատ թատերատախտակին վրա և սուլթան իբրև թատիր ծանու-ցումս հրովարտակ մի կհրատարակեր և ահա հանդես կսկսեր նաղինաղ ու ծուփ ի ծուփ ի Սելանիկ յուր զազիր խաղն խաղա-լու պժգալի կերպով, ում որ գիտության ու խավարի նախա-դահն որ նոյն է սուլթանի կառավարություն, հիշյալ պարող լկտին կխոստանար ու կուտար յուր կես թագավորություն։ Անգլիո և գերմանական երկու մեծ ու անմահ ազգի երկու մեծ և երևելի հյուպատոսները կհրճվեին մոլեռանդ թուր-



2—405

ՀԱՅ ԱՌՔԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՍ
ՊՈՂԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
ՀԱՅԿ ՍՍՀ

քերեն, կարծես որ տարօրինակ հանդեսն ավելի շքեղացնելու համար։ Հյուսիսային ամենափառ վեհապետն կը փութար ի Գերմանիա[4], նույն տարապարտ դեսպանազորներուն սուգը կատարելու, կաճապարեր նա և այլոց հետ գուցե այն աշխարհավեր տուներուն հուրը մարելու համար, որո հախուռն հեղեղներն արդեն կծավալեր կծփար և աշխարհս կտփար, կգողար։ Եվ որովհետև ընդմիշտ պատրաստ են մեծ գործոց և դիպոց համար մեծամեծ զոհողություններ ընելու, վազեցին մեծ տերությունից յոթ դեսպաններն ի Կ. Պոլիս ձեռն ի ձեռն տալու և ապագա աղետներուն դեմն առնելու համար, նոյնին նյութերը վերցնելով, բայց չկրցին համոզել հարկիսի՞ թե թուրքական մոլեռանդ գաղափարներ, ուստի տարապարտ հանվեցավ իրենց զոհողությունն։ Այսպես անբավական համարվեցավ դեսպաններու խաղաղասիրական միջամտություն ի Սերվիա և հոն լեռ տարածված ու ճարակ գտած պատերազմի կրակն մարելու իրենք ալ ետը քաշվեցան հավանաբար իզուր աշխատելե։ Անտարակույս իրենց պատիվն ու կարևորությունը զգացնելը տալու համար մեկ կողմը կեցած եկան պտտեցին ու ծափ զարկին նույն լափ լիզ ու փոթորկալիր կրակին շուտով ծավալելուն և այս իրենց պահ մի չեղոք ձևանալովն ու մնալովը։

1877 թ. ինչպես բսինք անմաշ ու երկնային կրակն յուր բորբոքն կառներ Հերսեք, Պոսնիա, Սերվիա[5] և Կարատաղն անմահ վերածնության երկանց տուն կքալեին ընկղմած անագորոյն արյամբ, կարմիր ու անհատիր արևով կհուզվեր իրենց կարկեզ սիրտն հայրենյաց ազատության խետ, որուն կսիրեմ ասել գայլեկությունն կընե Ռուսիո առյուծազոր տերությունն։ Ալ համազգային սքանչելի ոգին շատ չէր հուշեր և ահա Բրութի եզերքեն, Տանուպի ափերեն, Վոլկայի և Երասխի սիրտերեն մշտնջենավոր հսկաներ ու ազգասեր դյուցազուններ կվերածնեին, որոց իբրև օժանդակ Մասիսեն, Կովկասեն, Պարխարա լեռներեն[6], Ռումանիայեն Սև լեռանեն Սերվիայեն, Պուլգարիայեն և Արևելյան Հունաստանեն վտակ վտակ մարդկան գումարտակ վաղնիվաղ հեղեղները կազմելով կուգային ու կմիանային իբրև հրեղեն հոսանք ի



ծով, որով կսպառնային անշուշտ հղել լափելն որ պիտի ըզգացվի, Հայաստան, Տաճկաստան, Պուլգարիա, Հունաստան և Ասկեղջյուրն յուր թագն ու պսակովը Բյուզանդիան։ Ալ միջամտության պետք չկար գի հրեղեն ու աստվածեղեն միությունն կեռայր և կփրփրար։ Սուրբ Եղիայի[7], Վեզուվի, Էտնայի ու Մասիսի սրտերն կսկսեին խառնվիլ և մեծն ու ահեղ պետությունն Տաճկաստանի դեմ պատերազմ հրատարակեր էր։

1878 այս ահա այն մեծ թվականներեն մինն է տիեզերքի երջանիկ բաղդն որոշելու համար մեկ-երկու և երեք կսե։ Ահա այս թվականիս հրաշալի ու թեավոր որդիք ելան շուտով շապկեցին ու չափեցին իրենց ճոկված կատներով երկրիս սահմանն և իրենց կանգունն էր թնդանոթն ու տեգ և մկրատն ու ձեփչքը սուր ու հուր։ Այս նորատիպ արարիչներուն կհնազանդեր զբար ու ձոր, դաշտն ու ծով, մեծ և ահեղ էր իրենց փառք և քան զվսեմն վսեմա իրենց փառքն ու նպատակ, ոչ սար նայեցան և ոչ ծոր, ոչ ժայռն և ոչ ձոր։ Ամեն տեղ ահն ու սարսափ տիրած էր, քրիստոնյա աշխարհն ազատ ու նոր ստեղծելու համար, կարծես չորեքծագյան և հավիտենական անմահության ոգիք արթնցած կովել կոփել որոշեր էին, թշնամիք անողոքելիք մահիկին։ Այս ազատության պատերազմն կերթար կերթար ու կծանրանար, կբերկարեր ու կրսաստկանար ի պատիժ թուրքին։ Հունաստանի ու Թրակիո բնակիչ թուրքերն իրենց սեպհական համարած գավառներեն ոչ ձյուն ու ձմեռ, ոչ օրն ու գիշեր կրցան մտածել, մեծն ու պզտիկ մերկ ու կողոպուտ փախչիլ ու թագչիլ աճապարեցին, ազատվիլ արդար վրեժոց տուժեն ու պատիժեն, տեղացին ու խառնվեցան իբրև լեշկեր հավքեր սուլթանի քաղաքն Պոլիս։ Բյուզանդիոնն Բաբելոն մի դարձեր էր։ Տաճիկներ կասեին անա պապա կյունիվ[8]։ Օրմ էր ոչ լույս և ոչ գիշեր իսլամական ցեղին։ Ամբողջ Պալկաններու սպիտակ ձյուներ և Դանուպի լեռնակուտակ սառեր արյունով կարմիր ներկվեցան, ռուսական և տաճկական դյուցազն զինվորներու քաջակորով լերդերովն։ Քաղաքականությունն վերջի ճգնաժամին մեջ ծանր կտքար և

ապագան անորոշ կմնար։ Պոլսեցիք շատերն Եվրոպ դիմեցին ու պախկվան լեղապատառ ու սրտապատառ։ Գարուն էր և պատերազմն սրամտության մեղին ու անմեղին դեմ կշարունակվեր, ահն ու մահ ամեն կողմեն կըտատաներ ու կտափեր ծաղկահասակ երիտասարդության, որո հետ ամեն կողմանե գաղթականության մարդահեղեղներ վազեցին ու հոսեցան ի կեդրոնն Թուրքիո՝ ի Բուլանդիոն, գրեթե ամբողջ Հունաստանի բնակիչ իսլամք հորդեցան և լցվեցան անդ։ Դառն ու զաղիր տեսիլ մի ուներ ան, հնուց կը ժաժան հիմն իվեր Յոթնաբլուրյան ամբարտակը[9] Պոլիս քաղաքն թագավորական։ Կարծես հառաջադիմասեր բնությունը յուր խոր մրափենն արթնցած ամեն մեկու ամեն ոգվոյն հառաջադիմության նոր զարկ և տրոփում մի կաղղեր, ամենայն ոք կսկսեր իր ուժն ու տուժն ստանալ։ Աղգաց և ազանց վերածնության դար մի էր 1878 սիրելի թվականն։ Թեև կրնոտիենները[10], տրակոններն[11] ու սալտաթները կը սուրային, կրակ ու շանթ էր իրենց հղոր տեղն ու դիրք, բա՛յց իրենց հեղեղած բոսորափայլ արյունն սիրտ կուտար սրտերուն, մուխ և ուժը քաջաց, կորովն և ավյուն կմատուվակեր իմաստասեր տոկուն զլուխներուն։ Հարության գանձ էր։ Երկինք հաճույք մի կղդա, երբ կտեսնե զհին փյունիկն ի խարույգ հրո, որ կվառվի նոր ծնանելու համար։ Այսպես ահա ոտնակոխ կլիներ ի Կոգովիտ և ի Բագրեանդ հայկական բուրաստանի գունավոր ծաղիկները, Կարուց աշխարհն և Շիրակ գավառան ծնանելու համար։ Բարձր հայոց բարձունք արյամբ կներկվեր եգերացոց աշխարհ[12] կամ Խաղտիաց երկիրն[13] գրավելու համար։ Սուխում գալե տակն ու վրա կըլլար Պեսարապիա յուր եղբայրագիր ընելու պատճառավ։ Եվ այս ամեն ճարտար քաղաքականությունք յուր համար։ Իսկ մյուս կողմանե Իպրայելեն[14] և Զիմնիցայեն[15] կայծակի արագությամբ Թունա գետի վրայեն սավառնելով ռուսական զինվորություն կըշանթահարեր տարն ու տափ, այրելով մրկելով գյուղն ու քաղաք, ամբարտակն ու տղյակ, որով կբեկաներ իր զորություն և այն սըլավ ազգի անմահն փառաց և նազելի սիրոյն համար։



Այսպես ուրեմն ահա կենսական կրից բոցեղեն ծովուն ալիքները երթալով կը կուտակվեր ու կդիզանար ի նկարեն սահմանս Թրակիո և այն բյուրաբեղուն աշխարհին վրայեն այրելով ու սահելով կուգար ու կհասներ մինչ Բյուզանդիոնի պարիսպներ, անդ կբարձրացուներ ծալիծալ ծփյալ հաղթական դրոշակ ի Տոքմաճա[16]։

Այլ արդ մինչ այս մինչ այն Քրդանլրքի[17] մեջ զինադադարի պայմանները կը կնքեին երեսփոխանք սուլթանին։ Զի Եվրոպական շահեր մեծ տագնապ կրեին, եթե վայրկյանմ ուշանար զինաթուն, քանզի հսկայապանծ արքաեղբայր դյուցազն Նիքոլա իշխանն Պոլսո պարիսպներուն կմերձեար և քիչ էր մնացեր, որ զայն ոտքով գլխով կուլ տար, հայնժամ անգլո-թուրք դաշնադրություն դուրս կելնար անակընկալ և այն վայրկենեն կհրամայվեր ցայդ վայր եկեսցեսի պատվերն։

1878 թ. հունվարի 18 մեր հայ ազգի սրբազան պատվիրակներ կուղեորեին Սրոպ Իպերտին[18], ուր տեղի պիտի ունենար, ուր պիտի որոշվեր ընդհանուր Տաճկաստանի ներկա և ապագա բաղդ։ Մեք աս նույն օր սրբազան Հայրիկ մինչև գաղիական նավն տարինք, որո նավապետն շուզեց ընդունել[19], կսեն թե նավապաշարման մը համար և հետևյալ օր իտալական շոգենավովը գնաց դեպի Պերլին։ Փոթորկալի օրմ էր այն օր, մեր սրտերն ալ քան զփոթորիկն ավելի հողմամի, փոթորիկն ի փոթորիկս։ Հայաստան որ երբեմն յուր թագն Եվրոպա կորսնցուց, այն որդիակ ցավագին Լևոնն վեցերորդ թագավորն Ռուբինյաց Լուսինյանի օրով։ Հինգ դար եղբ զայն անգին մարգարիտն գտնալու հույսով, որով ես ավելի քան խռովյալ ծովեր ծովեր ծփծրփուն էի, ուրախության և տրտմության ալիքներն դեմ առ դեմ և գիրկ ընդ խառն սև օձու պես սիրտս ու զգացում կպատռտեին ու կգալարեին ու կփրփրար իմ աղիքներս աչքերս կմթնտար, արտասունք կխեղդեր զիս ու խելքս կմաղեր։ Բյուրավոր խառն ու խուռն տաք ու տաք զգացմունքներ ու գաղափարներ հետզհետե գրոհ տալով գուռ կնեին իներքս իյիս ու կտոչորվեր իմս վառ երևակայություն, կա-

սեի յուրովի. ա՜հ մեր դժբախտ ու սիրելի հայրենյաց այ-
ցելություն մի պիտի լինեի անշուշտ, եթե թագավորություն
չունենանք, թերևս ինքնուրույնություն պիտի ստանանք և
եթե ան ալ զլանան մեզ Արևելյան Ռումելիի պես նոր դրու-
թյուն մի պիտի ունենանք և կամ թե Լիբանանու դրության
պես բարեկարգ քաղաքական վարչություն մի կունենանք
անպատճառ։ Այսպես պատարուն սիրով ու զգացումով կը-
տատաներ իմ սիրտս ու աղիքս՝ հանկարծ Ազգային Պատ-
րիարքարանեն կկանչեին զիս և կուղարկեին առ ցանկալի և
անձկայրյացն իմ հայրենիս, այս է Մշո, Բաղեշի, Սղերտի,
Աղթամարի և Վասպուրական աշխարհներու վիճակագրու-
թյունը հանել, այս կոնդակավ։

«Ներսես ծառայ Քրիստոսի և շնորհիւն աստծոյ պատ-
րիարք հայոց և արքեպիսկոպոս Կ. Պոլսոյ, բարեջան առաջ-
նորդաց, գերապատիւ եղբարց մերոց ի տեր և մեծապատիւ
անդամոց ազգային վարչութեան և բարեշնորհ քահանայից
և ժողովրդականաց գավառացն Մշոյ, Բաղեշոյ, Սղերդու,
Վանայ և Աղթամարայ վիճակոցն ողջույն և սէր ի քրիստոս
Հիսուս ի հոյսն բնաւից։

Որ ունի զգիրս արժանապատիվ Արիստակես վարդա-
պետ տեր Սարգսյանց սիրելի մեր հայսնուագ հատուկ պաշ-
տոնիւ առաքեցաք ի կողմանսոդ, զի վիճակագրեսցէ զե-
կեղեցիս և դպրոցս ու զվանորայս ազգիս. զշէնս և զանշէնս
և զկալուածս նոցա. և հավաքեսցէ զկարւոր տեղեկութիւնս
զորպիսութէնէ ժողովրդեան և զներկայ կացութենէ նոցին՝
ըստ հատուկ պատւիրանաց մերոյ. և յուսով բարօրութիւն և
բարեկարգութիւն Հայաստան աշխարհի մխիթարեսցէ զա-
մենեսին։

Քաջայոյս եմք զի ձերովդ ազգասիրական զգացմամբ
և ամենագովեալ հիւրասիրութեամբ, պատուասիրէք և դիւր
ընծայեք սորա արժանապատուիւն օգնելով և սատարելով
նմայ զի կարող լինիցի փութանակի և անթերի լրացուցա-
նել զպաշտօն յանձնեալ ինքեան և տայ այսր առ մեզ արաս-
ցէ, ի պայծառութիւն եկեղեցւոյս և իշխանութիւն ազգիս։



Ողջ լերուք և զօրացեալք ի խնամս տեառն և աստված
խաղաղութիւն սփոփեսցէ զձեզ բարւօք։
տուեալ ի պատրիքարանէս Կ. Պոլսոյ

յամի տեառն 1878 Ներսես արք եպիսկոպոս
ապրիլի 26։

Երեք ամիս միայն օր տրուած էր մեզ ծածուկ հրամա-
նագրով մի, որ կոնդակի մեջ հիշված գավառներու անթերի
վիճակագրություն հանեմք ընդ փույթ, օ՜հ, քանի՜ ուրախ ու
դվարթ էր իմ սիրտն, թեև դժվար ու փափուկ պաշտոնիմ
կհրավիրվեի այն ևս ածուկ միջոցիմ և սոսկալի օրերու մեջ,
երեք ամիս պայմանաժամ կար մեզ. ելնել Վոսփորեն, սլա-
նալ Տրապիզոն, Բաբերդ, Բարձր Հայք, Խնուս, Վարդո, եր-
կու Պուլանըխներ, Մանազկերտ, Մուշ, Զուխուռ, Խութ, Բռնա-
շեն, Սասուն, Շատախ, Բաղեշ, Մոտկան, Խլաթ, Տատիկ,
Կոզալտերե, Սղերդ, Շիրվան կամ Երուն, Խարզան, Դէհ,
Բուսանաց, Պուրվար, Կառկառ, Կեցան, Հիզան, Մոկս, Սպար-
կերտ, Շատախ, Կեցան, Ռշտունիք, Ոստան, Հայոց ձոր,
Նորտուզ, Ճուլամերկ, Ախբակ, Կեվեռ, Խոշապ, Կրտուր,
Վան, Տոսպ, Գնունի, Բերկրի, Քաջբերունիք, Արձկե...։

Հիշյալ քաղաքները և քառասուն երեք գավառներ եռ-
ամսյա սուղ և ամենակարճ միջոցիմ մեջ ստորագրե՞լ, ինչ
դյուրին ու կակո՜ղ խնդի՜ր. թեև սիրատենչ պաշտոն ու
պարտք, կտագնապեի ես ու տաք ու պաղ քրտինք զիս կլը-
վար, հուզմունք բառի բուն և իսկական նշանակությամբ
չեթե հուզվեր էի, այլ նույնիսկ գլխով, ոտքով հուզմունք
էի։ Լեղապատառ կնեին ինձ ճանապարհի ընդարձակությունն
ու զող ու ավազակներու օհմակներ և մահվան սարսուռ զիս
կպաշարեր վայրկյան մը, բայց սակայն, իմ անձկատրյաց
հայրենյաց նշմարանքն ու փշրանք ինձ սիրտ կուտար հու-
սապարար, որով իմ լանջքը Սև ծովեն ավելի ուռած ու ըն-
դարձակված էր և իմ վազվազակի երթին նպատակն անմահ
սրտիս զարկ կուտար որոտընդոստ ու ահեղ և պետք էր
արծվո պես սավառնել ու թռանալ լեռանե լեռ հորիզոնե

հորիզոն սլանալ իմ պաշտոն անթերի կատարելու և փութացնելու համար, խրախուսված հուսով բարորության և բարեկարգության սիրելի Հայաստան աշխարհին մերոց։ Հույսն և սեր Սերովբեներ են, ուրեմն սավառնումներ ունին և քնադումներ։

1878 մայիս 2, ալ մնաս բարով կասեինք Բյուզանդիոնին, թողով մեր հիշատակներ ու սերն իրեն ծոց իբրև բարեկամի թանկագին ավանդ, կացեք բարով ուրեմն Եղինո[20*], Տարդանել, Կելիոպոլու, Մալկարա, Թեքիրտաղ, Զորլու[21] և Սիլիվրի[22] ձեր հացն ու աղով, ձեր ջուրն ու խաղողով, ալ իմ հայրենիքս ձիս կը կանչե։ Մնաս բարով և դու Ուսկուտարի[23**] սուրբ Խաչ եկեղեցի, ահա քո Սուրբ Խաչիդ թևով պիտի երթամ Հայաստան, ուր ծուխն ու մուխ կրակն ու բոց պալան-պալան*** յուր հորիզոնն կմթնին ուր մարդակոտոր մարտիկներն ասպատակ կսփռին, ուր տակավին երկյուղն ու սարսափ կտիրեն, ուր դեռ Գրուբներու[24], Միթրայողներու[25] և այլ նորանոր հրազեններու դեռալլուկ կնդակներ վետ վետ կը խաղան, ա՜հ և իմ շքեղազարդ հայրենիքն կավերեն, պիտի անցնեմ ապահով այն մահառիթ գործիքներու դարի տափի վրայեն քու ամենահաղթ խաչիտ շնորհիվ։ Մնաք բարով իմ ամենասիրելի ապնջականները ձեր զուլալ ու սկիզբնիկ սրտերով, որով զմեզ սիրեցիք հույժ, շնորհ ունիմ ի ձենջ և ձեր անգին երախտյաց հավաստիքն անկարելի է մոռանալ ինձ, իմ սրտի տուփին մեջ ծրարած կպահեմ զայն հավիտյան, դուք կենդանի ու պաշտելի եք հիս։ Այսօր ամենապատիվ պատրիարք սրբազանի աջն համբուրելով կմեկնիմ աղոթյուք նորին աղգասեր օծության, որով պիտի թռչինք տունկե ի տունկ, թուփե թուփ, պրակե անտառակ, ծովե ի ծովակ ընդ երկար թափառելով։ Կարծես չուզեր ետ որ մեր նավն այսօր յոր սավառնազարդ թևքերն պարզելով Վոսփորի նեղուցեն դուրս

* Քանիմ օր առաջ նոյն տեղեաց ազգայնոց հովիվի պաշտոն կը վարեի։

** Նոյնին քարոզչություն կնեի։

*** Բարդ ի բարդ։



ելնար և ինչպես մենք մեր սրտագին բարեկամաց ձեռք սեղմած ատենիս մեր թաթիկներ մատանց և շուրթն շրթանց կշաղաղվեին ու չէին ուզեր զատվիլ, այնպես ալ նավն կը-պեր ու նստեր էր ծփծփուն նեղուցի գողտրիկ բազկին վրա և չէր ուզեր զատվիլ անկե, թերևս այն ալ յուր կարոտն ու սպասն ունէր, ուստի նույն գիշեր մեզ սպասեցանել տվավ։

Մայիս երեք ծիծաղկոտուն առավոտուն մեր նավն սկսեց նազելով ու նազերով Սև ծովն մտնալ առանց խեթի զեփյուռն յոր քաղցր սյուքն կսուլեր իբրև հրեշտակաց սրինգ, սրբիկ ու նազիկ։ Աստղերու հոյլն ու բոյլ երկնից կամար նոր հարսի պես զարդարեր էին, կատաղի Սև ծով կերևեր թե ի պատիվ մայիս ամսոյն կամ գարնան սիրոյն, յուր վայրենությունն թողած դաստիարակված մարդում պես հանդարտ էր, ծովն յուր ալիքն ու փրփուր և մենք մեր սրտի հուզմունքն ու հուր թողուցեր էինք։ Մարդիկք երբ տագնապի մեջ լինին ծովերու նման կհուզվին, և գաղափարներն իրենց զանկի ամանեն դուս կը հոսին, իսկ երբ ապահով լինին տեղատվություն կնեն ու կբաշվին։ Մենք մոռացեր էինք, թե ծովու վրա էինք և այն ոչ առանց պատճառի, ո՜վ որ մեղմ օդով, պայծառ արևով և մանավանդ թե գարնան օրեր ծովու վրա ճանապարհորդություն կընե, նա միայն կզգա կենաց զմայլելի ճաշակն ու համ, ծովերու փեշերուն կպած լեռանց սպառվածքները կանանչ մացառներով ու անտառներով փողփողված սերուն ու անուշ տեսքն դիտելով մարդն ինք զինք երբեմն կմոռանա, կսլանա։ Եվ այնքան հարբած զմայլմամբ, որ հաղիվ թե կարճ մրափ մի քաշեր էինք աչքխփոց միջոց և ահա Սամսունի նավահանգիստն էինք հասեր։ Ուր իմ սիրելի կարգակից և պաշտոնակից Վահան վարդապետի հետ դուրս ի ցամաքն ելանք, զայն տարի տեղվոյն առաջնորդարան թողուցի և ես երբեմն հոն թողված գրքերս առի ու մեկնեցա դարձյալ ի նավն, հանձնարարելով նմա միայն իմ ողջյունս տանել Զարզամպա[26*], այսօր մայիս 5 էր։

* Զարզամպայի համար հատուկ խոսելիք ունիմ ուրիշ ատեն։

Այլ մենք նույն նավով մայիսի 6-ին ի Պոնտոս[27] հասանք ամենեն ապահով կերպով, ուր արդեն մեր նախկին հայրենակիցներ և մտերիմներ կսպասեին. է՜հ դուրս ելանք նավեն ու բերկրությամբ սրտի կերթանք՝ ոմանց հետ և կժմտանք ետ ընդ ետ, որուն համար կհարցունեին ինձմե ոմանք թե ինչու կծիծաղիս, մինչդեռ ծաղրելի առարկում չկա, հին բանմ կհիշեմ անոր համար կժմտամ.—ասկե զատ տարիներ առաջ մոկացի պարզամիտ հայ մի կուգա տեղս ու նավ մտած միջոցին ձեռքեն յուր սիրելվոյն ավանդ որ քով կպահեր, ձեռքեն կսահի ու ծով կիյնա կկորսվի, բայց նոյն գտնալու հուսով նոյն նավի շրթանց վրա ուր տեղեն որ բան ձգած էր ծովն նշան կշինե խազելով և կերթար Պոլիս այն խազած տեղեն յուր կորուստ կփնտռեր, մինչդեռ յուր կորսնցուցած Տրապիզոնն էր, գնացէր Պոլիս զայն կորոներ և կուզեր գտնալ, նմանապես ցավալի է ինձ ասել, որ իմ բարեկամները, Պոլիս թող տված, եկեր այստեղ զիրենք կփնտռեմ, կհարցունեին ինձ միթե մենք քու բարեկամդ չե՞մք։—Ինչպես մեղուն ծաղիկին և ինչպես մրջունն տանձի տոպուկին...։

Ինչևէ, Պոնտոսի ազգայնոց կյանքն ու դեպք, պարագայք ու պետքն պիտի ուրվագծե ով որ պաշտոն ունի այն մասին, մենք մեր ճանապարհորդության ալ կարևոր պետքերը կհոգանք։ Հարկ չէ ասել որ պատերազմի զինադադար մի եղած էր նույն օրեր և ոչ թե հաշտություն տիրաբար, հետևաբար և իմ գալիք ճանապարհ շատ երկյուղալի էր, սուր ու թուրի միջեն պիտի անցնեի, չէ թե անխոհեմություն էր մեկ երկու հոգով ուղևորվիլ այլ թե անհնարին էր։ Մեզմե օր առաջ շատ մը մշեցի, վանեցի և այլն տեղացի ազգայինք գրաստ չգտնվելուն համար եկեր ու կեցեր էին այս տեղ, վանզի թե ջորին և թե ջորեպան միահազոյն զբաղված էին զորաց մուտն ու մթերքը կրելու, մենք ալ այն պատճառավ անլուծ կապանքով կրկապվեինք, բայց նեղության պետքն հանուր գիտությունից հեղինակն է, քանիմ բարեկամաց հետ տեղվոյն զորաց գլխավոր հրամանատարին ներկայացանք ու խնդրեցինք, որ յոթանասուն ձարզոց համար երեսուն ձի ճարելու թույլատվություն շնորհե, տարտուկ է ինձ համար սույն խնդրոյն պարագաներ մի առ մի ասել, այլ թե վերջապես հաջողեցանք մեր խնդիրն ընդունել տալու.—ալ մեր ճանապարհն ապահոված էր։ Եվ նույն գիշեր առաջնորդարան մնացի, հետևյալ օր մայիսի 7 էր, քանիմ բարեկամաց հետ տեսնվեցա, որք անհանդարտ տենչիվ նոր նոր լուրեր լսելու անձուկ կը քաշեին, բայց պետք է ասել որ չէի կրնար իրենց կարոտն լեցունիլ, իրերն խառնիխուռն և ապագան անորևույթ էր, միայն կմխիթարեի զիրենք խրախուսելով գործել ժամանակի պիտոյից համեմատ։ Գոհ էի ի սրտե իրենց եռն ու բորբոքը նկատելով, ամենքն ալ ի սեր ազգին զոհողությունները ընելու կազմ ու պատրաստ էին։ Իսկ ես անհունս զվարթ էի նկատելով իմ կտրիճ հայ ընկերներս, ամենքն ալ զինակուռ համարձակ երիտասարդներ էին, ես ուրախ էի իրենց պատրաստության համար, անոնք ինձ համար, այս սիրո և ուրախություն ո՞չ որ չի կրնար արոտագրել, ո՞վ որ սիրո համար խոսել ուզեր է պակաս խոսեր է, վասնզի սերն անհուն է և մենք անհունությամբ խմորված էինք, չերկարացնեմք նոյն օր խիստ անձրևով գնացինք Ճավուղլուք, մայիս 7 և և երեք օրեն հասանք ի Բաբերտ, առանց մեկիմ քիթն արունելու և առանց մազ մի կորունցնելու, մեզ համար ահն ու երկյուղ և մահն անգամ կարևորություն և կշիռ չուներ, վասնզի մեր գունդն կարծես ադամանդյա էր ու անվանելի։ Մեկ գիշեր խանք առնելու համար Բաբերդ մնացինք, ուր տասալիք զորքերու բեկորներով լիքն էր ուր հաց չէր գտնվիր, թեև իմ մառանն ամեն բարյոք լիքն էր, զի Պոնտոսի մեջ իմ բարեկամներս զգացուցեր էին ինձ, չեմ ուզեր ասել տեղվոյս ժողովրդոց մեղկ ու լերկ դրություն, մարդու կարեկցություն կշարժեին, կարծես նոր պատերազմեն ելած ու ճլատված արարածներ էին։ Առաջնորդնին ալ իրենց համամիտ և անմիտ։ Սա ամենեին համեմատություն չունի յուր հանգուցյալ վարդապետ եղբոր հետ, բայց եթե այսպես ասենք, ինչ համեմատություն ունի թամք՝ թուրին, ծաղիկն՝ հոտին և մարմին՝ հոգվոյն, այսինքն պատյան առանց սու-

րի, ծաղիկ առանց բուրումի և մարմին առանց հոգիի։ Կան իրականություններ որ սիրտ կվիրավորեն, բայց այս ճշմարտություն իմ հոգիս կբուժե։ Ա՜խ մեկ մարդ կար այս քաղաքն ալ ես քահանա ձեռնադրված էր դժբախտաբար, որ ասել թե մեռած էր։ Թողունք զայս։

Մայիս 10. աղոթքնեն շուտ մենք ճամբա կելնինք Բաբերդեն, օդը խիստ հանդարտ է ու շքեղ, վարդազարդ լեռներ ու շքեղազարդ բլուրներ, ձորեր ու հովիտներ գույնզգույն ականց պես կանաչ, կարմիր, ալ նարնջի կփողփողին, գեղանկար արտեր ու դաշտեր բյուր հազար պճրանքով շփացած կճխան ու կխայտան։ Սոխակի ձայն ընդ բլբուլին, ճնճղուկն ընդ սարեկին, լծե-լծեն ընդ ապռնակին հովիտն և ակն, անտառն ու պրակ ի դայլայլիկս կօրորեին ու կբփողեին։ Մեր ընկերներ ևս կձայնակցեին մերթ ընդ մերթ իրենց լավեժներով[28] ու խաղերով, թո՛ղ տալով ընտիր զինուց փողփողն ու ճայթուն, որոց սարերն արձագանք կկըրկնեին մտերմաբար և անսխալ, արձագանք մեզ հետ մենք արձագանքին հետ սարերու ոտքն ու սիրտ, հունթն ու գլուխ կոխելով ու թռչելով ու պարելով կանցնեինք, կտարակուսիլ ասել, արդյո՞ք բնությունն մեզ վրա կսքանչանար, թե մենք էինք[ք] իրեն սիրահար։ Ո՛չ ծաղիկն ու ծիծաղ աղջիկներ կսիրեն, մենք մեր հայրենիքն կսիրեմք ու նորա դյութիչ գորովն ու հոգովն գրավված ու հարբած զինվոյներ էինք, անոր համար դարն ու դաշտ, սարն ու քար, բնությունն ու փողատ մոռցեր իբրև օդապար արծիվ կխոյանայինք դեպի մեր հայրենիք։

11 մայիս. մենք երկյուղով Մասաթ տերեսի ըսված գողգարանեն դուրս կելնինք սիրտ ի խինդ ու անվտանգ, վայրմ, որ երկյուղով ու արյունով ողողված է ընդ միշտ թե խաղաղության և թե մանավանդ պատերազմի ատեն, այս մեր քաղցրության անմիջապես դառնություն մը հաջորդեց և ահա հանկարծ երկու զինվորատիպ ավազակներ դիմացնիս ելան ու ասին. եահո՞ տուրուն[29]։

Թեև իմ ուղեկիցներս ամենն արդեն պատրաստ զեն ի ձեռն, ես որ կարավանապետ, մանավանդ թե իբրև զորապետ հառաջասահ կերթայի, կեցա ու հարցուցի իրենց ի՞նչ կա — ո՞ւրկե կուգայք.—Տրապիզոնեն.—ինչպե՞ս եկայք.—չե՞ք տեսնար, ձիով, ոտքով։—Հրաման չկա.— ի՞նչ ըսել է.—հրամանագիր չունիք, չեք կրնար երթալ.—հրամանագիր ունիմք ու կերթամք.—ո՞ր է ձեր անցագիրն—ահա, կարդացե՛ք.—մենք կարդալ չեմք գիտեր— ես գիտեմ,—այս բեռներն ո՞րին է — մերն են.— արգելված է.—մենք ալ արգելք չեմք գիտեր,—դուք աբստամբ եք.—այդ ալ չեմք գիտեր։ Ու տեսան որ մենք իրենց բանեն չեն մբսիր ըսին մեզ.—Դուք խելահաս մեկ կերևիք, ինչու՞ այդպես չոր չոր կխոսիք ու ետ դարձան, վերջ լսեցինք, որ մեր ետևեն մեկ երկու պարսիկ կողոպտեր են եղեր։

12 մայիս. մենք մեր երթն կշարունակեմք դեպի Կարին, օդ խիստ խոնավ է ու շարունակ անձրև կտեղա տուզ մուզ Թրջված եմք ոտեն ցգլուխ։ Խումբ խումբ ալաշկերտցի և կարնեցի Թուրքեր կարավան կապած կըզաղթեն ու կերթան ի Տրապիզոն և այլ հեռու տեղեր, աղետալի էր ու տխուր իրենց դեմքն դիրք, շատերն գրաստ ու սայլ չունէին իրենց նյութերեն ու հոգեղեն կանտ կլուգներ շալակնին առած ընքալով ու տքալով կերթային սարսուռով, քարն ու փայտ չէր դիմանար անոնց անբաղդ կեոչերուն, ժեռ սրտերն անգամ փափկություն և դյուրազգացություն կունենան այսպիսի ողորմ տեսիլներու նկատմամբ, իմ զգացմունս խո՞ փբլխեր էր զլխովին։ Քանի քանի անգամ այս տեսակ աղետավոր հարածումները տեսեր ու լացեր եմ, հիշելով որ երբեմն և շատ երբեմներ մեր ազգն ալ այսպիսի շարաբաստիկ հալածումներ ունեցեր է, ասոնք կտեսնայի ու ինքն ինքյան կմտաբերեի հին հին հիշատակներ ծուխ, մուխ քթես ու աչքերես ամպի նման դուրս կուտար ու կեանքս կշոգիանար, ա՜խ տարագրություն հայկական, ա՜խ, մեր հայերն ալ գաղթեցին շատ ժամանակ բռնի Աղուանս, ի Կողքիս, Խաղտիս, Գուզարք, Տայք, Պարսս, Ասորեստան, Խուժաստան, Տամասկոս, Եգիպտոս, Հունաստան, Ուլահ[30], Պուլտան[31], Լեհաստան, Հնդկաստան, ա՜հ և ես ո՞ր մեկն ասեմ ի Կ. Պոլիս և այլ օտար աշխարհ և կղզիս։ Ա՜խ, ես այն անմեղ մատաղ մանկանց հոգուն մատաղ, որց մեկ կողմեն կուսանց պարս-

կին դանակ, մյուս կողմանե անգութ արապներու մզրախն ու տեգ, պարպար թաթարաց հուրն ու թուր, տնավեր տուղրիլյանց տառապանքն ու մուր, հալածումն ու գերությունը և սովն ու տքնությունը մեր կյանքն հալեցին մաշեցին, մեր օրն ու արև մեռուցին։

15 մայիս. ողջ ու ամբողջ մտանք ի Կարին քաղաք, լավ է ասել քաոս մտանք, կամ ի Լիմպոս[32], ի Պաքոս[33], ուշս ու միտքս վրաս լիներ այս գինեթավալ ու խումար քաղաքի նկարագրությունն ընեի, այլ արդ սիրտ իմս չէ այլուր կը-թըռի, ապաքեն պատերազմ յուր դերն կատարյալ կերպով խաղացեր էր ու կհանգստանար, այժմ նոցա ասպարեզեն մնացեր էր կարմիր ու ճերմակ գինիին ու ծուռ գինովին թեև պատերազմն ալ տեսակմ գինովություն կհամարվի, բայց այն զինադուլ ունի, իսկ արբեցածին գլուխն միշտ կխոսա, միշտ կեփի, այսպես քաղաքն ամբողջ եռման ու եփման մեջ էին։ Մենք այն կայծ ու կրակին մեջ մտանք, ուր վանեցի Զաքարյան Մ. Սարգիս աղայի որդիք զմեզ իրենց տունտարին որն որ կնմանի անապատ ճըխան։ Զիրենք տեսածիս պես իմ հայրենյացս կարոտն ու համ կառնեի, ինչպես մեղուն ծաղկի հյութ։ Օ՜ֆ երկար շունչմ քաշեցի անձրևան ու բուք տքնություն և հոգը մոռացա։ Ո՜վ իր սիրելիքները տեսնա ու անոնց սիրասուն հավաստիքն վայելե յուր դարդերն ու ցավեր չի մոռանար, ահա այս մտերիմն ու սերն էր որ Տրապիզոնին մեջ կորոնեի։ Պետք չէ ասել, որ չորս կողմեն մեր նախածանոթ և անշահասեր մտերիմք զմեզ տեսնալու հորդեցան ու եկան սիրակարոտ ըղձիվ։ Երբ սերն ու սիրտ կխոսին, անոր թարգման պետք չէ։ Որովհետև երեքշորս օր հոն մնալ ստիպվեցա ակամա, ուստի թե տեղվոյն առաջնորդ սրբազանին և թե այլ ամենայն մտերիմ բարեկամներ տեսնալու բաղդն ունեցա, նոյնպես երեկո մը, որ Սրուասնարյաց Միքայել[34] էֆենտին զմեզ ճաշի հրավիրած էր անդ երջանկություն ունեցանք տեսնվիլ նաև ռուսական պաշտոնիա հետևյալ հայազգի պարոնայց հետ, Հովսեփ Պապով[35], Գրիգոր Նիկողոսյան[36], Լևոն Տիգրանյան[37] և Արտանկուլյան[38], որոնց համար է, որ ըսի ուր սեր կխոսի թարգ-



մանի պետք չկա և հետևաբար չեմ ուզեր իրենց հետ ունեցած բանախոսության և եռանդուն խոսքերը ի գիր գրել, որ կվերարերվին մեր դժբաղտ հայրենյաց ազատության...։

21 մայիս. մեր ողջույն բարեկամաց և ստվար քարավանիմ հետ դուս ելանք Բարձր Հայոց ամրակուռ մարտկոցեն, դու ասա Ռուսիո ալ ու կարմիր քաղաքեն։ Օդն պայծառափայլ է և մտերիմ, սիրտ սրտի տված մրմունջներով հափշտակված վերջին հրաժեշտ կուտայինք սրտաերգ քան թե սրտարեկ կերպով համբուրելով զմիմյանս, անդ ուր քանիմ օր առաջ երկու վիթխարի բանակներ իրարու անարգել գնդակներով բարև կուտային անդ մեկնեցանք ի սերտ ի սերտս ծրարած։ Ալ թոփ տացիի ճանապարհն մեր ուղին է կերթամք այն տեղեն ուր երկու պետությունից դյուցազն զինվորական կռվեցան, մեռան քաջ-քաջ ու ինկան լանջ ի լանջ ու իրենց տաք-տաք արյամբ լեռն ու ձոր ալ նարնճի ներկեցին. Օ՜հ, հորոտ-մորոտ ներկեր, պանդխտին սիրտն կարոտ է քեզ։ Ա՜հ, կարծես դարն ու դաշտ, ձորն ու սարերը դեռ կծխար վրիժուց մրխոն ու հրով, ձյուն ձմռնոցին աջապարանոք թաղված մեռելոցն ու վիրավորելոց ոմանց ձեռքեր, ոմանց ոտքեր և ոմանց գլուխներ դուս ինկած էր, կարծես հողին տակն անգամ չէին ուզեր հանդարտիլ, կռվիլ կուզեին կռվիլ, որո քովեր ծուն ծաղիկն թոռոմած կը կենար, ա՜հ, ո՜ր ծաղիկն ավելի գեղեցիկ է ծուն ծաղի՞կն, թե զորականին տոտիկն ու թաթիկն, որ քենով գինովցած ու մշանջենավոր սևով սգով պառկած էր վեհաշուք դաշտին մեջ, ա՜խ, իմ լացս չեմ կրնար բռնել, աղիքներս կրկտրտին փըշուր փշուր։ Եվ իմ ընկերներս սփռված ի ցիր դաշտին երես, նոր զմայլումով կդիտեին զանոնք, ա՜խ ու հոգոց հանելով մարդասիրաբար կծածկեին զանոնք հողով ու քարով։ Մտաբանն կիմանա թե ի՞նչ կանցներ իմ ու ընկերներուս մտքեն։ Օ՜ֆ, քանի՜ անուշ է ծիլն ու ծաղիկ կուսին, գնդակն ու վառոդ հայ տղային, որք առաջին հրիշտակի սիրտ ու թռիչ առած, ժամ ու կիսվան տարածություն ունեցող քար քռեն, դաշտն ու սար իբրև հարյուրաշյա արքա դիտեցին ու խուզեցին փամփուշտներ ժողվելու համար, ալ ծաղկի գեղն մո-

ռացեր էին, վառոդի հոտով զմայլած ու դյութվեր։ Ահա կտակնիս ծռած աջ ու ձախ կողմեր թողուցած Կարնո լեռներ ու Թոփրակ Գալեյի ձորեր երգով ու ցնծումով և զենքը պարպելով կերթամք ծաղկազարդ դաշտիմ մեջեն ի երթս, որո սիրավետ դաշտ ծածկեր են խոտախներ իրենց տավարներով։ Երթան Կարինեն երեք ժամ հեռվե, այս ավուր իջեվան այն է որ տեր Հարութիւն քահանան և Մկրտիչ աղա Նահապետյան մեզ շատ սիրով պատվեցին, քանիմ ճամ ու մարդ մի ինձ տվին, որ գնացի իմ ընկերներաց հասա, որք անկե մեկ-երկու ժամ հեռու սարադաշտի վրա իրենց բեռներ դրած կնստեին։ Ուրտեղ զանազան ու զարմանազան ծաղկունքներով կծփար և խորոված ներու տժժոց մարդու սիրտ կքաղեին, արդյո՞ք մեր նախահայր ու նախամայր ըսված Ադամ և Եվան ալ մեզ պես կրցի՞ն դրախտի մեջ խնջույք կազմել, զուլալ ու զզզուն աղբերկանց շուրթ նստել, վարդի ցողով, ծաղկանց ծաղկով խորոված եփել, երջանկությամբ համակված քաղցր ու անուշ զրույց անել, գինի խմել, խորոված ուտել տաք-տաք, փաղաքշել վճիտ օդի և ծաղիկներու տարփալի հոտով, դարդն ու հոգ մոռանալով։ Ա՜հ, ինաշխարհիկ կյանք, որ մարդուն անմահություն կուտաս բնության անմեղ բուրաստանեդ։

22 մայիս. Երթեի բազմապատառ լեռներեն ու ձորերեն սահելով Երասխ գետի օժանդակներու ափերով դեպի Քյուլլու կհառաջանայինք, որկե կնշմարվեր ամենագեղ Բյուրական լեռ, որ շքեղաշուք վեհապետիմ կամ թե ասեմ գեղանուշ Սուլթանիմ պես կնշմարվեր ի հեռուստ, ահա արևն ավալ-թավալ իրենց կանաչազարդ կատարներեն կծայրանար ու կպայծառանար յուր առաջնավոր լուսով, որ բերկրությամբ կթաթախեր բոնավոր մարդոյն ուշկ, նայես արևն նայես դաշտաց երանավետ մարգերն ու դալարներ, նայես ու հոտ առնիս, մանուշակ, գիներբու, լելագ, նարկիզ, նոնոֆար ու սմբուլեն, շարես զանոնք ի գոտիդ ու առաջնդ բոլոր, որպես զարդարված էին մեր ուղիընկերներ և դարձեր էին փառք ու պսակ Աստղկան, էլ ո՞րի հոգն էր արևն ու տանջ, քրտինքն ու տարափ, ամենքն էլ թեավորված կը-



վազեին, ճերմակ-ճերմակ մաքու դմակի պես կլավ-կլավ սունկեր կժողովեին, որո կերեն ու տապակեն երկնից հրեշտակներն անգամ չունեին։ Ժամ շորսին ակռաստի պահուն մոտ իջանք հանգիստ առնելու, այլ շրթներս կրթփթփար անոթությենե, սույն եղեռական դաշտեն ավելի պատվական դաշտին մեջ բաղմեցանք ճաշել, խորոված մխոն սունկի հետ, հավն ու հավկիթ ընտիր դաղցի ու ջրի կարոսի հետ, մածուն ու թան կաթի հետ, արդ քան զմետաքսյա ու արծաթակեռ թավշյա սփռոց ավելի փայլուն և քան զոսկենկար գորգ ավելի փողփողուն մարգերու վրա ծաղկանց վրա նրստիր ու վայելե քիչ ու ապրե ավելի քան զՄաթուսաղայն[39]։

24 մայիս. այսօր շորս օր է, որ Կարինեն ելած եմք ու մեր ընկերներեն կզատվիմ դեպի Խնուս, անոնք Վանա ճանապարհով կերթան, ավելորդ է մյուս ամեն պատահարներն մի առ մի գրել։ Բուրական լեռանց հյուսիսային թիկանց կողմեն երկու քուրտերու հետ կերթամք ընդ թոհ և ընդ բոհ վազած Երասխի ուղխենավետ եղերքեն, որո շրջակա քուրդ բնակիչներ փախեր են անմատույց տեղեր, թողլով ավերակ իրենց շեն-շեն գեղեր, թեև այս կողմեր այս է Բյուրակնյան լեռանց հյուսիսակողմն Երասխ գետի արևելքեն արևմուտք անցած լայնատարած ընդարձակության մեջ հազիվ երեք, շորս քրդու գյուղեր կան և եթե ապահովություն լինի և սույն քուրտերն զսպվին, հարյուր հազար բնակիչ կրնա կշտացնել այն հովասուն բազմաբեղուն վայրերն, որ, ավա՜ղ, այժմ իսպառ ավերակ են արյան ծարավի ավազակոց համար։ Գնա՛, գնա՛ որքան կարող ես այս անբնակ շրջաստիյուռեն, գեղանկար դաշտերեն ու արոտներեն, ուրտեղ որ բնություն յուր առաջին փայլն կպահե, ջրո սահանքներն ու հոսանքներ մարդուս աչքը կխանձին ու կդուրեն իրենց պաղպաջուն ու պղպջուն քարավաղներով ու առուներով, անկարելի է մարդում այս նկարեն դաշտորայք և լեռինքն ըստ պատշաճի նկարագրել, մանավանդ ինձ համար անհնարին, զի արագավազ փայիկիմ պես կաճապարեմ գնալ, վասնզի օր կտարաժամի և բավական երկար միջոց պետք է Խնուսա բերդ անուն գյուղավանն հասնելու համար և անմարդաբնակ տեղերեն կանց-

նիմք ու կորովի բազուկեմ հասա-հասա խավրծիլներ կժ
ղովիմք և այն գրեթե ճանապարհի եզերքեն, որո անուշահ
տություն համն ու հոտ միայն յուր ձեռքով քաղող և ուտող
կրնա պատմել. պուետիմ ըսածին պես լոտոսոյեմ ավել
անուշ է։

Չեմ ուզեր գրիչս համեցունել, ահա Խոռխոռունյա
արգավանդաճուղ գավառակի մեջ մտանք, մեր աջ ու ա
յակ համայն բարեշեն հայ գյուղերով համակված ու շքեղա
ցած, գեղ առ գեղ կիջնամք ու կնթրիմք թարմ սեր ու մա
ծուն կարագ ու կարմիր-կարմիր մեղրով ձվածեղ, սրտի
տանջանք առթող առարկաներ պակսեր, նոր ու երանավե
կիրքեր փոխանակեր էին զգացմանցս, տեղ տեղ տաճկի զոր
քեր և ամեն տեղ հոտ ու հոտ ոչխարներ, խումբ-խումբ կայ
տառ գառներ խարոր ընող խոտաղ ու մշակներ, կուժ
խամալիկ քամակ կանայք ու աղջիկ պերորներ մարդ
անասուն, գյուղերու հույլ, ջրոց ուխ, տանց մուխ, երգ տղա
յոց, սայլերու ճռնչոց, հովիվին երգ և խաղ բանաստեղծ
ներու երևակայության հնոցն կվառեին, առարկաներ,
հայրենասերին ու ազգասերին սերն ու սիրտ կխրախուսեի
և ցավեր կը փարատին իմ խոնջն մոռցեր եմ ես, իբր
հարսնավոր նաղենաղ կերթամ ու չեմ ուզեր այս ամենա
շատ առարկաներ առանց մի առ մի դիտելու անցնիլ, կար
ծես թե ամենքն ալ իմս են, զի այն սիրով ու զմայլումո
աչքերս իրենց հառած իրենց տեսքուց շիվարած ասեմ թ
ճոխացած կերթայի քայլամոլոր—իմ նախորդ օրերուս տա
նապն ու դառնություն տվի Երասխի վտակներուն ու տարան
ալ չէի զգար մերթ ընդ մերթ տեղացած տապն ու տարափ և եր
կար ճանապարհին առթված պարտասումն, որ գրեթե 14 ժա
մեն ավելի երբեմն ձիով երբեմն քալելով դար ու դարան
ու ճանապարհներ կշափենք առանց օ՞ֆ ասելու Խնուս
բերդ հասած եմ։

25 մայիս. Խնուս և յուր գյուղեր շրջեցա իմ տեղ
կություններս հավաքելու համար, որով ստիպված էի հ
մնալ քանիմ օր և անթերի կերպով ու շուտով պետք եղած
արագ-արագ ժողովեցի ի գիր, տեղս տաճկական շատ



գորքեր կային սահման և երկիր պաշտպանելու համար
սահմանած տերության զորաց վեցերորդ բանակին* վեցե-
րորդ խմբին խմբապետ Ահմետ Արֆաթ պեյ լսելով մեր գա-
լուստն, հատկապես խնդրած էր գալ մեզ հետ տեսնվիլ,
ստիպվեցանք մեք երթալ իրեն այցելության, որ ազնիվ
բարերարս և կրթյալ մեկն էր, մեղմ էր և ուշիմ, միջահա-
սակ, լայնաճակատ, զվարթադեմ երիտասարդմ, որ կատարյալ
հրամանատարիմ և ընտիր քաղաքացիիմ կատարյալ
մասն ու տիպարն ուներ ի ինքն սրտի զեղումով ու կարո-
տով լուրեր կհարցներ մեղմմե և ցավ ի սիրտ կըսեր թե, վեց
ամիսն ի վեր բնավ լուրմ առած չուներ հուստիքե, քանզի
անդ ոչ ճանապարհորդ կհանդիպի և ոչ թղթատար, շատ
ուրախ եղավ մեր հակիրճ տեսութենեն, արդեն տրեխներ
հագած կերթար հուզկահարները ձերբակալելու, մեր ազգա-
ինք շատ գոհ էին իրմե իբրև նախախնամության մարդ
պահպաներ էր զիրենք շատ արկածներե։ Հետս գտնվող
բնկերները ստիպեցին, որ տեղվոյն գայմագամին հետն ալ
տեսնվիմ, չլինի թե լսե, որ միրաղային գնացեր ու զինք
չեմք տեսպար ու ցավի, տճաճ կամոք այս չեղյալ պարտքն
ալ կատարեցի, տեսնվեցա նմա հետ, որ հոգով և մարմ-
նով հիշյալ միրաղային հակապատկերն կներկայացներ,
մարմնով նիհար, փայտյա ձողիմ չափ երկայն, նա կանփե
ձողիմ պես վտիտ, ինք ցուզ ցեղին կպատկաներ, հոնքերն
խոռ և ականոշիքն խիստ խոժոռ, սևագեմ ու թառամագ
իբրև վարազ, կարծես թե աչքերուն մեջ ալ բուրդ բուսնած
էր, վերջապես հեղ ու ցուրտ տգեղ մարդ մի էր և իբրև նման
կամ թե հարմար տեղմ նստած քանիմ անշուք մարդոց հետ,
որ յուր խնկանվեր ժողովականներ էին, ինքն դժգոհ էր
կառավարությենեն և ժողովուրդն՝ իրմեն, կարծես մեր մե-
զաց համար շատ անգամ այդպիսի մեղսասեր անպիտաններ
պաշտոնի կը կոչվեին թշվառ ժողովուրդը պատժելու համար.
ա՞հ, եղբայր, աչքերս կկտրտի ու չեմ կրնար ասոր չարիք-
ները պատմել, հայ ժողովուրդ կորսնցնելու համար դարանա-

* Անընթեռնելի երկու բառ (Հ. Պ.)։

կալ մի էր. ինչպէս, մայիս 25—26—27 և 28 մինչև 29 Խնուս և յուր գյուղեր շրջեցա զիշեր ցորեկ, վաղվան օր Վարդ կերթամ, որ նմա սահմանակից է։

29 մայիս. միրաղայեն զինվոր մը առի ու կերթամ Վարդ, մեր ետեն թողլով Խնուսի խուռնիխրեղեն երկրին կանաչ ու դալար դաշտն ու ծաղկունք յուր ծիծաղկուն գետովն ու վտակներով, որք Բյուրականց լերին ստինքեն կծնին և կերթան Մուրատին ի ծոց, մարդիկք հաղիվ ուրեմն այսպիսի հեշտալի ճանապարհորդություն կենեն, գարնանազարդ արևն յուր սիրաշող ճառագայթ ակնածանոք կսփռեր ի մեզ և զմեզ հարգելու համար միշտ մեր հետևեն կը կլորվեր։ Դեպի արևմուտք կերթամք մատղաշ ու սրաթորո կանաչ դաշտերեն ու հովիտներեն, վայելելով մեղրահամ աղբերաց զանազան ջրերեն, որ մեղուն առ վարդ, սոխակն ի թուփս անմահության երգերով կլեցունեին այն ամայությունն, կարծեմ հիշեր եմ, որ Բյուրակնյան լեռներն ու դաշտերը ամբողջ քրդաց ձեռքն են, բայց այս միջոցին իրենց հետքն անգամ չէր նշմարվիր, վասնզի փախած էին թե ռուսիս ահեն և թե տաճիկ զորաց երկյուղեն, որ հասած տեղերը կավերեին առանց տեղն ու ցեղն որոշելու, բայց սույն մեր ճանապարհի վրա գաղտուկ տեղմ քանիմ տնվոր քուրդեր մնացեր էին, մի հարցաներ իրենց բարեսրտության և թե չարասրտության համար. այստեղ մեր անասնոց խոնջ դյուրացնելու համար իջանք իմ ընկեր զինվորին հետ և ըստ պատշաճի ճաշեցինք քրդական կերակուրներ լեռնային ճաշակով. սերն ու մածուն մեղրով կարագ ու փոփուռ ձրվածեղ և դալար ու վարսավոր ծառուց ներքև ափ ի մրափ անուշ քուն մը քաշեցինք, ո՛չ ոք իմ ի՞նչ ազգէ և ի՞նչ պաշտոնի ըլլալս չէին գիտեր, ապա թե ոչ քանի անգամ հավու պես վիզս ճոլտեր էին։ Արթնացա և ընկերս արթնացուցի և կրկին շարունակեցինք մեր չուն, ընկեր զինվոր Իսբիտացի էր[40], բայց ոչ թե սև, ոչ սրտով և ոչ դեմքով, զգայուն կերպարանքմ ուներ և կնդնըշմարվեր որ կարոտակեզ կիրքեր ուներ մելամաղձիկ ուշոգ տոգորված, պատերազմի հոգերով վառ ու մաշված, իհարկե ճանապարհի միջոցին եղած խոսքը կապ ու հանգույց



չէին ունենար բնականաբար, այլ սարեն ձորեն կլինին անոնց առարկաները, երբեմն-երբեմն դիտել կուտայի իրեն, որ տխրությամբ մոլորված էր, ջրոց առատությունը և մաքրությունը, ջրաբույս խոտերու թարմությունը ու կանաչազարդությունը, ծաղկանց անուշահոտ բուրումն թիթեռնիկներու սոյլ և թռչնոց ծեքծեքումն, սոխակին եղերգ, բլբուլներու նազն ու նվագ նա ծանր ա՞խ մի կքաշեր իր սրտի խոր անդունդեն, ես ուրախությենե կըլալակրթնեի ուրախությունես և նա կուլար յուր սրտմաշուկեն և հառաչանս առարձագանս և ծուփ ի ծփունս կխառներ սարերաց գարնան երգիչներու հետ, արդյո՞ք յուր վարդափթիթ որ սիրասուն որդի՞ն, թե տարփալի ու սիրելի ամուսի՞ն կհիշեր ու կարոտվեր ու կայրեր այն սիրո ուխտավորն ի սեղան սրտի...

Նույն օր երեկոյան վերջնալուսին հասանք Մարդաղի գավառակի Գումգում ըսված գյուղավանն և տերության շորորդ բանակի հրամանատարն հոս կնստեր ինչպես նաև գայմագամն տեղվոյն։ Հիշյալ հրամանատար փաշան մեզ կանչեց յուր վրան և շատ ուրախ եղավ մեզ համար, մեկ բանի հատ լիմոն մնացեր էր քովս, իրեն տվի, որուն վրա ավելի շատ ուրախացավ, հոտ կքաշեր լի զգացումով և կդմայլեր և իբրև նորածիլ մանուկ մի կնետեր կբռներ, վեր ի վար կըներ ու կխնդար իբրև գանձ մը գտածի պես և շատ անգամ հուզված գետին կձգեր յուր սիրելի լիմոններ...։

Սույն հրամանատարին կարճ նկարագիրն ընելու զվարճություն ունիմ. այս մեծ մարդն կիպարի ծառի նման երկնաբարձ էր ու սոնա, թիկնավետ և առույգ, ալեխառն բայց բան զմրայուն երիտասարդս ավելի եռանդուն և սիրավառ, աշխուժությամբ կրակ ու բոց, մտերմական խոսակցության մեջ մեղրեն անուշ, բայց հրամայելու համար հարմար ու զգուշ, պատկառելի դիրքմ և դեմքը ուներ, գլուխը սեգ և բարձր ու հայացքն ահեղ, ճակատն ընդարձակ և պսպղուն ու թանկ մթերքներով լեցուն, հոնքն ու թարթափքն տարածուն ու փոզփոզուն, որք կարծես ծիրանի գոտիին պես կը կապեին ճակտի տակեն, իբրև սուրի տուփեն փայլող ծովանման աչերուն, բարգավաճ միտք, վսեմ հանճար, կիրթ ու

խոհական բառերուն իսկական նշանակությամբ առնելով, կը-
փողփողեր հիշյալ փաշան հրամանատար տաճկական զորաց
չորրորդ բանակին։

Ինչ և իցէ թողինք նորին վսեմության և գացինք մեր
իշևան գեղին երեսփոխանին տուն, ժողովեցինք մոտակա
գյուղերեն մեկ-երկու քահանա և մելիք և գրեթե մինչև
առավոտ աշխատեցա ի գիր առնել ինձ տրված հրահանգին
համեմատ եղած նյութերն։

30 մայիս. ես կատարյալ կերպով Վարդո գավառն ըստ-
օրին տեղագրած էի ամենայն մանրամասնությամբ, հորս
ինձ շատ լավ օժանդակեցին տեղվոյն հայազգի երկու աշար-
ճիներ[41], որոց անուն չեմ ուզեր տալ, զի ուխտյուք խնդրե-
ցին ինձմե, ապա թե ո՛չ կյանքներնին վտանգի տակ կիյնա,
այս մեթոտով կրցեր են ապրիլ տեղացի բոլոր հայազգիք
բարբարոս քրդերու ձեռքեն, որք հայոցմե կրկին բազմա-
թիվ են։

Հետևյալ առավոտ գամանդան փաշայեն զինվորմ ու
ջորիմ առնելով կերթամ դեպի Մուշ, այս ճանապարհն ալ
շատ դյուր ու զվարճալի է մինչև Զարպհոր ըսված տեղն,
ուր Եփրատի չորս քարակողկոճ օժանդակ վտակներ Խնու-
սեն ու Վարդոյեն քարավաղներեն գափ գափելով ծոփ ծոփե-
լով խժդժաբար իրար կոտորելով գիրկ ընդ գիրկ կխառնվին
Եփրատ գետոյն, ասկե ցՄուշ երթալով տապն ու տաք կհո-
ռանան ու կզորանան ու մարդու կենաց շապիքը կայրեն։

31 մայիս. գնացինք Մատնավանք, Ավրան, Սուլուխ և
այլն գյուղեր գրելով 1 հունիս մտանք Մշո քաղաք, Հայոց
առաջնորդարան, որ բոլոր նախածանոթ բարեկամաց հետ
սիրալիր տեսնվեցանք, դպրոցներ այցելեցինք, տեղվոյն
մյութասարֆ[42] փաշային հետն ես տեսնվեցանք իրենն խնդ-
րանոք, որ մեր Վանա ազնվատոհմներե առաջինն է։ Ա՜հ,
չեմ ուզեր տեսության ու տխրության առարկաներով զբաղ-
վիլ, արդեն մեր պայմանյալ երեք ամսվան մեկն սահեցավ,
պետք է կրակի արագությամբ մեր պաշտաման պարտքն
կատարել, որուն համար արյուն ու մահ հանձն առած եմ
հոժարակամ, ուրեմն պետք է նկարագրել նախ Մշո կամ



Տարոնո դաշտին, նորա ավանն և ապա յուր գավառներն
մի առ մի ըստ կարի։

## 1 հունիս Մշո դաշտ

Երբ հետաքրքիր ճանապարհորդմ կմոտի ու կմտնա
ճենական ցեղի սեպհական եղած ծովածավալ դիցաստանն
ու մարդաստանն, բուռն ու խուռն զգացումներով ու հիացու-
մով կբխմորվի, որո արևելյան կողմ իբրև ադամանդյա
պարիսպ գոռոզաբար կբարձրանա Գրգուռ, Ներբովթն ու Սև
սար որպես երկնային զինվորության անվանելի շարքմ կամ
եղեմի բերկրության թևապար պահապան սրովբեք հյուսի-
սեն Պըլեճան[43], Ծովասար և կամ Քարքեյա անտառազարդ
համեստ լեռներն ու բլուրներ, իբրև Տարոնո աշխարհին բա-
ռեղետ սեղանին ամոթխած ըսպասարկու մատուակք Մշու
Սոլթան սբ Կարապետին։ Արևմուտքեն և հարավեն Տորոս
կամ Սիմ լեռանց ոսկեշող և մեղրահոդ լեռներն, որոց ըս-
պառվածքին վրա կնստի ու կծաղկի իբրև անթառամ ծաղիկ
Մուշ ավանն, որ յուրյանց կուսական ստեանց վրա կը կրե
սբ. Առաքելոց և սրբոյն Հովհաննու դպրեվանքեր, իբրև լու-
սո անմահ աշտանակներ Տուրուբերան աշխարհին։ Նայե,
նայե, աղեկ նայե շորս դիհ, հայե այս դարի կատարեն տես,
որ այս մեծ դաշտի մեջեն իբրև գիշերաշրջիկմ և որպես
հարյուր հազար տարեկան ծերունիմ քայլամոլոր տանտողե-
լով կերթա թումպե թումպ տված իրեն թևեր և մյուս կող-
մանե Մեղրագետն միանալով յուր հինավուրց Մուրատն,
յուր առուներն ու ակները ժողովելով շուտով Շամբեն[44] դուրս
կելնե վաղեվաղ բարկությամբ ինչ կա առջև կզարնե կփշրե
բարկությամբ ու կերթա կխառնվի Եփրատին ծոց, այս եր-
կու մեղրակաթ գետերն ալ կարծես խռով Տարոնո աշխար-
հեն պուտմ ջուր չեն իտար Մշո մշած դաշտին։ Եվ ոչ ոք կա
գիրենք հաշտեցունե միմյանց հետ, մաս մը ջուր տալ տա
այս ծարավի երկրին։ Մշո դաշտն արևելքեն արևմուտք գրե-
թե քսան ժամ տարածություն և վեց ժամ լայնություն ունի,
իր լեռներն ամենն ալ անտառներով ու պրակներով զար-
դարված, հարյուրավոր գյուղերով կալեկոծի, իբրև բանա-

վոր ծիծաղ, եթե երդե երդ թռիս ու նկատես տեղվոյս ազգայնոց ընտանեկան կյանք և ազգային կյանք կտապակիս ցավոք, տեսնալով իրենց բարոյական ու նյութական ապրուստն։ Այս տեղացիք միայն ցորեն, գարի, կըվկըլ և կորեկ ցանելով գոհ կլինեն, բնավ չեն ուզեր նոր հեղինակութիւն մի ունենալ իր պապն ու պապու պապն ի՞նչ արհեստոր գործածեր այն միայն կսիրեն ընել, երկրագործութիւն հնամարյա թե մեռած կհամարվի տեղացվոյս համար, բնավ պտղատու ծառեր չունին այս բազմախուռն գյուղեր, կենաց ճաշակն իրենց համար նշանակութիւն չունի, երկրին բարեբերութիւն տեղացվոց ծուլութիւն պատճառ տվեր է, մեկ երկու արտ կցանեն վերոհիշյալ հունտեր, տարին բոլոր պարապ սարապ կնստին։ Կնայիս ամբողջ գյուղացվոց տղայք մեկ երկու անասուն տվեր առաջ կտանի արածելու, կանայք նախիր կտանին անասուններ, ծերունիք խարոր ու գութան կնեն, իսկ կարևոր համարված երիտասարդներ դաս գայլու պես մինչև երեկո շնթոկեր կայլոն կծխեն, մանավանդ անոնք որ երբեմն թե ի Պոլիս և թե այլ ուր պանդխտած են, ասոնք շան թագավորի պես կբազմին պատի տկներ կվիճաբանեն, իսկ երբ տուն մտնան ակռաստի ատեն[45] մեյ մեկ ամիրա ու մելիք կը դառնան, վիճակմ որ խպառ բարձիթողի եղած է իրենց մտավորական զարգացումն հիրավի-հիրավի հույժ կարոտ կարեկցութիւն։

Մշո դաշտ հոծ հայկական գյուղերու մեջ դպրոց չես տեսնար նմուշի համար, բացի Ավրան գյուղեն։ Տեղվոյն կարևոր համարված մասին հետ շատ եռանդուն խոսեցանք դպրոցաց ու դաստիարակութիւն մասին մեր լուսավոր ապագան բացատրելով իրենց, բայց ո՞մ կկարդաս գայլու ավետարան, մարդիկ պատերազմի աղետներեն լքված ու բեկված պատրանք կհամարեին ամեն աղգօգուտ հավաստիքներ, ռամկի ըսածին պես հոգո չվանեն կախված հուսահատեր էին, ընդհանուր սև ու սրտամեռ տարափմ տիրած էր իրենց սրտերուն, քրդաց ու զորաց հասուցած չարիքն ու զետ կպատմեին ու կուլային դառն ու ողորմ կերպով, վստահութիւն և ապահովութիւն իսպառ վերաց-



ված էր և ինչպես կտիրմ ոչխար ամեհի առջերու կամ կատաղի գայլերու ձեռք մատնված էին։ Դժբախտ մշեցիք ավար, ավեր և սպանում կտիրեր անդ, անկարեկից մնացած էր ժողովուրդն, է՜է, դու արի ու ասա ուսումն ու կրթութիւնը մարդուս լույս և կորով կուտա, առյուծին պես յուր ուժը կճանչնա, յուր իրավունքներ կպաշտպանվի, ձեր իրավունքներ կստանաք, ա՜խ բռունք հայկականք, դուք կազատվիր անշուշտ, եթե ձեր ուժն ու կարողութիւնը ճանչնայք և ձեր հույս ուրիշի վրա չեք դներ, հեղինակ կըլլաք մարդ, կըլլաք, նախապաշարումն այս ամենի պատասխան իրենց շատուց սերտել տված էր, թե «մեռնեմ քե տո՜ հայր ի սուրբ, շատ խորոտ խորոտ կգրուցես զետ լավ լավ բաներ ու կսովրցուս կըսկո՜ հմլայ, մըր հալն չկինաս դու, մըր ումպըրն ու հալը շատ վավելերա, տո՜ կո՜ էնա աստված կո՜ էնա աստված վարդապետներն զմեն էլ զմե կխաբին, աղեկա քո արևուն տապլիմ, քե հայրան եղնիմ, ես խորովիմ էտ քո խորոտ ու պլպուլ լեզվիտ, աղեկա չէ՞ որ կասիս, դպրատուն լավ ա ուսմունք լավ ա զչարն ու բարին կը կիյնա, զյուր գործն զյուր ձեռքով կտենա, զյուր ուժը կը կիյնա, զյուր մալ կազատա, զյուր խոգին կազատա, էմալ չի՞, խա՜ էմալի, հաշ կաց տու որ ասեմ։ Թո՜, թո՜, թո՜, տո՜ ավեր ջաղաց, կըռկո մեկ Միսակ աղեմ կա կո՜ դաս, որ շատ խելքով ու շատ իմաստուն ա՜, հո՜ շատ լավ ա՜, խիստ շատ լավ ա՜, կասեն հըմլա փարա ունի, որ զմեր զերկիրն կառնի կծախա՜, խասկցա՞ր, ականջդ ինձ ա՜, եկավ ի մեր երկիր խորոտիկ առջին տեր զգյուղ մի տափու էրաց[46], գրնկերութիւն շիներա, զգիտութիւն, լուսավորութիւն հըմեն լէ կա ի մոտ զինքն, ապա հորի՞ն փախերա ու պախկըվերա ի քաղաք չի կարնա տիր մել զգլուխն ի տուրս խանա ու զյուր զգեղն թողերա ի ձեռաց ամեն ավարոց, սըբ Կարապետ, սըբ Կարապետ կո՜ կսպանեն զինքն ու չեն խըլսու, տո՜ խայր սուրբ հեյրան տու վի՞ր տուն կխարցուս, քրդերն ու տաճկներ զմեր փուռթիկն կխանեն կիյնաս։

Դուք միշտ այդ սուրբ սրապիոններ կհիշեք իրենց կարեորութիւն կուտաք, մենք թվով անոնցմե շատ ենք, արված էր և ինչպես կտիրմ ոչխար ամեհի առջերու կամ կատաղի գայլերու ձեռք մատնված էին։ Դժբախտ մշեցիք ավար, ավեր և սպանում կտիրեր անդ, անկարեկից մնացած էր ժողովուրդն, է՜է, դու արի ու ասա ուսումն ու կրթութիւնը մարդուս լույս և կորով կուտա, առյուծին պես յուր ուժը կճանչնա, յուր իրավունքներ կպաշտպանվի, ձեր իրավունքներ կստանաք, ա՜խ բռունք հայկականք, դուք կազատվիր անշուշտ, եթե ձեր ուժն ու կարողութիւնը ճանչնայք և ձեր հույս ուրիշի վրա չեք դներ, հեղինակ կըլլաք մարդ, կըլլաք, նախապաշարումն այս ամենի պատասխան իրենց շատուց սերտել տված էր, թե «մեռնեմ քե տո՜ հայր ի սուրբ, շատ խորոտ խորոտ կգրուցես զետ լավ լավ բաներ ու կսովրցուս կըսկո՜ հմլայ, մըր հալն չկինաս դու, մըր ումպըրն ու հալը շատ վավելերա, տո՜ կո՜ էնա աստված կո՜ էնա աստված վարդապետներն զմեն էլ զմե կխաբին, աղեկա քո արևուն տապլիմ, քե հայրան եղնիմ, ես խորովիմ էտ քո խորոտ ու պլպուլ լեզվիտ, աղեկա չէ՞ որ կասիս, դպրատուն լավ ա ուսմունք լավ ա զչարն ու բարին կը կիյնա, զյուր գործն զյուր ձեռքով կտենա, զյուր ուժը կը կիյնա, զյուր մալ կազատա, զյուր խոգին կազատա, էմալ չի՞, խա՜ էմալի, հաշ կաց տու որ ասեմ։ Թո՜, թո՜, թո՜, տո՜ ավեր ջաղաց, կըռկո մեկ Միսակ աղեմ կա կո՜ դաս, որ շատ խելքով ու շատ իմաստուն ա՜, հո՜ շատ լավ ա՜, խիստ շատ լավ ա՜, կասեն հըմլա փարա ունի, որ զմեր զերկիրն կառնի կծախա՜, խասկցա՞ր, ականջդ ինձ ա՜, եկավ ի մեր երկիր խորոտիկ առջին տեր զգյուղ մի տափու էրաց[46], գրնկերութիւն շիներա, զգիտութիւն, լուսավորութիւն հըմեն լէ կա ի մոտ զինքն, ապա հորի՞ն փախերա ու պախկըվերա ի քաղաք չի կարնա տիր մել զգլուխն ի տուրս խանա ու զյուր զգեղն թողերա ի ձեռաց ամեն ավարոց, սըբ Կարապետ, սըբ Կարապետ կո՜ կսպանեն զինքն ու չեն խըլսու, տո՜ խայր սուրբ հեյրան տու վի՞ր տուն կխարցուս, քրդերն ու տաճկներ զմեր փուռթիկն կխանեն կիյնաս։

Դուք միշտ այդ սուրբ սրապիոններ կհիշեք իրենց կարեորութիւն կուտաք, մենք թվով անոնցմե շատ ենք, ար-

հեստ մեր ձեռքն է, անոնք վայրենի են, օտար են, այս երկիրն մերն է, մեր հայրենի սեպհականություն, հայկական խնդիր պարզ կալվածական խնդիր մի է, երբ եղեր Հայաստան հայուն է, անոր համար մեր թշնամիք թելադրված շարունակ զմեզ հալածել կուզեն, մենք պետք է զգույշ մնամք ու մեր անմահ դատը պաշտպանեմք։ Հիրավի թշնամիք զենք ունին, ձի ունին, դուք ալ զենքը ու նժույգներ ունիք զինվորվեցեք ձեր բոստ պաշտպանելու համար, ձեր նախնյաց սրտով ու հոգով, հայնժամ քուրդն չի կրնար ձեզ ասել վերև աչքին ունքը ունիք, այս է ազգաց ու ազանց իրավունք, ազատության մեր գործասեր կամքեն կախում ունի, մարդոց կամք տարերքն անգամ իրեն կհնազանդեցուցանե շատ անգամ, փորձը կատուն կերած չէ, միանգամ խելոք միացեք և ահա ազատված եք հայնժամ։

Լավ ա՛, լավ ա՛, զինչ զոր դու կասես շատ լավ ա՛, սրապիոններ փուչան, մենք քան զենոնք շատվոր ենք, զմեր ձեռքն բռնուկ ա՛, անոնք անասուն են, էս զերկիրն մերն ա՛, խերունական ա՛, հայուն ա՛, զենոր ապով զմեզ ի դուրս խանել կըտրլըպին, ապա մենք զիմա՞լ անենք.—ինչպես որ ըսի։— Զքո աչքերուդ դուրպան խոսքդ մեղրով կտրեմ, կո՛ աշխարհ գիտա, որ Մամբրե սրբազան զետ բաներ գիտա, իմաստուն ա՛, զհայն, զքուրդն կճանչնա, զմեր զտունն և զբունն կճանչնա, զձի ունի զճոկ ունի, զմարտաղ ունի, աշխարհավորա, զամեն բանս։ Ի՛մալ կեղնի որ զերկու զերեք տրմպլըկցի[47] շան լակոտ քուրդ ու կճա տեխեն քանի մի շլուտ գողեր եկան ընդած տիր, ի սուրբ Կարապետին եղած զոչխարն ու զէծն, զգառն ու զուլն, զձինն ու զէշն զամեն զբանն հի՛վ հի՛վ սրբեցին լվացին ու տարին, զվանքս զավեր դրին նման փշի չորմատ, կո՛ Մամբրեն տա՛, խարիր վարդապետ տա՛, խազար լոռ խաց ու տոշ ու զվիզն խասկցող ու զբան խասկցող տա՛. հորի՞ն չելան զմալն զտավարն, զփուրն ու զփոթին ետ դարձուն։ Կո՛ զենոնք են զմեր զառաջնորդն մեր հույսն զվի՞ր վերեն դնենք, ի բան կպնինք, էնոնք զիրեն չեն կարնա զիրենց խոգին ազատ էնե զանորինաց ի ձեռաց, զմեզ իմա՞լ կազատեն, էնոնք զմեր զառեջն



պիտի ինկնին, մեզ զճամխեն ցցուն Հովսեփ կաթողիկոսի պես, որ մենք էլ զմեր իրավունքն առնեմք զմեր Հայաստան խրլըսունք էն շան ճրժերաց ձեռքեն պոծնունք զերութենից զգերութենից։

Մուշ ավանն Տորոս լեռան արևելակողմ դաշտին կպած կեղեցկադիր և բոլոր բլորակիմ վրա կառուցված է, յուր գագաթին վրա է Մուշեղաշեն ամրոց, որ հատակված է ըստ երևույթին քաղաքիս շենքերն նախնիք ընտիր ճաշակով հարդարած են եղեր ամրոցեն անմիջապես դեպ ի ձորն և ի դաշտ կարգ ըստ կարգի շենքերով զարդարված, բայց երթալով նույն գիծերն ավերը ու տուներու շարքն ու տեսք խանգարեր են, ներքին և արտաքին զարդերեն զուրկ են քաղաքիս տուներն ու փողոցները, ընդհանրապես աղքատիկ են, անհարթ փողոցները նեղ են և խորդ ու բորդ, մանավանդ թե գարշելի և աղտոտ, զզվանք կզգա մարդս նկատելով որ կույանոցներ շիներ են իրենց ել ու մուտ ըրած դրանց վրա և վա՛յ այն մարդուն որ երեկո ուշ կամ առավոտ ընդ արշալույս այս անպիտան փողոցներեն անցնելու շարաբաղդությունը կունենա, ապականության տարափ ոտնեն ցգլուխ զինք կլվա, թեև մեկ-երկու տեղ հասարակաց ճեմիլ կա, բայց այնքան զամեն ավելի անմաքուր և անտանելի է։ Կառավարություն և տեղացիք բնավ հոգատարություն չունին այս սոսկալի անմաքրությունից բարձման համար ընդհանրապես անմաքրասեր են ու անքաղաքավար։

Ինչպես ծանոթացանք, քաղաքս բարձր դիրքիմ վրա կառուցված է, որո արևմտյան լեռանց սահանքեն արծաթափայլ վտակ մի կվազե փոթորկալիր դեպ ի քաղաք, որ կրնա բաժանվիլ ամբողջ տուներուն և փողոցներուն մեջ ամենահեշտ կերպով, եթե ոչ ամբողջ վտակն, գոնե այնքան, որքան պետք կլիներ իրենց անպիտանության մաքրելու չափ, բայց այն պատվական գանձ թող տվեր են իրեն կամաց կերթա Ջորո թաղեն մինչև ի դաշտ անօգուտ տեղ դրեթե և մի միայն երկու երեք ջրաղօրիք դարձնելով։ Որի՞ հոգ, քաղաքացին, քաղաքացիության անուշ ախորժակն չի գիտեր, վայելչություն ու մաքրություն կարևորություն չունի իրեն

համար, որք խիստ շարքաշ են Ի խոշորակյաց, մեծ մասամբ տգետ ու անմիտ սոպռ գյուղացվոց համամիտ, իրենց զգեստներն ալ անծանոթ չեն շատերուն ճերմակ կամ կապույտ միջակարգ նավիմ առագաստի չափ ընդարձակ ներքնավարտիկ և կարմիր կտավե կոտիկ կհագնեն ընդհանրապես, չուխայե զգեստ հազվագյուտ է և այն միայն նոր նոր գաղթողներն կհագնին։

Տեղվոյս կանանց զգեստներն ալ շատ տարբերություն չունի սրանց կոպտատարազ զգեստներեն և մասամբ ալ ավելի տգեղ, թանձր ու հաստ ծոպավոր զրպունները կհագնին դրոշակներ կարմիր կապույտ և այլ գույներով նախշված, շիլայե[48] կամ կարմիր շալե գոգնոց, ոմանք ականջին և այլք քթիներներին ծակած ու մեյմեկ բան անցուցած որպես զարդ, սոքա այլ գավառացի կանանց պես շատ ամոթխած չեն, որ արանց շուքերեն փախչին, պարզ են ու համարձակ, մանավանդ հասունացած օրիորդներ և կարծեմ նորա շրջանակեն ալ քիչմ անցած, ցավ ի սիրտ ստիպված եմ ասել իրենց մարց պես հոյժ տգետ են ուսման մասին, հանցանք որի՞ն է բանադատ դու գտիր շուտով, օրիորդաց համար դպրոց ո՞չ Մուշ կա, ո՞չ Պուլանըխներ, ո՞չ Խնուս, ո՞չ այլուր տեղեր, իցի՞վ թե արու տղայոց համար գոնե ընթերցարաններ ըլլար։ Դու չե՞ս արտասվիր ասոնց անբաղդ ու ապերջանիկ կյանքն նկատելով, քո աղիքները չե՞ն փխրեր, ցավէ ինձ եղբայր կարեգիր, ցավէ իմ սրտիս կարեր, ասոնց այսպես բարձի թողի վիճակն, որ կմնան ու կթոռոմին հայոց ընտիր ընտիր ծաղիկներ, հայ սրտի հուսապարար գանձեր, ո՞վ պիտի խնամ տանե այս կամավոր զոհերուն։

Մշեցին, թե՛ քաղաքացիք և թե՛ դաշտեցիք ընդհանրապես սոսասառաս[49] են և երկայնաբազուկ, մսեղ չեն բայց կորովի, թխագեմ և սևաչուի. կենաց պիտույք չունին, բայց շատ կապրին, տեղվոյն անխառն կլիման իր ազնվությամբ շատ լավ կը պաշտպանե զիրենք. դյուրագրգիռ են և համարձակ, երբեմն այն կտրիճներ կծնանի այս աշխարհս, որ Սամփսոնն և զՏրդատն կգերազանցեն. իրենց կյանք դաշտային է և պարզ, մեծ մասամբ երկրագործ. չափազանց



հյուրասեր են և առատ. սիրտերնին շեն ու զվարթ, գեղեցիկին ու բարվոյն սիրահար. եթե տեղվոյս ժողովուրդն տարվոյս հոգվոյն պահանջածին համեմատ կրթվի և դաստիարակվի՞, արդեն հողային, կենաց և բաղդի խնդիրներ լուծված կհամարվին, զի ես բնավ այն կույր հավատքն չունիմ, որ ասեմ քուրդերն զսպվելու են, որ հայերը զարգանան, ինձ համար կենալ նայել, հուսալ և սպասել պատրանք են։ Ընդհանուր դաստիարակությունմ պետք է մեր ազգին և անմիջապես սկսելու է անոր ամեն հայ մարդ պետք է ուղ և ուժը տալ անոր. շոշափելի ճշմարտություն մի է, որ հայ ժողովուրդ կազմ ու պատրաստ է անոր ամեն ճկուն տրամադրությունից հպատակելու. նոր եռ մը տիրած է գավառացվոց սրտին, նոր զարկ իրենց հաստ հաստ երակներուն, բարոյական զգացումով վառած են հավասարապես։

Կփոթամ քաղաքես դուրս ելնելու, ժողովուրդն յուր սրտաքներ շուտ շուտ հառաջ կը վարե, ժամանակն կսահի անարգել և ես նմա խիստ պետք ունիմ, զի գործեր ունիմ և գիրեր, ստիպված եմ գիշերներն անգամ աշխատիլ, անոր և սեղմված պաշտոնիս համար սիրտս կրճնշվի։ Կուզեմ երկու խոսք ալ քաղաքիս դպրոցներու համար խոսիլ։ Քանի տարի առաջ չորս վարժարան կար տեղս, այժմ միայն մնացեր էին սբ. Մարինե[50] և Պրուտի թաղիներն, ճակատս քրտինքով ու լերդս արյունով կողողի, երբ կգրեմ այս սև տողերը։ Ա՜հ, ամոթու գետին պատռվեր ու մարդս սահեր նորա ալյաց մեջ ավելի հարգի էր, քան թե ասել առաջին դպրոցն որ մայր վարժարան կը համարվեր երկու խրամակարկատ և անշուք սենյակներե կը բաղկանար, որոց մեկն դասարան և մյուսն սերտարան կը համարվեր բոլորովին անզարդ և աղտոտ իբրև աղբանոց, միայն ծվենս ծվենս պատռված խրսիր մի կար փռված հող ու մոխրով համակված, որո իշխանություն և պետությունը գրված էին ճանճերու, մժիկներու և պետ-պետ մոզերու ձեռք։ Վարժապետ, որ նոցա թագավորն էր բնավ սիրտ չուներ ատոնց լիրբ ու պիղծ գումարտակներ զսպելու, միայն աղքատ ու թշվառ տղայք կրնային մրցիլ այդ անկանոն հրոսակներուն հետ իրենց սև սև լվերով և սոս-

կալի ոճիլներով որոցմով կտրորվեին հայոց ապագա հույս համարված ազգին նորածիլ զավակներ, կամ թե Տարոնո աշխարհի կանտ կըլուշ ճժերն ու պժեր, այս նյութական առարկաներն էին, իսկ բարոյականն ու ուսումնականն երբեք մի՛ հարցուներ սրտակից բարեկամ։ Վարժապետն արդեն, երբ ըսեմ ինք զինք գինովության տվեր էր հայտնապես և ես աչքովս նկատեցի, որ դպրոցի մեջ վարդապետիմ ու քահանայիմ հետ օր ցորեկով օղի կխմեր, կրնաս գուշակել և այնոտ մասերն ամբողջապես։ Ինչպես կծածկեմ հիշյալ կրոնականոց անունն նույնպես հող ու մոխիր ցանել և դու աշակերտելոց դասին ու հառաջադիմության վրա, լաց ու գնա հեռացիր, բան չունիս քիչմ ալ բարկացիր ու ասա՛ այս ի՞նչ նախատինք է, եթե օտարազգիմ գա ու տեսնա այս վարժարանին լքյալ ու անբարի դրություն, ի՞նչ կսե մեզ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, ամոթն ու պատկառանք վերցված է այս քաղաքեն այս մասին, գոնե եթե ո՛չ ազգի ու իրենց զավակաց սիրոյն համար, այլ ավա՜ղ գոնե կսեմք իրենց պատվոյն համար պետք էր հսկել սոյն վարժարանին, ավելորդ է ասել, որ սույն նվիրական հարկին, ո՛չ տեսուչ կար, ո՛չ հոգաբարձու, ո՛չ կառավարիչ, ո՛չ տնտես, դե՜ գնա մտածե՜ ու կրակ ու բոց թո՛ղ բլլե քու սրտեդ ու գագաթետ։

Սբ. Մարինեի դպրոցս ունի մեկ մանկավարժ և 110 աշակերտ։ Իսկ Պրտի թաղի վարժոցն ունի մեկ տիրացու դասատու և 60 աշակերտ, որո չարաբաստիկ վիճակն ալ վերնոյն համանման է իսկապես։ Խոհեմություն ինձ լռել կրթելադրե ալ բան չեմ խոսիր։

Մշո քաղաքի քաղաքական իշխանության մյութասարֆություն է ընդ իշխանությամբ Վանա կուսակալին, հայոց առաջնորդն ալ հոն կնստի, զոր ժողովուրդ կնտրե երբեմն և Կ. Պոլսո ամենապատիվ պատրիարք կը վավերացուն։ Քաղաքս 8 թաղի բաժանված է, որոց 5 հայոց կվերաբերի և 3 թրքաց։ Հայոց թաղերն են. Վերին թաղ, Ձորո թաղ, սբ. Ջաղար, Բրտի և Ճիկոաշեն։ Ունին նաև 5 եկեղեցի, սբ. Հարություն ի Վերին թաղ, սբ. Աստվածածին Ձորո թաղ, սբ. Մարինե ի Ջաղար թաղն, սբ. Սարգիս ի Բրտի թաղն և սբ. Կիրակոս ի Ճիկոաշեն։ Հիշյալներեն ի զատ ունին նաև երկու մատուռ. սբ.Գեորգ և սբ. Մինաս անուն, ուր իրենց տոնին օրեր միայն ժամասացություն կլինի։

Թիվ հայոց ընդ արու ընդ էգ 4630
Հռոմեական հայոց . . . 315
Բողոքական հայոց . . . . 42

Ընդհանուր գումարն է 4987

Մուշ ավանի թուրքերն ունին երեք թաղ, Մինարե, Գալե և Սուֆլա անունով, ունին երկու ճամի ու երկու մեսճիտ, սոքա ունեցեր են երբեմն ռուշիեի դպրոց, այժմ իրենց մանուկներ հիշյալ մետրեսներ կկարդան թիվ աշակերտաց 130։ Քաղաքիս բնակիչներ քանիմ քրդական ցեղերու կվերաբերին, Թոփալցի, Շեշնիկցի, Քոթանցի, Իսալի, Տոլոշի և Ղուրտ մահալելչի, որք վեց քրդական գերդաստանե հառաջ վազած են, հիշյալ քրդական սերունդ այժմ տեղացի համարված են և գրեթե տեղվոյն կառավարության դիկտատորության պաշտոն կվարեն, ամեն տեղ մարդ ունին, հետևաբար և բոլոր գործերու միջամտություն կընեն, խիստ մոլեռանդ են, բարոյականությունն զերո առ զերոի հավասար, սաստիկ կատեն զհայս։ Իրենց թե արու և թե էգ ծննդոց թիվն է 6620։ Սոցա արհեստն է, խաղախորդ, մսագործ, ծխավաճառ, կոշկակար, տասանորդող տոկոսավ, երկրագործ, վարձակալ և ոստիկան, որ իրարու ձեռքեն կխլեն և բարձր պաշտոնի անցնելու համար իրարու ցեղ ցեղի հակառակ են։

Իսկ հայոց արհեստներն են, գեղացիք ընդհանրապես, երկրագործ և անասնաբույծ, քաղաքացիք ոսկերիչ, պղնձագործ, ատաղձագործ, որմնադիր, քաղատոս[51], հյուս, պայտար, խաղախորդ[52], ներկարար, ծխավաճառ, հացագործ, գինեվաճառ, դերձակ, կոշկակար, պրուտ, կտավագործ, պարտիզպան և երկրագործ։

Մշո երկրի բերքերն են. ցորեն, գարի, կորեկ, կըլկըլ, ծխախոտ , կտավատ, կանեփ, ոլխար, տավար, ձի, գոմեշ, յուղ, պանիր, մորթ, բուրթ, գինի և գազպե։

## Գյուղորայք Մշո և Զուխուռ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Մոկունք, | թիվ հայոց | 497 | մեկ եկեղեցի, | սբ. Սարգիս: |
| 1 | Ցերկեվանք | « | 490 | » | « Թորոս: |
| | Հավատորիկ | « | 220 | » | « Աստվածածին: |
| | Օղունք | « | 275 | » | « Մինաս: |
| | Նորշեն | « | 1328 | » | « Նշան: |
| | Արինճ | « | 732 | » | « Աստվածածին |
| 2 | Բերդակ | « | 472 | » | « Աստվածածին ս. Սարգիս: |
| | Առընճունք | « | 220 | » | « Սարգիս: |
| | « հռոմէականաց | | 24 | | |
| | Ծափնա | « | 161 | » | « Գևորգ: |
| | Գառնի | « | 567 | » | « Գևորգ: |
| | Ավզաղբյուր | « | 552 | » | « Գևորգ: |
| 3 | Հունան | թիվ հայոց | 315 | » | « Թովմաս: |
| | Ալվառինճ | « | 595 | » | « Հակոբ: |
| | Ջըրիկ | « | 82 | » | « Աստվածածին: |
| | Խմբեր | « | 203 | » | « Աստվածածին: |
| | Բըքլից | « | 350 | » | « Գևորգ: |
| | Ալիճան | « | 200 | » | « Աստվածածին: |
| | Շեխուսուք | « | 90 | » | « Աստվածածին: |
| | Ցրոնք | « | 850 | երկու եկեղեցի | սբ. Սարգիս և սբ. Հակոբ: մեկ վարժարան և 70 աշակերտ: |
| 4 | Թըվընիկ | « | 140 | » | « |
| | Բայա յուշամի | « | 168 | մեկ եկեղեցի | սբ. Աստվածածին: |
| | Արդխոնք | « | 427 | » | « Աստվածածին: |

1 Դերև վանք գյուղին համար տեղացիք կղրուցեն թե Դավիթ Անհաղթին գերեզման հոն է:

2 Բերդակ գյուղին մերձ սբ. Մինաս և Կիրակոս անուն երկու ավերակ եկեղեցիք կան:

3 Ավերակ եկեղեցիմ ալ Հունան գյուղիս մոտ կա սբ. Ղազարոս անուն:

4 Եկեղեցիմ ունի ավերակ սբ. Սիոն անուն:



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5 Ղարց | » | 497 | « | » | Աստվածածին: |
| Արդամանք | » | 254 | երկու եկեղեցի | սբ. | Թովմաս և սբ. Աստվածածին: |
| Սուլուխ | » | 427 | մեկ « | « | Մինաս: |
| Կուրավու | » | 532 | « « | « | Ավետարան: |
| Տերբկ | » | 94 | « « | « | Տերբկ (վանք) |
| Զիարեթ | » | 980 | երկու « | « | Միանձունք և սբ. Մատթեոս: |
| Խեցոլյան | » | 1946 | մեկ « | « | Սարգիս: |
| Գոմս | » | 602 | « « | « | Աստվածածին: |
| Մյուսն ավերակ | » | | | | |
| Շեխաուն | » | 469 | « | « | Խաչ |
| Գրղբլաղաճ | թիվ հայոց | 742 | մեկ եկեղեցի | սբ. | Աստվածածին: |
| Շենիկ | » | 182 | « | | Աստվածածին: |
| Սեմալ | » | 119 | « | | Աստվածածին: |
| 6 Գոմեր | » | 406 | « | | Բառսուն մանուկ: |
| Անձնուտ | » | 304 | « | | Աստվածածին: |
| Բուրա մեյտան | » | 420 | « | | Ժամատուն: |
| Մեղտի | » | 98 | մեկ եկեղեցի | սբ. | միանձունք: |
| Սաղբքան | » | 155 | եկեղեցի ոչ գոյ | | |
| Պոստաքանդ | » | 120 | մեկ եկեղեցի | սբ. | Խորան: |
| Ալի զուլուն | » | 595 | « | | Սարգիս: |
| Սոխրամ | » | 462 | « | | Սահակ: |
| Արաշ | » | 427 | « | | Կիրակոս: |
| Մկրադամ | » | 371 | « | | Սարգիս: |
| Տրմեա | » | 301 | « | | Գևորգ: |
| Երմակ | » | 315 | երկու եկեղեցի | սբ. | Սարգիս և մյուս ավերն Կարապետ |
| Խասքյոյ | » | 1967 | երեք եկեղեցի | սբ. | Երրորդու թյան, Ստեփանոս և սբ. Թադեոս: |
| Բընաբք | » | 105 | երկու եկեղեցի | մեկ | շեն մյուսն ավերակ |
| Բոլոսիկ | » | 210 | երեք եկեղեցի | սբ. | Հակոբ և մյուսներն ավերակ |
| Դեղձմեր | » | 25 | | | ավերակ |

5 Ղարց գյուղն ալ երկու ավերակ եկեղեցի ունի հոյադիր, որ տեղացոց սիրտ կքաղե յուր ավերակներով:

6 Սույն գյուղին մղոնմ հեռու հոյաշեն և քարաշեն փառավոր եկեղեցիմ ունի հրաշալի ճաշակովմ հորինված:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Զուկ | թիվ հայոց | 210 | երեք | եկեղեցի | սբ. Ստեփանոս մնացած ավերակ |
| Էրիշտեր | « | 420 | մեկ | « | Թովմաս. |
| Ախջան | « | 412 | « | « | Թուխմանուկ. |
| Օրկնոց | « | 380 | « | « | Աստվածածին. |
| Հացիկ | « | 82 | « | « | Սեսրովբ ավերակ. |
| Քրդագոմ | թիվ հայոց | 280 | մեկ | եկեղեցի | սբ. Աստվածածին. |
| Երիցուկ | « | 179 | | « | Մինաս: |
| Դանել | « | 248 | | « | Սարգիս: |
| 7 Տաշ Մառնիկ | « | 248 | | « | Լուսավորիչ: |

7 Սույն գյուղացի (Տաշ Մառնիկ— Հ. Պ.) Ալո անուն հայ մարդում վրա, որ ասկե գրեթե կես դար առաջ մեռած է զինք տեսնողներն հետագա տարօրինակ վեպեր կպատմեն, թե օրմ բուրաստանիմ քովեն անցած միջոցին պարտիզպանեն քիշմ միրգ կուզե, բայց այգեպանն չի կամենար ու կզլանա նմա պտուղ տալ, հիշյալ Ալոն, որ բնավ կռիվ և հայհոյանք ըսված բան չէր գիտեր, ամենայն պաղարյունությամբ այգեպանին կհենու և սաստիկ ուժովն ցնցելով կհոսեցունե զայն և այգին մտնելով իր ընտրած սալորիմ ծառը արմատախիլ ընելով իբրև փունջմ խոտ կառնե կտանի հետևապես պտուղները կճաշակե. հայ քեզ անուշ լինի հսկայդ աննման: Այս չէ էլ կա:

Օրմ օրանց յուր շինական մայր գատա կթխե, որո կծու ու անուշ հոտն կառնե դրսովանց մեր եղբայր Ալոն, տուն կմտնա ու հացմ բաղարջեն կուզե, բայց մայրն որ կրակին առաջ կխաշվեր թորվան շուրթ, կբարկանա Ալոյին ու կմերժե նորա խնդիրն գատա չի տար, որուն քննոտելով Ալոն դուրս կելնա ու դռան առաջ դրված կորկտի սանդը կգրկե և կբերե ու իբրև թորվան սալ կդնե թորվան բերնի վրա, որով ամբողջ բաղարջներ կմնձրին ի թոնիր: Խնդիրն այն չէ, այլ թե քառասուն մարդ հազիվ թե կրնային վերցնել հիշյալ սանդին անարթել քարն, ա՜հ քո մոր մեջքն կանաչի ով գյուցազն Ալո: Այս ալ չէ դեռ էլ կա:

Տարիներ կսահի ու Ալոյի անօրինակ կտրիճություն շորս կողմ կծավալի ու մինչև պարսից դուռ կհասնի հայկազուն հսկային համբավն և տեղվոյն գոտեմարտ ըմբիշներու սիրտ կեռա ու կփափագին տեսնալ և փորձել նորա կորովությունն և ուժը, որոցմե հանձնապատան մեկը հարցնելով կուգա մինչև Ապրլպահարա գյուղին քովեր, ուր առյուծազորն Ալոն խարոր ձեռք հերկ կներ, պարսիկն կհարցնե թե Ալոյի գյուղն ո՞րն է նոյն իսկ Ալոյին, որն ձեռն ի մաճ հոդս կբարձրացնել խարորին սարվածքն երկուքն եղներով մեկտեղ ու կրսե ցույց տալով յուր գյուղն ահա՜ այս է, հիշյալ սինլքոր պարսիկն անօրինակ մարդու արարքն տեսնելով մոզ ի բերան յետ ընդ կրունկս կդառնա ապուշ, ապուշ, որ թերևս մտովի չափվել կուզեր Ալոյին հետ, հա՜ ապրեր հայ մանճկալ տեվ Ալոն: Այս ալ չէ, համբերե՜:



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Տյուլ Մառնիկ | թիվ հայոց | 445 | մեկ | եկեղեցի | սբ. Մինաս |
| Հերկերա | « | 420 | | « | Սմբատ |

Օրվան մեկ մեր ժրաջան Ալոն իրենց մոտավոր Սև լեռ անուն սարեն փայտ բերելու կերթա սայլով ու սայլավաստակ եղներն կարձակե արծրու համար ու ինք փայտը կկտրե ու սայլին բարձած ժամուն եղներն կրկորովին և զանոնք փնտռտած միջոցին երկու տմփռան արջեր վախտա վրհիմ քով կցված կմնան և առանց վայրկեանմ զոհելու կհասնի գազաններուն քով և երկուքի տամբառ կրծառեն բռնելով կբերե կլծե իր սայլին ըսելով թե եղներ իրենց տուն են գնացեր:

Նոյնպես այլազգիմ օրմ կուգա Ալոյին գյուղ ու կուզե զինք տեսնալ, գեղամեջ պտտած ժամանակ կուգա Ալոյի դռան քով և զայն կհարցնե նոյն իսկ Ալոյեն: Ալոն որ առաջուց տեղյակ էր զինք փնտռողին, դիտավորությունն կհարցունե այն մարդուն՝ ի՞նչ կուզես,— Ալոյի տունն ո՞րն է,—ձեռքս բռնե կայնիմ քեզ ցույց կուտամ ըսելով հիշյալ այլազգոյն ձեռքը այնպես կճմլե որ խմոր կդառնա յուր ափին մեջ և դժբախտ մարդն կարձակե զարնվածի պես ամա՜ն, ամա՜ն հերիք է թող տուր, ցույց տվիր ըսելով կփախի և այն օրեն կգգուշանային նմա հետ կատակ ընելե, չեմ հուսար որ ոմանք չափազանց համարին այս մանր վեպս, որ իսկապես հավատարիմ աղբյուրներե քաղած եմ, նոյնիսկ յուր բնիկ երկրեն ու գեղեն, ո՜վ որ Տարոնո եղեմասահ ջուրեր վայելեր և անոր ամենավճիտ օդն ծծեր է շուտով կհամոզվի ասոր: Մշո լեռանց մեղրակաթ ջուրն ու գազպեն[53] զարմանք չէ, որ չորս առյուծի ուժը տան ավյուն տան տեղացվոց ջիղերուն և երակներուն, կճանչնամ ես ան մշեցի երիտասարդն, որ քառասուն զրամանոց պղինձ զրամ երկու մատնով ճնշելով երկու կտոր կկտրեր և ձիու պայտ երկու ձեռքով երկուս կճեղքեր և ասոր նման շատ ճղային մարդերու արարքներ գիտեմ, բայց զանց կնեմ:

Տեսակ առեղծված համարված Ալոյի վիթխարի ուժն իբրև տեսակմ բացատրություն սույն փոքրիկ տարվույս բացատրությունն ալ պետք կհամարեմ գրել գրեթե երեք դար ապրող հայ հովվիմ համար, զոր ակատես եղած եմ ասկե 18 տարի առաջ: Հիշյալ թվականին Տէր Սարգսենց Երեմիա[54] սրբազան, որ մեր դերդաստանին հայրն է Բարձր Հայոց ուսաց փոխ հյուպատոս Իվանով[55] պեյն նմա կգրեր լի թախանձանոք, թե կպատմեն ոմանք, որ զավառիդ Մշո Տաշ Մառնիկ անուն գյուղին մեջ Մարգար անուն մարդ մի կա, որ երեք հարյուր տարեկան կհամարվի կանչես զայն մանրամասն քննություն ընելեն ետք զրկես գա ի Կարին, պի ինձ շատ կարևոր է այդ հայ մարդն, ապա եթե անկարելի կլինի զայն տեղս զրկել յուր կենաց մանրամասն պարագաներն գրես, սույն խնդրոխառն ուղևորության համար սրբազանն հիշյալ Մարգարն բերել տվավ ի Մոշ յուր ութսունամյա թոռան հետ Տաշ Մառնիկեն մինչև

| | | | | |
|---|---|---|---|---|
| Վարդխաշ | « | 168 | « | Սարգիս |
| Ցայտ զպեռն | « | 448 | « | ավերակ |
| Ավզուտ | « | 442 երկու | « | Սարգիս մյուսն ավերակ |
| Վարդենիս | « | 1162 | « | « Աստվածածին մյուսն ավ. |

Մշո առաջնորդարանն երկու-երեք ժամու ճանապարհ է, ուզեր էին զինք ձիով բերել, բայց չէր կամեցեր, զի յուր կենաց մեջ ձի հեծած չունի եղեր, այլ քայլելով և առանց հոգնության եկած էր, ալեխառն ու միջահասակ և ընկույզի կոճղիմ պես հաստ մեկն էր, ջղային ու երկայնաբազուկ, յուր մսեղ մարմնոյն երակներ գերանափայտի պես հաստ հաստ դուրս ցցված կաշու տակեն, թավամազ ու լայնաճակատ, յուր բարեկազմ դիրքն և մաշված վզողն ցույց կուտար այս բնության հրաշագեղ պատկերքին հնությունը, հիացեր էինք ու չէինք ուզեր մեր աչաց հավատալ, յուր թոռնեն ավելի զվարթ է ու աշխույժ աչքեր ծովանման ու պայծառ, ատամներ գառան ատամի նման ամբողջ, անվնաս, թեև քանիմ անգամ նորոգված է եղեր զանոնք, քանի՞ տարեկան ես—չեմ գիտեր, ի՞նչ տեսեր ես առաջուց, ի՞նչ գիտես—հովիվ մարդն ի՞նչ պիտի տեսնա, ի՞նչ պիտի լսե— ձեր օրեր Մշո աղեն ո՞վ էր, թագավորն ո՞րն էր, զենոնք մեկն լէ շրմ կինա, զիմ պզտկության կասեն Մուրադ աղեն եկավ ի դաս ու գնաց։ Սուլթան Մուրադ[56] կակնարկե։ Ու էս քաղաք հմլա շենություն կեր, ո՛չ ես զես ժամուն ետեն արտ եմ վարած, սբ. Մարանե եկեղեցին է, որ գրեթե երկու հարյուր հիսուն տարեկան շենք է։ Էլ ի՞նչ ես տեսեր.—զեն Մուրադի կամուրջ նոր շինվելուն տատեր իմ ի գուն։ Լենկ Թեմուրի[57] շինածին նորոգությունն է որ Աշտիշատա[58] երկնանման եկեղեցվոյն քարերով կառույց, ի հիշատակ անիծապարտ շարության յուր սրտի։ Վերջապես և այլն շատ սույն օրինակ բաներ, որ առանց ստուգության երաշխավորություն ունենալու ինքն կսեր, ինչպես կսեր նաև «ես հովիվ էի, մեր սար ոչխար կարածեի, աղբյուրիմ գլուխ նստած կնայեի դեպի վար աղբյուրն տեսա բորոտ օձ մի եկավ նույն աղբյուրի ջուրին մեջ լվացվավ և խմեց, նույնին եղերք գտնված ծաղկեն կրծեց կերավ և բորոտություն վրայեն գնաց, ես ալ իջա օձուն պես ըրի, լվացվա, ջուր խմեցի, ծաղիկ կերա ու նորոգվեցա, չէի ուզեր աշխարհ մանալ, կարգվիլ, զիս բռնի ամուսնացուցին, մեղավորցա ու օրիս կարճացաս» և այլն։ Ինչպես ըսինք ասոնք ստուգություն չունին, հարկ էր օրինավոր քննությամբ ստուգվեր, այս միայն իրավ է, որ տեղվոյն ժողովուրդներեն շատերն կվկայեին, որ հիշյալ Մարգարն երեք հարյուր տարեկան է, տեր Պաղդասար անուն քահանայն կսեր ես շատ աղեկ կճանչնամ զՄարգարն և իմ տղայությանս ատեն կսեին երկու հարյուր տարեկան է։ Թե այսպես թե այնպես մոտավոր հավանականությամբ երկու հարյուր հիսուն տարեկան կհամարվեր։



| | | | | |
|---|---|---|---|---|
| Աղբենիս | « | 406 մեկ | « | ավերակ |
| Անեխատ | « | 350 | « | Հովհաննես |
| Արաք | « | 82 | « | « |
| Ալիքպոն | « | 455 | « | Աստվածածին |
| Թիլ | « | 658 | « | Աստվածածին |
| Խարտալա Խարզոս | « | 126 | « | Սարգիս/ավեր. |
| Շեխ պըտիմ | « | 84 | « | « |
| Արթիրա | « | 399 | « | « |
| Չխավու | « | 103 | « | « |
| Ավրան | « | 840 երկու | « | ս. Հովհաննես, Թուխ Մանուկ |
| Պաղլու Մելիք | « | 182 | « | « Աստվածածին և Նիկոդոս |
| [8] Սահակ | « | 240 մեկ | « | ավերակ |

[8] Արդյոք պե՞տք է ասել թե Կարմիր Վարդանա և Վահանա աշխարհ շրեղազարդ և անմահ հիշատակներով, շեներով, ամրոցներով, վանքերով և եկեղեցիներով Հայաստանի ամեն գավառներեն ավելի ճոխ ու փարթամ է, այլ ավաղ այժմ շատեր ինոնցե հողու հավասարեր են, կսկիծ ի լերդ ստիպված եմ ասել արտասվոք, որ քան զամեն ավելի ապարաղձն է սբ. Սահակ կամ Աշտիշատ գեղավան ու տեղ տեղ սրբավեր ու անկարեկիր, որ հարյուրավոր տարի սիրելյոյմ դիակին պես խոզխոզված հայ ազգին սիրտ ու լերդ կքամե, ո՞վ կրնա յուր երկնադիզ ավերակներու մամռապատ բեկորները նկատել առանց արտասվաց հեղեղի, առանց ի սիրտ և ի հոգի մըզմռալու և գոռալու։

Աշտիշատ ծովասարի արևելակողմ նոյնի սիրավետ լանջաց վրա տեղավորված է ամենագեղեցիկ դիրքմ ունի, տեղն սարահարթ, հորմե վար կափովի իբրև շղարշ բեհիզազարդ նկարեն յուր ծիլն ի ծաղիկ դաշտիկն մինչև ի ստորոտին հափ կնայե ամբողջ դաշտին վրա։ Ահ այս այն է որ տեղիք Հաշտենից կսվեր և պատվական զոհերով կմեծարվեր յուր դիցանվեր տաճարն, ուր կային ոսկիածին ոսկեմոր, Անահիտ, Վահվանյան և Աստղիկն Հայոց, որոց պաշտոն կտաներ Հայաստան աշխարհ, որոնք վերցուց մեր հոգոց հոգին սբ. Լուսավորիչ և տեղ եկեղեցի դնեց բյուրաբեղուն նկարներով հրաշափառ կերտությամբ, իբրև օգնական և պահապան յուր սիրելի հայ աշխարհին, օրհնեց ինքն յուր սարսափելի աջովն նորա հիման և վեմ քարն, օրհնեսցի՜, օրհնեսցի՜ և երիցս օրհնեսցի և օծցի վիմաքար տաճարիս աստծո, այս նշանավ սբ. Խաչիվ...։ Ուր՞ հազարք հազարաց և բյուրք բյուրոց ժողովուրդք և զինվորությունք Հայաստանյաց ընդ կայսերափառն Տրդատ թագավորն հոգեվոր հոր հետ ի զարդ անմահության ծովացյալ ու ծաղկյալ պատարագ ու նվեր կմատուցանեին անուշահոտ խունկերու և կնդրուկներու հետ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Բաղու | թիվ հայոց | 567 | մեկ եկեղեցի սբ՝ | Աստվածածին |
| Սորտաբ | « | 406 | « | Աստվածածին |
| Հայկերտ | « | 119 | « | Սարգիս |
| Ալատին | « | 63 | « | Սարգիս |
| Խաշխաշտախ | « | 427 | « | Աստվածածին |
| Տոմ | « | 154 երեք | « | Աստվածածին, Սիմեոն և Ստեփանոս ավերակ |
| Կելիեկուզան | « | 413 մեկ | « | Սարգիս |
| Բիթար | « | 448 « | « | Սարգիս |
| Քարձոր | « | 357 | « | Լուսավորիչ |
| 9 Խորոնք | « | 140 | « | Աստվածածին |
| Փողրկող | « | 413 | « | Գևորգ |
| Արտխոնք | « | 189 | « | Գևորգ |
| Ավազաղբյուր | « | 442 | « | Աստվածածին |
| Կաշխալտախ | « | 49 | « | « |
| Կիրմակ | « | 35 | « | « |
| Ուրաչ | « | 215 | « | « |
| Կոլ | « | 14 | « | « |
| Ըշկեվթան | « | 63 | « | « |
| Հասանապատ | « | 119 | « | « |

---

իրենց սիրտն ու հոգին բոլորանվեր խառնելով ընդ կրակ ու բոց արտասունս Գրիգոր Լուսավորչի ի հոտ անուշության և անմահության հոտն երկնավորի։

Այս աննման տաճարս կործանեց բյուրիցս անիծյալ Ապտուռահիմ յոթներորդ դարուն և բարեբաղդ Մամիկոնյանք կրկին և քան զառաջին փառոք շինեցին և մինչև ութերորդ դարն շեն էր և սկիզբն տասներեք դարուն քակեց զայն երիցս նզովյալ Լենկ Թեմուրն ու տարավ անոր սրբատաշ քարերով Եփրատ գետին վրա կամուրջ կապեց Սուլուխ գյուղին դիմաց և ահա այս հինգ դարն հետե ավերակ կմնա սբ. Սահակա հրաշալի տաճարն, որո ի ծոց կհանգչի սև ի սիրտ պաշտելին Սահակ հայրապետ, իծածկույթ ունենալով յուր հայրենի եկեղեցվոյն լուսավորության պատվական գլխվոյն փոքրիկ տաղավարիկմ փարեցա յուր անարձանագիր տխուր շեմին ու լացի, թալկացա ըղձաշուրթն համբուրեցի ու երգեցի նոր երգեր, երգ մերո և ազատության, որ ներելի չի այս տեղ խոսել, անտարակույս իմ սիրելի հայրենիք պիտի այն օրհնություն նվագե ազատությամբ մի օր։

9 Այս գյուղն մեր անմահ քերթող և պատմաբան հայր Մովսես Խորենացվոյն գյուղն է։



Բոլոր քրդաբնակ գյուղեր գրեթե բոլորն ալ հայկական եկեղեցի թե շեն, թե ավեր և թե գերեզմանատուներ ունին, զանց կնեմ ուրիշ շատ հիշատակներ, սոքա Մշո սահմանի լեռնային մասեր և անառիկ որջեր որոշեր են իրենց համար դիտմամբ և տեղվոյն հայեր հալածեր, որպեսզի իրենց ոճիրներ անարգել գործեն, սոքա են, որ տարին բոլոր հայոց գյուղերու տավարները կգողանան և անառիկ տեղեր ապաստանելով կաղատին, կառավարությունն բնավ հոգ չի տաներ այս մասին։

6 հունիս. Կկամենամ ընդ փոյթ Մշո աշխարհեն մեկնիլ, բայց կսիրեմ նույն տեղվոյն վանորեից տեղն ու դիրք, ելիցն ու մտից, շարժուն և անշարժ սեպհականությունից և միաբանաց ու գործավարական մշակոց նկատմամբ հակիրճ ծանոթություն մի տալ ընթերցողաց, որով կհուսամ փոքր ծառայություն մի արած կլինիմ սիրելի ազգիս այն մասին, որք ի մոտո տեղեկություն չունին։

Ամլորտվոյն վանք[59], Տուրուբերան աշխարհի ինչպես նաև մեր Հայաստան երկրի նշանավոր մենաստաններեն մեկն է, հին-հին հիշատակներով նվիրագործված, որս պատմական կյանք ամեն բանասիրաց հայտնի է, մենք իրեն հին խավեր քրքրելու կոչումն ու պարտք չունինք, բայց միայն նրա արդի ունեցած ցավալի հանգամանքներուն վրա պիտի խոսինք, իբրև պարզ ուղևոր մի ըստ իմ ըստանձնած պաշտոնին հատուկ վերաբերությամբ։

Մշո սբ. Կարապետի վանք[60] նույն ավանեն վեց ժամ հեռավորություն ունի, դեպի հյուսիսակողմ, Քարքեա լեռան բարձրադիտակ ստեանց վրա, որպես նազելաշուք թագուհիմ Մովսասարի կամ Բազմասարի կուսագեղ լերանց մեջ կը կենա, ծառոք ու ծաղկունոք, ականակիտ աղբերկոք զարդարված ու ողողված յուր լանջին գլուխ, որուն կսպասավորեն կարծես լեռներ, վտակներ, գետեր և հարյուրավոր գյուղեր։

Կրնա՞ս գիտնալ արդյոք հետաքրքիր երգասեր, թե ինչու համար մեր նախնիք մենաստաններ ընդհանրապես բարձրավանդակ լեռանց ամայության մեջ շիներ են, տեղվոյն օդին մաքրության, թե զանազան ծաղկանց բուրումին,

զուլալ ջրերու՞, թե համ ու հոտի անուշութեան, դրեց ամրութեա՞ն, թե երանավետ հափշտակութենե ընտրեր են այն տեղեր, ուշիմ բանասեր, դու շուտով կրնաս գիտնալ իրենց սբ. և սիրելի նպատակն, վայրեր, որք կարիճութեան և բանաստեղծութեան հանգամանքները ունին անթերի, որուն զմայլած Զենոբ Գլակն յոր երբեմն սիրելի լեռանց խտիարտխուպ, կաղաչեր մեր սբ. Լուսավորչին, որ հոն մնա, ուր կսիրեին մնալ ոսկերք կարոտյալ Աթանգինեի և Հովհաննու և իրենց ծոց պիտի ընդունեին քիչ միջոցին ետք նորահրաշ նահատակաց աղգանվեր ոսկերոտիքն, ի հավերժ հիշատակ Մամիկոնյան աշխարհին։ Թողունք մեր այս ակամա շեղումն։

Ամենարնտիր ճաշակով ընտրված տեղվոյմ վրա շինված է Գլակա վանք՝ համակ կոփածու ընտիր քարերով, որուն հանքն արդեն յոր պարիսպին մոտն է, յոր շենքերն ամուր են, բայց անճաշակ ոճով կերտված, [ք]անի մը կրկնահարկ սենյակներ, առաջնորդարան, հացատուն և ջրաղաց և ամբար, որք նշանավոր են իրենց բարեհարմար և օրինավոր շենքերու համար, ունի նաև կիսավեր դպրոցմ, սրբատաշ քարերով շինված տպարանմ, որուն համար տեղվոյն միաբանք չէին հավնիր, որք թշվառ կյանքմ ունեին, կջանիմ խոսելու իրենց սիրո կապն խզված, տատանյալ կը-ծփային Ծովասարին ծոց, իբրև լախլախ զավակներ ովկեանու խորշ, դպրոցին ալ այցելությունմ ըրի ուր քսանեն ավելի աշակերտք կային, ասոնց կյանք ավելի ողորմ էր, քան միաբանաց, բարկութենես գրիչս կոտրեցի, որ անոնց նեխն ու ապականությունը չգրեմ։ Հոտած ու պիղծ էր իրենց նեխտն ու հանգիստ, Մշու կարմիր ու կայտառ մանկտիք մեռելի գույն ունեին, իրենց կերած հացն անտանելի, զգեստնին աղտեղի... Օ՜ֆ գաղափարս կխանգարվի, սիրտս ու հոգիս քաղվեր ձեզ համար Տուրուբերանի տղեյներ, որ ձեզ համար բընավ մխիթարական բան մը չունիք, կսկիծ զիս կմաշեցունե, չեմ գիտեր, որի՞ն ինչ ըսեմ, միաբանա՞ց թե վանահոր, աղգի՞ն թե ունընտրողին...։ Աշակերտն հայերեն ուղիղ կարդալ լավ սորված էին, ուրիշ ուսմունք մի՛ հարցաներ, այն չկա, ի մի բան Մշո սուլթան սբ. Կարապետի վանքն եղած



էր լքյալ հյուղ մրգապահաց, անտեր ու ավեր։ Հազար հապար ներողություն եղբայր մի մոռանար, որ ըսի քեզ թե ոչ որ արհամարհելու փափագ չունիմ, զի բնավ շահուն նպատակ չունիմ, այլ թե մարդն ու մատ, լավն ու վատ ուտողն ու դրողն, սբ. Կարապետի վանուց կլոր կլոր կարմիր լոլիկներ, մածունն ու սեր, յուղն ու մեղր, կաթն ու կարագ, միսն ու զմակ կերեր։ Տարեկան չորս-հինգ հարյուր հազար դուրուշի եկամուտն կերեր ու վատներ ազգիս համար սեպհական օգուտմ ցույց չտալեն ետք, այսօր քիչմ ալ պարտք բարձեր վանուց վրա ու նստեր անհոգ կերպով վանահայրն ալ, միաբանն ալ, մշակ խոտաղն ալ, հացագործն ու լվացարարն ալ երկու հարյուր մարդ վանքի աղխն ու աղ, եղն ու գոմեշ, ձինն ու ջորին, տավարն ու էշն և ամբողջ ոչխարներ տվեր բանիմ լաքեշ, քուրդերուն տարեր ու իրենք անտարբեր մնացեր են իբրև զրվտա արձան, ամո՞թ, ամո՞թ, բյուր հազար ամոթ ու նախատինք ձեզ, որ չկրցիք բուռմ ավազակաց ձեռքեն ձեր կողոպուտն ազատել։ Կխնդրեմ որ ուշադրությամբ կարդաս հետագա նամակը, որ տեղվոյն տնորեն ժողով տվավ.

«Արժ. Տ. Արիստակես վարդապետ Տէր Սարգսյան.

Որովհետև վանուցս մտից և ելից և անշարժ կալվածոց ու բոլոր միաբանոց ու ներքին և արտաքին գործակալոց որքանութիւնը և ցանկը պահանջած էիք, ահավասիկ ժողովս փութաց զայն համառոտիվ մը սույն գրով ծանուցանել Ձեր սրբության։

Վանքիս դրամական եկամուտը միօրինակ չկրնար ընթանալ, քանի որ հաստատուն կալվածներ չունի, այլ ուխտավորաց վրա է, որոց առատ եղած ժամանակն հարյուր հազարեն մինչև՝ցհարյուր հիսուն հազար հասած է դրամական մուտքերնիս, իսկ ուխտավոր պակսած ժամանակն, այս թիվը կեսի կիջնե և գրեթե երբեմն իսպառ կկտրվի և վանքս կպարտավորի պարտքով իր կառավարության անիվը դարձունել, ինչպես որ այս երկու տարի եղավ երեսաց ռուսո և Թուրքական պատերազմին։ Իսկ դրամական ծաղքն սովորաբար հարյուր քսան հազարեն մինչև հարյուր երեսուն — և

քառասուն հազար դահեկանի հասած է, այս ծաղքն անձուկ ժամանակներուն համաձայն որչափ որ կրճատվի ալ, դարձյալ իննսունեն հարյուր հազարի կհասնի։ Տնտեսական եկամուտն ալ ժողովրդյան կամաց և հոժարութենե ձգված լինելով, նույնպես հաստատուն հիմ մը չունի, խաղաղ և առատ տարիներն վեց հարյուրեն մինչև ցվեց հարյուր հիսուն բեռն ցորյան (բեռը հարյուր հոխայեն հաշվելով) վանքիս թեմերեն կհասնի վանքս, նույնպես վանքիս ագարակներեն ալ երկու հարյուրեն մինչև երկու հարյուր հիսուն բեռ ցորյան և այլ արմտիք եկած է, իսկ դիմացն ինն հարյուրեն մինչև հազար բեռ ցորյան կերթա, բացի այլ և այլ արմտիքներեն, վիճակներեն եկած յուղն ալ առատ տարիներ մինչև հարյուր հիսուն լիտր հասած է. վանքիս ոչխարներեն ալ երկու հարյուրեն մինչև երկու հարյուր հիսուն լիտր կգոյանա, որ վիճակներեն եկած յուղերուն հետ հազիվ կը բավականանա։ Չմոռանանք հայտնել Ձեր սրբազանության, որ վանքիս յուղ, պանիր և մածուն մատակարարող հազար հարյուր երեսուն ու յոթ ոչխարներ և անոնց հետ տասնուվեց բեռնակիր ձի, քսան փայտակիր ավանակ, տասն ութ կթան ու լծկան տավարներն ավարի գնացած լինելով և քսան և հինգ մշակներիս ալ երկիցս հոտից ցգլուխ կողոպտվելով և բոլոր երկրագործական գործեաց և ագարակային կահ կարասյաց հափշտակելովն վանքիս վիճակն խիստ փոխված է և հետին ծայր նեղության մեջ կը գտնվի, ինչպես որ փոքր ի շատե անձամբ ալ հասու եղած է Ձեր սրբությունն։ Վանքս երեսուն երեք կտոր արտ (ութսուն քիլա սերմ վերցնող, մեկ քիլան տասնուվեց լիտր է) երկու այգի և տասնուչորս կտոր խոտնոնց (մարգագետին) ունի, երեք հարյուր բարդեն ավելի խոտի տեղ է։ Երկու հարյուր բարդ խոտ բերող մարգագետին մի ալ Գումբեթներ ըսված լեռնավայր տեղն կը գտնվի, վանքիս սեփականություններեն ներքին ու վերին Կուառսցի քուրդերեն հափշտակված է (Վերին Կուառսը ներքին Կուառսեն գաղթողներն են)։ Ներքին Փակահի շրջակայքն ալ ունի հարյուր քիլա սերմ առնող երեսուն կտոր արտեր և չորս հարյուր բարդ խոտ տրվող յոթն խոտհունձ մարգագետին։

Վանքիս հողային շրջապատ յոթնեն մինչև ութ ժամ գրեթե կհասնի բոլորակ ձևքմ առնելով։ Իսկ վանքիս միաբանության ներքին և արտաքին գործակալաց և մշտական ցուցակն հետևյալն է։ Մեկ վանահայր, տասնևութ վարդապետք որք վանքին ներքին պաշտոններ կվարեն և փոփոխակի նվիրակություններու կելլեն, մեկ ավագ սարկավագ կառավարիչ է դպրոցին, հինգ սարկավագներ, որոց երկուքն դասախոս են ի դպրոցն, մեկ քահանա վարժապետ ի դպրոցն, երեսուն աշակերտք, մեկ սպասավոր դպրոցին, քառասուն ներքին գործակալք և սպասավորք վանքի մեջ, տասհատ կաղ և կույր անկյալներ, որ վանքիս հացով ջրով և հանդերձիվ կը պահպանվին, տասն լվացարար տնտես կանայք, քսանութ արտաքին վարձկանք, զորօրինակ իշապանք, ձիապանք, հովիվք, սեյիսք, պարտիզպանք, և այլն, երեսունվեց մշակք, հոտաղք, պահապանք և տնտեսք, երկոսին փակահս և այս ամենու գումարն է հարյուր ութսուն անձինք, ի վանս և երկոսին ագարակս։

1878 հունիս 6 ի վանս
սբ. Կարապետի

| | |
|---|---|
| Անդամք տնորեն ժողովս | փոխանորդ |
| Եղիշե վարդապետ Պալունի | Ներսես վարդապետ Խոսխոռունյանց |
| Մովսես վարդապետ Առաքելյան | Հակոբ վարդապետ Գրիգորյան |

Ազնիվ հայ կարդացո՛ղ վերոհիշյալ նամակն և իհարկե կուզես իմանալ հիրավի ճիշտ գրվա՞ծ է սբ. Կարապետի վանաց ելքն ու մուտք։ Ձեր հետաքրքրությունն հագեցնելու համար կսեմ, որ բավական համեստությամբ գրված էր, միայն իբրև ծանոթություն և այն շատ չափավորությամբ, դրամական մասն կրկին կլինի ուխտավոր եկած ժամանակ և մեր հայր սուրբներ մոռցեր էին հիշել, որ միայն հար-

յուր հիսուն հազար ղուրուշ ոչխարի արդյունքն է, կաթն ու սեր, իրենց, մածուն ու թան այլոց. այլ անոնց բուրդ, գառներ և մյուսներ, որ ուխտավորաց կծախվին, հիշյալ դրամին հավասար են, իսկ վանքին մեջ գործածելու համար միան, արդեն հոգեբաժիններեն կուգա և խոստիկներեն, որոնք նույնպես մոռացեր էին հիշել, մեք տարիներով թե Մշո քաղաք և թե նույն վանք մնալով ի մոտո տեղեկություն ունիմք անոր տնտեսության ամեն մասերուն, պտղներն ու յուր արտերեն եկած արմտիք, իրավ է որ կսեն թե հազիվ վանքին բավականանա, արդեն իմացանք, որ հարյուր ութսուն մարդ վանքեն հաց կուտեն շարունակ, անոնց մեջեն միայն դպրոցի երեսուն տղաքն հա՛ն և մնացյալներու ընտանիքներն ալ վանքեն կրկերակրվին, կուզեն կտանին, եթե չտան գողնան կտանին, այս անհերքելի ճշմարտություն մի է։

Սիրելի եղբայր, չե՞ս հարցուներ ինձմե, թե այդ հարյուր ութսուն մարդն ավելորդ չէ՞ նույն վանքին համար, այո՛ պետք է հիշյալ վանուց երկու փակահներ վարձու տան հայոց և նույնին հողային արդյունք առանց հոգնության ու ծախուց կեսն առնին իրենք և վանքի մեջ ունենան օրինավոր ժառանգավորաց դպրոցմ, 20 աշակերտ, 2 կառավարիչ և վարժապետ, եղավ 23։ 10 վարդապետ, 3 հացարար, 3 ջրաղացպան և խոհարար, 8 ձիապան և էշպան, 10 հովիվ և շոշոտար, պատսպարյալ և լուսցարար, գումարն ըրավ 57, շատ աղեկ, թերևս այո շատ ճշտությամբ եղավ, 57-ի վրա քսան երեք անձինք ալ այնպես ավելցունենք որ առաջնորդ կա, փոքրավոր կա և այլն։ Կնե՞ ճիշտ 80։ Ըսել է այն կողմ կմնա հարյուր շունչ ավելի, որ վանուց բոլորովին վնաս է, միջին հաշվով, ամեն մեկն հազար դահեկան ծաղք ունին, ի բաց առյալ իրենց ուտել ու խմել, տանելն ու գողնալ, ահա այսպես իզուր տեղ հարյուր հազար ղուրուշ կվատնվի, ես պաշտոն չունիմ հաշվո մտնալ, բայց իբրև հայ կսիմ, որ փոխանակ այդ հարյուր հազարներ իզուր կորսնցունելու, կրնան նույն դրամով տասն ու քսան դպրոցներ բացվիլ ի գյուղորայս Մշո թեմին, որո կաթն ու կարագ, հացն ու բարին սբ. Կարապետ կուգա ամեն տարի և ինք բնավ այդպես



բարություն մ չունի գյուղացոց համար.... Սբ. Կարապետի եկեղեցին հոյաշեն է և սյունազարդ ի ներքուստ գմբեթարդ, յուր միջին գմբեթն շարժեն խոնարհեր է. գեղեցիկ սրբատաշ քարերով շինված զանգակատուն մի ունի, ավագ խորանն վայելուչ խաչկալ մի ունի ամենանուրբ ճաշակով շինված, վանեցի ճիտաշիմ[61] Մարտիրոսին շենքն է, որուն վրա յուր բոլոր հանճարն ի գործ դրած է և զայն գրեթե ավարտած միջոցին կիյնա բարձրեն ու կը մեռնի. եկեղեցվոյս մեջ տեղավորված են Մամիկոնյան զորավարաց և իրենց ամբողջ իրս հանգուցյալ բարերարաց նշխարքներ, որք մահարձան չունին և միայն հատակաքարերու եռանկյան և քառանկյան շարքերեն կնշմարվի. զոր տեղացիքն ցույց կուտան, ապա թե ո՛չ արդեն գորգերով ծածկված լինելով ոչ՝ ոք չգիտեր։

Եկեղեցվոյս յաջ և հակ շինված են երկու գմբեթարդ փոքրիկ, բայց փառավոր տաճարներ, աջակողմյանն սբ. Ստեփանոսի անուան ընծայված է յուր շիրիմն լինելուն համար, ձախակողմյանն նվիրված է հանուն սբ. Կարապետի և յուր գերեզմանն հոն է, նույնին ձախակողմն է հանգիստ սրբոյն Աթանգինե հոր, սույն տաճարիս ընթեր կան նաև երկու մատուռներ, առաջնոյն մեջ է Վարդ Պատրիկի գերեզման, որն որ ավանդատուն կը համարվի, իսկ հարավայինն շնորհված է անվանն սրբոյն Գեորգա, որո համար կսեն թե սբ. Լուսավորչի առաջին աղոթատեղն է եղեր, դրսի բակ սբ. Հարություն անուն փոքրիկ, բայց գեղեցիկ տաճարիկմ ևս կա գմբեթավոր ու կսեն թե Լուսավորիչն է շիներ, շենքն նոր է և նախապաշարյալներ վախցունելու համար կըսեն որ տեղվույս հին դեռեր, կալեր ու կապեր դրեր է սորա հիման տակ, տարին մի անգամ պատարագ կլինի այս տեղ։ Իսկ վանքիս հարավային պարսպեն դուրս աղբյուրներուն մեջ շինված փոս տեղմ խղիկմ ևս կա, որ յոթն խոտաճարակաց գերեզման կհամարվի։

Վանքիս դեպի արևելք տարածված ձորակին մեջ անորմե քառորդմ հեռու սբ. Սարգիս անուն եկեղեցիմ ևս կա, ուր կժողվեն երկրագործական սարածք ու վանքին ոչխարներ հոն

կմագռչին ու կը կթվին և սույն ձորակի ավարտ, որ մեկ ժամեն ավելի կտևէ վանքես շինված է սբ. Կարապետի փակահներ, ուրտեղեն տարին քանիմ հազար բարդ ամենաընտիր խոտ կը քաղվի նույնի անասնոց համար, որն որ ունի նաև ամենաարգավանդ վարելի ու ցանելի հողեր, որք անտեր կմնան, ինչպես որ տեսաք վանուցս տնորեն ժողովո հարցված տեղեկութիենեն։

Սբ. Հովհաննու կամ Եղրդուտի վանք[62]. վանահայր Առաքել վարդապետ, սոյն վանք Մշո երեք ժամ հեռի արևմտյան կողմ Տորոս լեռանց սպառվածքիմ գագաթ շինված է, սիրատարփ անտառներով ու մացառներով շրջապատված յուր բոլորն ու պռունկ սքանչելի է, մանավանդ յուր օդն ու ջուր աղնիվ է և չնաշխարհիկ, ունի յուր շրջապատ քանիմ ընտիր արտավար հող, որ անեղուգական են և ամեն տարի կցանվին, այս վանքն ալ յուր համն ու հոտն ունի։

Սույն վանքն այլ կասեն թե սբ. Գրիգոր Լուսավորիչն է շիներ, ունի խրթին ու մթին դարպաս մի, բայց յուր սբ. Ստեփաննոս տաճարն խիստ շքեղ է, գմբեթազարդ և հոյակապ, այլ ավա՜ղ քայքայվելու վրա է, յուր տանյաց արապահներու քարերն Անի քաղաքի եկեղեցյաց պես հետզհետե հոսվելով օրմ բոլորովին ավերակ կդառնա և այն օր շատ հեռու չէ, ստույգն ասե՛մ, այս աննման տաճարն Մշո հայազգի ժողովրդեն ավելի անխնամ մնացած էր։

Վանքս ունի 1 տասներեք միահարկ և կրկնահարկ քարաշեն սենյակներ, տնտեսատուն և ախոռ և այլն, ունի ընտիր գյուղիմ հող, որ թափու եղած է վանուց վրա և ուր 35 տուն հայ երկրագործներ կան ու զան կմշակեն, արդյունք կը կիսեն վանուց հետ, վանքս ունի այժմ 300 ոչխար, 10 գոմեշ, 15 կով, 25 էշ ու որթիկ, 6 ջորի, 3 ձի և անոր կրկինն ավանակ։ Միջին հաշվով սոյն սբ. Յովհաննու վանք տարին 120 հազար ղուրուշ եկամուտ ունի, ունի մեկ վանահայր, 2 վարդապետ միաբան, 8 աշակերտ կամ փոքրավոր, 10 միաբան, այս է խոտաղ, մշակ, դռնապան ու տնտես։

Թեև անվանական վանահայրն է Առաքել վարդապետ, արդար ու անարատ մարդն, բայց վանուց կառավարություն



ամեն Պաղտասար անուն ապիրատ վարդապետին ձեռքն է, սբ. պարտքմ կհամարիմ հիշյալ վարդապետին նկատմամբ երկու խոսք խոսիլ, Պաղտասար վարդապետն երկայնահասակ, թավամազ և բոլորովին ռամիկ մեկն է, առ գրեթե վաթսուն տարեկան կա, բաղդ ունեցած է միշտ այս վանքս մնալ, ուտելու, խմելու, խաբելու համար ոչ կարդալ գիտե և ոչ քարոզ, բայց խորամանկությամբ և բարբարոսությամբ խեղճ վանահայրն ծալեր և գյուղացիք զվարճացուցեր է, ամեն խարդախներու հետ դաշինք ունի, որով հանգիստ ու ապահով նաղարեն կախեր այլոց վիզ, ինք նստեր ազատ ու համարձակ ուրախության ու կենաց կնայի, բայց որո՞ հոգ, ո՞վ պիտի հարցունե, ազգային վարչություն այս վանքիս հաշիվն ե՞րբ պահանջեց, գիտե՞ այս անպիտան մարդ ի՞նչ կնե...

Վշտակից բարեկամ, ներել կաղաչեմ, որ ես բնավ այն ծուռ գաղափարն չունիմ, որ մեկ դաս կթնականներն իբրև գերբնական էակմ դիտեմ, այլ ես գիտեմ զանք ինձ պես, բեզ պես և պես-պես, շատ մարդկանց պես, հետևապես ես զանոնք իբրև անսխալ էակմ չեմ կրնար ըմբռնել, ուստի ազատ գաղափարով կրնամ անոնց վրա իմ դիտողությունիս հայտնել հրապարակավ և ասել ազգիս, ազգդ իմ սիրեկան դու պետք է քու ամենամաքուր ուշադրությունդ դարձնիս դեպի քո վանքեր, հիշե՛, որ մենաստաններ մեր դպրավանքերն են, որ միայն ազատ մնացած անազատ մարդոց ձեռք, այն տեղեր ծաղկեցան անմահն Ոսկեբերան, Սահակ, Մեսրովբ և բոլոր թարգմանիչք և իրենց ոսկեղինիկ աշակերտք, որք մի առ մի չեմ ուզեր հիշել, այն տեղեր կրթեցին իրենց սիրտն ու միտք և նովավ ազնվացուցին և լուսավորեցին իրենց ցանկալի հայրենիքն։

Ուրեմն պետք է անմիջապես քու կորովն և ուժդ ամփոփես և ուշիմությամբ սույն լուսո վառարաններու բարոյական զարգացման ամենայն զորությամբ աշխատիս նորոգելով, իրեն հիմն վերածել նախնի փրկավետ դրության, հասատատե՛ այն տեղեր օրինավոր և հիմնավոր դպրոցներ, նյութականն չի պակսիր, խնամ տա՛ր իրեն և քու շտեմարան-

ներդ պիտի լցվին թե նյութական և թե բարոյական մթերներով։ Թո՛ղ խնամվին վանքերդ աշխարհաշեն ազգասիրաց հսկողությամբ, կրթվի հայ տղան և ելլե յուր հանճարն ու լույս տարածե կարոտելոց, մենք այսօրվանօր միլիոնավոր ուսման ծարավի ժողովուրդներ ունիմք, անո՛նք, անո՛ք քեզ կըսպասեն, դու ապագային պատասխանատուն ես։

Կարեկից եղբայր, դու տեսար Մշո աշխարհի և այն միայն Զուխուռա և դաշտի հարյուրավոր գյուղերն, որ դպրոց չունեին, վարժապետ չունեին ու միայն գոհ մի՛ լինիր գիտենալ թե, գեղեր ունիմք, քաղաքներ ունիմք, դաշտեր ունիմք, վանքեր ունիմք. ինչպես մարդ մի ըսե, թե շատ զավակներ ունիմ, բայց մեռած ու կորած են, այդ տենչակսին հույսերով մի խաբվիր շատ աղեկ գիտցիր, որ իրական բանմ չունիս այսօր և հավիտյան ունենալու չես, եթե պաղտասարներու պես մարդիկ սնուցանես քու մենաստանիդ մեջ որոնք իրենց շահաստանն համարելով քու կյանքդ կվտանգեն ու դու միայն գոհ կլինես գիտենալ թե պոռնիկ Մայրամու Հիսուսի սբ. գլուխն օձելի յուղի շիշն հոն է...։

Մեր ազգն կհարցունե՞, կտեղեկանա՞, թե Եղրդուտի վանքն դպրոց ունի՞, աշակերտ ու վարժապետ ունի՞, ի՞նչ դաս կառնին։ Վարդապետներ քարոզ գիտե՞ն, ժողովրդյան այցելություն կնե՞ն, անոնց բեկյալ սրտեր կբուժեն, իրենց խոսքովն ու գործով, է՞հ, ես աղեկ գիտեմ, որ իմ սիրելի ազգային վարչություն զասոնք հարցնելու, տեղեկանալու և ազգին պահանջածին պես կարգադրելու ժամանակ չունի։ Հոգ չէ, օր պիտի գա, որ ժամանակն ինքնին գործադրե, բայց հանչափս տուժվելեն ետք, չեմ ուզեր այս սև քողն խոպառ վերցունել, հեղձամղձուկ կլինիմ ու կմնամ ապագային։

Առաքելոց վանք[63], վանահայր իշու տղա մականուն Հովհաննես վարդապետ։ Սույն վանքս Մուշ քաղաքեն երեք կես ժամ հեռու դեպի արևելք Տորոս կամ Ծիրնկատար սարի բարձրադիտակ լեռնստիքիմ վրա կառուցված է սխրալի ճաշակովմ, բյուրավոր ծառներով ու ծաղիկներով զարդարուն, Վանա կապուտակ ու իստակ ծովակին սյուքովն և Տորոսի եղովն ու մեղրով կշտացած, Մշո դաշտի նախնի



վանակներ ու գետերն մարդուս սիրտն ու սավատ կխլեն ու սիրահարն, որո շարան շարան գյուղերն, առատ ու հորդ կալանան հավերժից աշխարհ, յուր լեռներն խոտերով լի ու սիրելի, ծաղկանց հոտովն ու անուշությամբ փարելի և սիրալի, մացառներն ու անտառներն երկնային մանանայով լվացված ու շաղված, մուսայից կերակուր կազպեով ու պուտներու նեքտառներու հանգոյն քաղցր ջրերով լվացարան ու երգարան.—որ են մեր հոգետավիղ սրբոց Թարգմանչաց լսարանն ու հանգստարան։

Վանուց շենքերն սրբատաշ քարերե են, որպես վերոհիշյալ վանքերուն, այս վանքն ալ հայաստանյաց հայր Գրիգոր Լուսավորիչն շինել տված է, իբրև գոթող անմահության յուր բազմերախտ ջանիցն ու քրտանց, շատ սիրուն եկեղեցիմ ունի, որ երբեմն-երբեմն նորոգված է, ունի նաև գմբեթարկ և սրբատաշ քարերով կառուցված բարձրագագաթ տաճարմ, որ կարծես միապաղաղ ձուլածոմ է, հրաշակերտ ու աննման, որո մեջ չորս դարաններ կան և երկու կողմ ի հյուսիս և ի հարավ երկու սբ. ավետարանչաց, Մարկոսի և Ղուկասու նշխարահանգիստ շիրիմներ, իբրև բուրումն ունենալության Հայաստան երկրի և երկոտասան առաքելոց սրբոց մասունք, որ սուրբն Գրիգոր ամփոփեր է նույն տաճարին հիման տակ, իբրև խորհրդավոր կնիք քրիստոնեական հավատո հաստատության հայ եկեղեցվո, որք երբեմն պարթևական տեսանողն ի ձեռեն օրհնեց ու ինքեց Տարոնո աշխարհն։

Այս եկեղեցին ունի նաև սյունաղարդ զանգակատուն մի։ Վանքիս պարսպեն ներս տասներեք սենյակ կա միաբանաց և ուխտավորաց և այն շատ անփառունակ։ Տաճարին ետև բանիմ հատ հսկայադիր վեմ քարեր և խաչաթոռներ կան որոն[ք] կվերաբերին Դավիթ Անհաղթ, Խորենացվո, Մամբրեի, Եղնկա Կողբացվո, Հակոբա Մշեցո, Ղազարու, Գրիգոր Ճոնի, Ասողկա, Գրիգոր Տարոնացվո, իշխանացն Սահակա և Համազասպա, համբոյր ձեր շիրիմին ո՛ հայկական գրականության սուրբ հերոսներ։

Վանքս ունի նաև երեք մատուռներ՝ սբ. Ստեփանոս, սբ. Գևորգ և սբ. Աստվածածին այլ անշեն և ավերակ քանիմ մեղրածորան լոյս աղբերակներ իբրև ուխտատեղի համարված, գուցե ի նախնում բանաստեղծության տեղ եղած, տեղեր ուր թռչունք ու սոխակք անդադար կըգրգռան, խառնելով իրենց նվագն առ ջուրս աղբերացն կըլկլակ իբրև եղեմի դաշնակություն, որով մարդուս միտք կսխրացունին և սիրտ կսլացունին երգիչ դառնալու։

Վանքս իբրև բուրելի սեղան զարդարված է նյութապես և բարոյապես ունի 9 աշակերտ, 3 մշակ, երկու տնտես, 2 հովիվ և քանիմ պատսպարյալներ, ունի 120 ոչխար, 3 գոմեշ, 8 եզ և քանիմ կով։ Եվ քան զամեն ավելի կարևոր ունի ընտիր ագարակմ, որ իրեն ընդարձակությամբ և բեղմնավոր հողերով անդուգական է, որո արդյունքով կրնա գիշերօթիկ դպրոցմ կառավարելու և կարծեմ մեկ երկու տարի առաջ, այս է պատերազմեն առաջ ունեցեր է քանիմ աշակերտներ, բայց վերջ նեղի մնալով ցրվեր, ավելորդ է սբ. Հովհաննու վանա նկատմամբ այստեղս ասոր համար ալ կրկնել։

Մանրություն.

Մեր ի Մուշ քաղաք եղած ատեննիս, այն է հունիս 4. 1878. արքունին զորաց հրամանատարն, տեղվոյն մյութեսարրիֆ, Մամբրե եպիսկոպոս և Վարդան աղան իբրև զբոանք սույն վանքս կերթան և ամոթալի պահանջիմ համար Հովհաննես վարդապետն մահու չափ ծեծել կուտա, հիշյալ հրամանատարն Մամիկոնյան աղայն ու սրբազան բնավ միջամտություն կամ միջնորդություն չեն ըներ։ Այս արկած ականատես մարդիկ եկան մեզ պատմեցին և ավելցուցին, եթե երեկոյան խավարն չը լիներ ու վարդապետ մացառներուն մեջ չփախեր ու ընկզմեր, անպատճառ զինք կմեռցնեին, սույն հրամանատարին և յուր զորաց հուդած չարիքն ամենեին աննկարագրելի է և այլ սեամորթ լեգիոնին անբարոյական կրից բոցն ոչ թե միայն հայոց սրտերն կայրեր, այլ թե նոյնին կրակ ընդհանրապես կծավալեր ու կմաշեր նաև տաճիկն ու քուրտ հավասար, վերջիններն ի լերինս սուզելով ազատված էին, իսկ վերջինն իր հիշյալ դասալիք զինվորաց ձեռք մատնված կմաշվեին, պատկառանք թող չի տար ինձ մի ըստ միոջե ասել իրենց արարքն և եթե



## Մատնավանք կամ Մատնավանք Մշո

Ոմանք կուզեն ասել թե սբ. Գրիգոր Լուսավորիչն Կեսարիայեն վերադարձին սբ. Հովհաննու մեկ ճկույթ մատն տեղս ամփոփելով Մատնավանք ըսված է և այլք նույն սբ. Կարապետի մանր մասունքներուն համար Մանրավանք ըսված է, թե այսպես և թե այնպես, այլ թե սույն վանքս շինված է սբ. Սահակա հարավային սահմանին անմիջապես կից Եփրատ գետին մերձ ամենասիրուն հովտիմ մեջ և տեղ տեղ նշմարված շինություններու բեկորներ ցույց կուտային, որ Աշտիշատին տներու շենքերն մինչև սույն մենաստանը կը տարածվեին երբեմն։

Սույն վանքս ունի նազելաշուք գմբեթարկ եկեղեցիմ սրբատաշ քարերով շինված զոր տեսնողն կկարծե միակըստուր քարե կերտված է, արտաքուստ շատ սիրուն է, բայց ներքուստ անզարդ և անշուք, ունի նաև քանիմ քարաշեն միաբանաց և ուխտավորաց սենյակներ և այնք ևս խարխուլ փլլփլած ու աղփոտած։

Վանքիս վանահայրն է Մկրտիչ վարդապետ Բագրատունին, միաբան չունի, այլ թե քանիմ վարձկան մշակներ և տնտեսներ, վանքս ունի 125 ոչխար, 8 կով, 11 եզ, 6 գոմեշ, 1 ձի և չորս ավանակ, ունի յուր շրջապատն հինգ հարյուր արտավարեն ավելի ամենաբեղմնավոր մշակելի հողեր, որք հիշյալ վարդապետն յուր անվան թափու ընել տված է, որուն համար դիտել կուտային ինձ ոմանք, թե շնորհիվ և ողորմությամբ հայ ազգին հիշյալ վանահայրն ինչպես որ վանուց շարժական կալվածներն հետզհետե ճերմակ ճերմակ օղիի տվեր ու լափեր է, կհուսացվի, որ անշարժներն ալ անոնց բաղտին պիտի տիրանան։ Ամենադյուրին հաշվով վանքս տարին 45 հազար դահեկան եկամուտ ունի և կրնա կրկնապատկել, եթե հաջողություն լինի։

---

քու սիրտն երկաթ, պողպատ լինի, դարձյալ փշուր-փշուր կլիներ, զի կրկրացվոյն ամեն ինչք հափտված էր ու գերված հավել ասել և մեռած։

## Մշո Բոնաշեն գավառ

Այս գավառս վեց ժամ հեռու Մուշեն, անոր արևմտյան հարավ Տորոսին շղթաներու անհնարին խառնության մեջ, ոյր անմատչելի են շատերուն, իրենց վայրագ դիրքերուն և ծառախիտ անտառներուն համար, տեղվոյն օդն ու ջուր սքանչելի են, տեղացի հայն ու քուրդ ընդհանրապես կայտառ են ու զվարթորք մասամբ իվիք սաղտ են քաղաքական վարչության բռնութենեն և տանուտերական իշխանությամբ կը կառավարվին իրենց վարիչ ընտրելով փոխընդփոխ, երբեմն հայ և երբեմն քուրդ իշխանները ընտրելով, բայց երկու տարինե ի վեր է այս, որ իրենց սիրելի ազատությունին կորուսած են, այժմ տաճիկ գյուղապետ կնստի հոն ընդ հրամանատարության Մշո գավառապետին։

### Գյուղորայք Բոնաշենու

| | | | | |
|---|---|---|---|---|
| Օղուա | թիվ հայոց | 140 | եկեղեցի երկու | սբ. Ստեփանոս<br>սբ. Կարապետ |
| Կծանք | » | 95 | « | սբ. Կարապետ<br>սբ. Գևորգ |
| Տաշտաղեմ | » | 40 | եկեղեցի մեկ | Մինաս |
| Ղորավա | » | 45 | » | Թորոս |
| Կոստ | » | 60 | » | Աստվածածին |

Մանոթություն.

Կոստ, Արիկոնք, Մահպուպան, Ջերո, Կիրոնդ և Մեզրեի ժողովուրդ սասունցի և պելեքցի քրդերեն անհնարինս նեղվելով ցիր ու ցան եղեր են, թող տալով իրենց ամբողջ անշարժ կալվածներն ու եկեղեցիք, որ ցարդ շեն են, միայն Կոստ գյուղի շրջակայք վեց եկեղեցիք կան. սբ. Դալիլա, սբ. Տանեղբայր, սբ. Ստեփանոս, սբ. Կարապետ և այլն...

Բոնաշեն գավառս ուներ ամենագեղեցիկ շեն վանք մի սբ. Աղբերիկ անուն65, որ ներկա պատերազմի միջոցին քրդեր յուր ամեն կահն ու կարասիք ու ոչխարն ու տավարն հափշտակեր ու վանահայրն հալածելով ավերեր են բոլորովին։ Եվ այժմ այնպես լքյալ կմնա ցավ ի սիրտ հայոց։ Սույն վանքս սբ. Թադեոս Առաքյալվոյն օրով Թառնիկ իշխանն շինած էր յուր որդին բժշկելոյն համար. ա՜հ մորմոքիմ ասել հայոց ազգի անմահության արձաններն այսպես հետզհետե կըմաշվին ու կավիրին։



| | | | | |
|---|---|---|---|---|
| Ընկուզիկ | » | 84 | » | Ստեփանոս |
| Արտոնք | » | 48 | » | Մինաս |
| Բլրիկ | » | 29 | » | Կարապետ |
| Մեզրե | » | 35 | » | Կարապետ |
| Հընդկձոր | » | 21 | » | |

## Խոյթ գավառ

Այս գավառն, որ նախընթացեն ավելի բարեշեն է յուր սահմանն նմա սահմանին կից է և երբեմն մեկ գավառ հաշված էր, բայց այժմ զատ գավառ համարված է, հինգ ժամ հեռու Մշո քաղաքեն։ Երկիրն ընդհանրապես լեռնային է և անտառային, բայց և այնպես պտղավետ և արգավետ։

### Գյուղորեք Խոյթա

| | | | | |
|---|---|---|---|---|
| Լորտնձոր | թիվ հայոց | 132 | եկեղեցի մեկ | սբ. Հովհաննես |
| Գիդոնք | « | 42 | | |
| Թաղվու | « | 175 | « | սբ. Հակոբ |
| Թաղավանք | « | 224 | « | Ստեփանոս |
| Շենիստ | « | 145 | եկեղեցի մեկ | սբ. Աստվածածին |
| Պապնթաղ | « | 21 | երկու « | սբ. Կարապետ<br>սբ. Կարապետ (ավեր.) |
| Թաղաձոր | թիվ հայոց | 105 | եկեղեցի մեկ | սբ. Կարապետ |
| Բերեվու | « | 28 | երկու « | սբ. Սիոն և սբ. Սարգիս (ավերակ) |
| Շեն | « | 96 | եկեղեցի մեկ | սբ. Ստեփանոս |
| Փիճոնք | « | 98 | « | Թովմաս |
| Ակրակ | « | 140 | « | ավեր. |
| Կոր | « | 28 | « | Քառասուն Մանուկ |
| Փեզոնք | « | 21 | | |

Մանոթություն.

1 Այս գյուղերեն ի զատ լերանց խորշեր 5—6 քրտերու փոքր գյուղեր ալ կային, բայց նոցա անուններն և բնիկներու թիվն ստույգ չկըրցինք իմանալ։

2 Շամրան գյուղին մեջ սբ. Հարություն անուն հոյակապ եկեղեցիմ կա, բայց տեղ հայ չգտնվելուն համար քրդաց ձեռք մատնված է։

## Շատախ գավառ[67]

Վերոհիշյալ գավառներու դրացի գավառ մի է, դարձյալ Տորոս լեռանց մեջ իբրև վարդի կլոր փունջմ իրենց նկարին ծոցերուն ի ներս ծվարած, Մուշ ավանեն վեց ժամ հեռի, որուն համար կսվի մեր շատախոսիկ իշխանին մականունով Շատախ անվանված է, ասոր ալ շրջապատող լեռներն ու ձորեր սաղարթախիտ անտառներով կուշտ է և սիրասուն, օդն կիսավետ և հովասուն, որով տեղացիք կայտառ են և կտրիճ, լեռնական քրդաց հետ մաքառող և տոկուն, մաքուր հայերեն կխոսին, թեև տարին մեկ անգամ հազիվ քահանայիմ երես տեսնան, բայց ջերմեռանդ և աղոթասեր են, մանավանդ կանայք, հայ ապրելու համար ամեն ինչ կզոհեն և գրեթե մինչև մեկ երկու տարի առաջ անկախ էին և աղատ, միայն մասնավոր տուրք մը կուտային տերության, այն ալ ըստ կամս, այսինքն երբ որ իրենք կամենային, այն ատեն նույն հարկն կվճարեին, այլ վերջերս գյուղապետները հաստատվեցան հոն, հորմե շատ կնեղվին տեղացիքն։

---

3 Փիղոնք գյուղացին հատուկ եկեղեցիմ չունենալուն Փիճոնքի ժամատունն կհաճախին թեև այն ալ ավերակ է։

4 Քրդաբնակ համայն գյուղերեից մեջ հայոց եկեղեցիք անպակաս են, ոմանք շեն, ոմանք ավեր։

5 Խոյթ գավառին մեջ գտնվող Պելեքցի, Տափեցի, Ղութեցի, Սասոնցի և Շեկոյի ցեղ[66] քրտերն ինչպես Կոմկան գյուղի հայերն վատներ ու իրենց սեպհական կալվածները գրավեր են նույնպես Խոյթն ու Բռնաշեն գավառները ուշիկ ուշիկ քանդելու և տիրանալու վրա են։

6 Բնչնարցի, Չեղկոթանցի, Պեքրանցի աշիրեթներ գարնան եղանակին մեղուի երամներու պես կուգան այս լեռներ կթառին և ավար ավեր և հափշտակությամբ կապավինին այս ծաղկափթիթ գավառն, որուն համար հայ ժողովուրդն հետին աստիճան թշվառ է և աղքատ։

7 Խոյթ և Բռնաշեն գավառներու ազգային բարոյական մասին ավելի աղքատ են, քան թե նյութական, ո՞չ թե դպրոց և վարժապետ չունին, այլ թե դաստիարակի անունն անգամ լսած չեն, ունին քահանաներ, բայց ցավալի է ասել քան զգետն տգետ են։



## Գյուղորեք Շատախի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ավկեաբմ | թիվ հայոց | 19 | եկեղեցի մեկ սբ. | Թուխմանուկ |
| Կոփ | թիվ հայոց | 245 | եկեղեցի մեկ սբ. | Կարապետ ավերակ |
| Իրիցանք | « | 140 | « | Աստվածածին հոյաշեն |
| Տափքկ | « | 144 | « | ավերակ |
| Գեղաշեն | « | 151 | « | Ստեփանոս |
| Նուշիամարգ | « | 133 | « | Մինաս կիսավեր |

Գավառիս մեջ սբ. Անթանիա շեն վանք մի կար և մոտ օրերս քրդաց ձեռոք ավերեր է...։

## Մշո Կավառ գավառ

Կավառ Շատախին սահմանակից, Մուշեն մի օրյա ճանապարհավ հեռի, Բաղեշի արևմուտն և Տարոնո հարավային անտառիկ և անառիկ մեկ եզրն, գրած նախկին երեք գավառներեն ավելի դժվարակոխ Տորոսի լեռանց խորշ, որոցմէ կրդխի Սերթ անուն ամեհի գետակն, օդն ու ջուր ամենասիրուն, տեղացիք ընդհանրապես հողագործ են մյուսներուն պես, բայց թանձրագլուխ ու տգետ են և անխնամ։

## Գյուղորեք Կավառի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Աղբի | թիվ հայոց | 315 | եկեղեցի մեկ սբ. | Թորոս (հոյաշեն) |
| Հեթենդ | « | 150 | « չորս | Մինաս և (3 ավերակ) |
| Կելե ըսազ | « | 82 | « մեկ | ավեր. |
| Թբիրիկ | « | 70 | « | ավեր. |
| Խոցոց վանք | « | 175 | « | Աստվածածին հոյակապ |

Մանրություն.

1 Ներքին Ալակյոզ և Խոպախուպ գյուղերն երկու վիթխարի ավերակ ամրոցներ ունին, որք տեսողաց սոսկում կազդեն։

2 Վարդոցիք կպատմեին ինձ, թե ասկե 60—70 տարի առաջ սբ. Հարություն անվանատուն Զարպհոր գյուղի եկեղեցիին մեջ 400 մարդ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ասրեր | « | 140 | « | ավեր. |
| Հասկորք | « | 70 | « | ավեր. |
| Դոմեր | « | | | գյուղն ալ եկեղեցին ալ ավեր. |
| Հոսներ | « | 105 եկեղեցի չորս Եղիա շեն և մյուսն. ավեր. | | |
| Բըվի | « | 70 եկեղեցի մեկ սբ. Աստվածածին հոյաշեն | | |

## Խնուս կամ Հարք գավառ

Հարք գավառն Մարդաղի գավառին արևելք ինն ժամ հեռի է Մուշ ավանեն, որո արևելքն է Հացեաց գավառ Կեռքսու և Թեքմեն, արևմուտք Շուշար և Շատյան գավառներ, հյուսիս Բուրական լերինք և Երասխ և հարավեն Խամուր։ Տեղվոյս վարչություն գայմագամություն է, որ Կարնո կուսակալն կընտրե, իսկ հոգևոր իշխանություն Տարոնո առաջնորդին կվերաբերի։

---

հաղորդություն անող կար, բայց այժմ հոն դեղի համար մեկ հայ անգամ չկա։

3 Խարաճյուղ գյուղի համար կպատմեին տեղացիքն ավանդությամբ, թե Մամիկոնյան անմահ Վարդանին գերեզման հոն է, որն որ քրդաց ձեռքն է իբրև ուխտատեղի իրենց շիրիմին վրա կուխտեն իրենց կենաց ուխտն։

4 Զատ շեխ գյուղն ունի հինգ հատ հայոց եկեղեցի, ոմանք շեն և այլքն կիսավեր, որոց քուրաք բոնի տիրացած են. չեմ սիրեր մի ըստ միոչե ասել Վարդո գավառի մեն մի եկեղեցիք և քրդական գյուղորեք համրել, որոնք արդեն գրեցին, այլ թե Սարտաղի գավառին ընդհանուր գյուղերուն մեջն ալ եկեղեցիք ու գերեզմանատուներ կան, շատերն դեռ շեն, որ գոմ ու փարախ եղած են ոչխարոց ու պաճարոց և այն փոքր խաչվեմերն իրենց տանց շինության ծախեր են, իսկ մեծերն դեռ այնօրս կանգուն կը կենան ամեն տեղ և ամեն դեղ, ավելորդ է ասել, որ նույն գյուղերն առաջոց հայաբնակ էին։ Ազգասեր սրտակիցդ իմ հարկավ նկատեցիր քրդաբնակ գյուղերու շատությունն և բնաջինջերու սակավությունն, ապանք բոնապետաբար տեղվոյն հայ ժողովուրդ հալածեր ու իրենք տիրացեր են այն անմման վայրերուն և չվրիպեցավ քու սրատես ուշիմությենեն, որ մինչև տասն և ինն անձինք կգտնվեին տեղիս տեղիս և անունն ալ գեղ էր, ուր հինգ հարյուր և մինչև հազար հոգի կրնային հաստատվել և ծաղկի պես երջանիկ ապրիլ, ահա ասոնք բոնի որջացեր են նույն անօգուտ վայրեր, ո՛չ կվարեն և ո՛չ կհնձեն, այլ աստի ու անտի գողնալով կապրին ազատաբար։



Հարկ չէ ասել, որ Հարք գավառն իր գավառակներով (որ վերոհիշյալ Թեքմեն, Կեռքսու, Շուշար, Շատյան և այլն իրեն հսկողության տակ են) խուռն ու խորոտ գյուղերով, ծաղկազարդ լեռներովն ու բլուրներով, ոսկեփայլ գետերով, վտակներովն ու ջրերով, ընդարձակ ծավալովն ու բյուրաբերությունն հողովն ու ջրով, ոգեպարար և կենսատու կլիմայովն ոմանց երևակայած հավերժականության հուրիներեն ամեն մասամբ ավելի սիրատարփիկ ու գեղեցիկ է իբրև Եդեմի անդրանիկն և կամ թե նույն իսկ երանավետ դրախտ, արդեն նորա մասին առաջուց փոքր ի շատե գրած եմ ու չեմ սիրեր դարձյալ կրկնիլ, մանավանդ թե չեմ ուզեր վիպասանիլ այլ կփութամ իմ պարտուց անթերի և ընդ փոյթ կատարման պատուշիլ, թող տալով յուր երգն հայրենասիրաց հրատոչոր ղգացման և փայլուն գրիչներուն։

Հարք գավառի լեռներն են. արևելքեն Փալան Թեռքանի սեպասիլ լեռներ և յուր գոտին առաջ շրթներ, արևմուտքեն Շուշարա և Շատեռնո շուշանգեղ սարերն ու շրթներ, հարավեն Խամուրա խորոտ ու խոտավետ լեռնակներ և հյուսիսեն արդեն մեր նախածանոթ Բյուրական լեռներ որպես պուկ ի գլուխ Հայաստան աշխարհին, հորմե կուռճանան և կհառաջանան Եփրատ, կամ Մուրադ գետի ոսկինկողմ չորս օժանդակ վտակներ, որո առաջինն Պաշ գեղի կուսասրթիկ երես լվալով և համբուրելով կհասնի Մժնկերտի կանաչ ձոր և մյուսն Խնուսա դաշտերու մնացյալ մասերն ոռոգելով, հաղթանակավ մը Մժնկերտու սբ. Կարապետի վանաց հանդեպ կուգա առաջնոյն կխառնվի. երրորդ վտակն Բաթման սուի հորեն ավալ թավալ սուրալով իբրև ավետավոր Փայիկ Միչեվերմե գյուղին քով կհասնի ու կգրկե առաջիններ, իսկ չորրորդ վտակն Ղզլաղաճ ձորեն կափկափելով ու պռռալով կուգա Շապատինի վերև եղբայրաբար կմիանա մյուսն երեք ճյուղերուն և կը կազմեն Մուրատ գետ։

## Գյուղորայք Հարք գավառի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Խըրմ Խայե թիվ | | հայոց 140 | եկեղեցի մեկ սբ. | Կարապետ |
| Բաղքիկ | « | 280 | « | Կիրակոս |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Սալոր | « | 70 | « | Աստվածածին |
| Շապաձին | « | 210 | « | Կարապետ |
| Խարա Զոպան | « | 840 | « | Հակոբ |
| Մաարուֆ | « | 210 | « | Թուխմանուկ |
| Կեռվանտուք | « | 350 | « | Գեորգ |
| Ըսպահան | « | 140 | « | Մարուքե |
| Եղկարա* | « | 70 | « | ավեր |

## Վարդո կամ Մարտաղի գավառ Մշո

Սույն գավառս Մուշեն ինն ժամ հեռու դեպ ի հյուսիս և Պինկոլ[68] անվանի լերան հարավային ծաղկածոց բազկաց ի ափյուռ ղետեղված հովիտ մի է ոլոր ու կլոր, որո շուրջ փռված են բնության անգին զարդերով գեղավորված բլրակներ, հովիտներ ու լեռներ, որպես օգոստաշուք թագաժառանգ ադամանդյա զարդերով կշտացած և որպես հավերժ արքայազն դալար օրիորդք անգին շղարշներով ողողված ի նազ ու ի տնազ շուրջ բոլորած սեղանին հարսանեկան ոտ ու չնաշխարհիկ հանդեսմ կազմելու կպատրաստվին, ոյց կսպասահարկեն մեղրով ու կաթնով, աղբյուրակոք և վտակներով արևելքեն Հարք գավառն, հյուսիսեն լեառն Բյուրական, արևմուտքեն Կենճ ու Պոկլան գավառակներ։

## Գյուղորայք Վարդովա

| | | | | |
|---|---|---|---|---|
| Կոնտե միր | թիվ հայոց | 315 | եկեղեցի մեկ սբ. | Աստվածածին |
| Պաղըկան | « | 525 | « | Սարգիս |
| Տոտան | « | 245 | « | Գեորգ |
| Կումկում | « | 240 | « | Գեորգ |
| Պաղըքան | « | 175 | « | Հակոբ |
| Ամրան | « | 21 | | |

* Սույն գյուղի մոտ անծանոթ բայց հարուստ ոսկիհանք մի կա, միայն նույն գյուղացիքն գիտեն և դիտմամբ այլոց ու կառավարության չեն իմացուներ, որ չլինի թե սկսին նույն մետաղն հանել ու իրենց նեղությունը տան, դառն ու ցավալի է պատմել այս գյուղացոց խավար ու թանձր նախապաշարումները, որոնք զանց կնի ժամանակս սուղ ու կարճ լինելուն համար։



| | | | | |
|---|---|---|---|---|
| Զիթիլիկ | « | 170 | « | Գեորգ |
| Կրլա կամ Բերդ | « | 140 | | |
| Հոդնուա | « | 180 | « | Սարգիս |
| Ալիփիբան | « | 140 | « | ավեր. |
| Հասանովա | « | 143 | « | ավեր. |
| Թոզոլան կամ Թոբզոմին | | 105 | « | ավեր. |
| Ամորան | « | 105 | | |
| Տատուն | « | 8 | | |
| Աղհամելիք | « | 210 | « | Լուսավորիչ |
| Լեք Պուտաղ | « | 42 | | |
| Տուման | « | 280 | « | Թուխմանուկ |
| Ղարա Քեփրու | « | 350 | « | Գեորգ |
| Պուռնաղ | « | 280 | « | Թուխմանուկ |
| Խալիլ Զավուշ | « | 350 | | |
| Հարամիկ | « | 700 | « | Աստվածածին |
| Զեվիրմե | « | 840 | « | Աստվածածին |
| Խոզլու | « | 567 | « | Հրեշտակապետ |
| Խբրթ | « | 210 | « | Թուխ Մանուկ |
| Էլպիս | « | 211 | « | Սարգիս |
| Հարոս | « | 280 | « | Վարդան |
| Սայլու | « | 213 | « | Աստվածածին |
| Կոպալ | « | 220 | « | « |
| Ենինի քյո | « | 210 | « | Թուխ Մանուկ |
| Բահյա | « | 281 | « | Աստվածածին |
| Բերդ | « | 1120 | « | Գեորգ |

## Կեռքսու գավառ

Կեռքսու գավառակն կիլնա գավառի արևելյան կողմ և նորա սահմանակից, բնակիչներն բոլորն ալ քուրդ են, երկիրն խիստ բարեբեր է և մշակելի, ջուրն առատ, հողն բերրուն և օդն ամենասիրուն, բնիկներու մեկ մասն խաշնարած են և մնացյալք մուրացկան ու ավազակ, երկրագործություն մեռած և արհեստ չունին։ Դաշտերն ամայի ու հովիտներ անտեր կմնան, որո ծովածուփ սահմանին մեջ մեկ միլիոն ժողովուրդ կրնա ծաղկիմ պես ծվարիլ ու շահվիլ, Կեռքսու Թեքմեն, Շուշար, Շատյան և Բյուրական լերանց ստորոտներու տարածությունն առնելով Հարք գավառքն նահանգ կըրնանք ըսել, բայց յուր արդի ամայության պատճառով այն ան-

հուն տարածություն գավառ կսեմք, որով սովորեր եմք նաև գավառին գավառակ ասել, գյուղին՝ ագարակ և այլն։

## Թեմեն գավառ

Այս գավառն ալ Կեռքսու գավառակին սահմանակից է և ինչ որ խոսեցանք նմա մասին, այսինքն տեղվոյն դրից բեղմնավորության և երկրի ամբողջ հանգամանքներու նկատմամբ, նույն պետք է ասել սմա մասին, որուն արդի կացություն ճանապարհորդին հույզը կքամե և գլուխն կվերնա մարդուն երբ հայացք մի տա այս լքյալ երկրին մեռած իշխանության վիճակին, որ այս դժբախտությամբ ապրելով մեռած է։

## Շուշար գավառ

Սույն գավառակս կիյնա Հարք գավառին արևմուտք և նմա սահմանակից հարկ չեմ զգար ասել ու կրկնիլ ինչ որ ըսին Քեռքսու և Թեքմեն գավառակներու համար, միևնույն է և այս սիրուն գավառակս, այսինքն անտեր ու անբնակ գրեթե, յուր դարն ու տափի վրա հազիվ ուրեմն մեկ երկու տեղ փոքր արտիկները վարված ու ցանված են, այն ալ վեր ի վերո, մնացյալներն խոպան կմնան...։

## Շատյան գավառ

Այս գավառն ալ Բյուրական լեռանց ստորոտներու գյուղերն ալ քրդաբնակ են և խպառ ամայի, որո համար հավարտ ուղևորությունիս ընդարձակորեն պիտի խոսիմ, ուրեմն կհուսամ, թե պիտի ներվի ինձ այժմ անցողաբար շտապելուս, որուն պատճառն միայն ես գիտեմ։

Հարք գավառ միայն մեկ աննշան վանք ունի մոտ ի Մժնկերտ գյուղն, Բյուրական սբ. Կարապետ անուն, որն որ մոտ օրերս նորոգեր է տեր Եսայի կեսարացի քահանայն, ունի երկու արտավար հող։



## Խամուր կամ Վարաժնունի գավառ

Խնուս կամ Հարք գավառին դրացի, նորա հարավային արևելք շեղված և Հացյաց դրախտի արևմուտք, այսինքն շար փուշ մի մեջ երկու կոկոն վարդին, զի այս գավառակիս բնակիչներն ալ վեր հիշված խոպան դատապորտ քրդերեն են, որ երկրին կարևորություն տալու, նմա ժանտ ախտն եղած են իրենց շարաշուք գողությամբ ու սպանություններով, ա՜հ, երբ բանավոր մարդ, մանավանդ հայ մարդն կըտեսնա այս հատընտիր վայրեր յուր ուղեղն մակընթացություն կունենա և յուր զգացումները կխեղդե և հուր ի սիրտ կխուսափի այն վայրերեն, ուր հայ հիշատակներով զեղուն են, օրավուրն կփոթա և ես հույզյալ իմ գործս ավարտել կաճապարիմ...։

## Պուլանուխ կամ Հացյաց դրախտ

Սույն երկու Պուլանխներն Մուշ ավանեն տասներկու ժամ դեպի արևելս, որո արևմուտքն է Վարաժնունիք, արևելք Ապահունիք, հյուսիսն Բասեն և հարավ Բզնունիք, սույն երկվորյակ գավառներ Տարոնո աշխարհի ամեն տեղերեն բարեբեր, եդեմահոտ երկիր սիրելի Փարազունն պտղավետն Պուլանուխներ, որ յուր ամբարներեն շատ անգամ լիաբուռն ուտեստ կմատակարարե Մշո մնձրված աշխարհին, Սալնոձորո ցրտաբեկ երկրին և երբեմն Վասպուրական Հայաստանին, միով բանիվ իբրև անսպառ շտեմարան համարված է Հայոց տան։ Օդն ու ջուր առատ ու զվարթ, լեռներն ու դաշտեր խոտաշատ ու հուռթ, երկրացիքն ժրաջան և կորովի, հարուստ և հարգի, սոքա ինչպես նաև խնուսցիք պանդխտությունը չեն սիրեր, երբեմն ի ստիպել հարկին հարյուրեն մեկը օտարության գնա, այն ևս հանած վարածներն միայն և այն ալ վերահաս փորձության պատահման կամ անագորույն քրդաց ձեռքեն խուսափելու համար։

Գերդաստանական միությունը ունին և հոյժ աճեցունեն, երկիրն բազմամարդ, գյուղեր խիտ առ խիտ, տուներուն հոծություն իբրև մշտնջենավոր մացառներ և անտառներ

կծփան որքան լույս աչերդ կդորե տեսնալ երեսս ծովանման դաշտաց, որ կճնշվի անխոնջ մշակի և բյուրավոր արոտական խմբի կճղակներու ներքև։

## Գյուղորայք երկու Պուլանուխ գավառաց

| | | | | |
|---|---|---|---|---|
| Յոնճալու | Թիվ հայոց | 1280. | եկեղեցի մեկ սբ. | Աստվածածին |
| | Թիվ աշակերտաց 73, վարժարան մեկ | | | |
| Ոտնձոր | Թիվ հայոց | 800 | եկեղեցի մեկ սբ. | Լուսավորիչ |
| Թեղուտ | « | 1200 | « | Գևորգ |
| Համզաշեխ | « | 1240 | « | Աստվածածին |
| Շեխ Ադուլ | « | 1201 | « | Գևորգ |
| Թաքալու | « | 960 | « | Գևորգ |
| Ղարաղալ | « | 640 | « երկու | Հովհաննես և Լուսավորիչ |
| Մեճիալի | « | 648 | « | Աստվածածին |
| Միրզալուբ | « | 202 | « մեկ սբ. | Ստեփանոս |
| Կոփ | « | 1400 | « | Դանիել |
| Լաթառ | « | 320 | « | Հրեշտակապետաց |
| Բլուր | « | 80 | « | ավեր. |
| Փիրան | « | 160 | « | Հովհաննես |
| Խարապա շեհիր | « | 204 | « | Աստվածածին |

## Ներքին Պուլանխ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Լիզ | Թիվ հայոց | 1468 | եկեղեցի մեկ սբ. | Աստվածածին |
| Վարժարան 1 աշակերտ | | 80 | Մամիկոնյան | |
| Ատկոն | Թիվ հայոց | 680 | եկեղեցի մեկ սբ. | Աստվածածին |
| Խոշ կելտի | « | 690 | « | Աստվածածին |
| Փիոնք | « | 240 | « | Գևորգ |
| Ապրի | « | 320 | « | Գևորգ |
| Բրքաշեն | « | 200 | « | Աստվածածին |
| Պոստաքանդ | « | 200 | « | Հակոբ |
| Մոլլաքանդ | « | 400 | « | Աստվածածին |
| Ագարակ | « | 160 | « | ավերակ |
| Շեխալի | « | 56 | | |

Մանութիւն.

1 Արդեն շատերուն ծանոթ է, որ Հացյաց գավառն մեր Հայաստան գավառներեն գերազանց է յուր ընտիր ընտիր հանգամանքներով։



## Սբ. Դանիելի Մենաստան

Պուլանխա կամ Կոփա վանք, որ համանուն գեղի սահմանակից լինելուն համար Կոփա վանք կոչի, գեղեցիկ դիրքիմ վրա շինված է, որ կհայի Պուլանխա և Մանազկերտ-

---

այսինքն հողով, ջրով տեղով, դիրքով և բարեբերությամբ, ինչպես յուր հաց ու գրախտ անունն ալ կհայտնե, բայց շատ աղեկտուր է տեղացի գյուղական ժողովրդոց չարաշուք վիճակն, անոր համար ինչպես որ պետքն է չեն բարգավաճիր հայեր ու հարստանար, վասն զի*։

2 Վերին Պուլանբխի գյուղեր են. Սուկուտլու, Լաթառ և Համզաշեխ գյուղեր բնակվող Հավիլ տու գրավող Յուսուֆ, Օմեր, Ավտլհատի և Ալո անուն մոլեանդ ու սոսկալի շեխեր։ Ներքին Պուլանխա՝ Ապրի, Մոլլաքանդ, Կոշով, Առնճիկ, Շեխալի, Փիոնք և Մեմանի գյուղորայս բնակիչ Խաա, Քեմիլ, Ռաշիտ, Իպրահիմ, Ապտրահման անուն ավազակապետ շեխերն ու իրենց պարագաներ։ Նույնպես Մանազկերտի Թոնտրա անուն գեղի բնիկ Մահմատ և Խալիլ պեյեր, Սնճիկ գեղի Մահմետ, Հասան, Սելիմ և Հյուսեյն շեյխերն երկու Պուլանխներաց և Մանազկերտի գավառաց վնասապարտ ավերիչներ դարձեր են, որք անհերելի և անողոքելի, թշնամի ու դատախազ են հայոց ազգին ու կրոնիս։ Ասոնց ձեռք մատնված թշվառ ժողովուրդն ի՞նչպես կրնա նյութապես և բարոյապես բարգավաճիլ, ուշիմ եղբայր, կաղաչեմ իմաստասիրե։

3 Հասանանցի, Ճեպրանցի և Սեյտանցի քրտերու էլեր, որոց մի մասն խառն ընդ Պուլանխներու Հայք կբնակին թեև, բայց գարնան լեռներ կողոպտին և որովհետև իրենց դրացի Հայկազանց կենաց ու ընչից ի մոտո ծանոթ են, որպես ցեց կուտեն Հայոց ինչքն ու կյանք և կփախչին լեռանց մեջ կընկղմին։

4 Հիշյալ ծաղկակոխ գաղաններ կես տարին բոլոր Բյուրական լերանց մեջ բնակելով, շարունակ նույն տեղեն կիջնան դաշտեր ձեռք ընկածնին կհափշտակեն, որք իրենց անառիկ դիրքերուն ապավինելով, մանավանդ թե կառավարության մեջկուեն խրախուսվելով, ամեն անհերելի ոճիրները ի գործ կդնեն և թե հաղարեն մեկը իրենցմե կձերբակալվի՞, ամեն հնար եղած ազդեցիկ միջոցներ ձեռ կառնեն, թե երկյուղով և թե կաշառով հնարքը կը գտնան ու իրենց մարդն կազատեն։

* Բնագրում մի բառ բաց է թողած (Հ. Պ.)։

տի դաշտերուն վրա, որտ ծխովն ու մխովն կշտանա երբ։ օդն առողջարար և ջուրն բարեհամ։ Վանուցս հայրն է պոլսեցի Հովսեփ վարդապետ, սրբատաշ քարերով գեղեցկակերտ փոքրիկ եկեղեցիմ ունի և քանիմ միաբանաց միահարկ սենյակներ, երկու վարդապետ, 8 մշակ և քանիմ պատսպարյալ, երկու տարի առաջ գիշերօթիկ դպրոց մի ևս ունեցեր է, բայց աղետավոր պատերազմին պատճառավ աշակերտները ցրվելու ստիպեր է, ունի հազիվ քսան վեց հատ ոչխար, որ կրնա նորա քառապատիկն ունենալ, 10 եզ, 3 կթան գոմեշ, մեկ ձի և քանիմ ավանակ. բավական ընդարձակ սեպհական հողերն ունի նաև ջրաղացմ ու մարգագետինները, որք հույժ արդյունավոր են, եթե արթուն հսկող լինի վանուցս, կրնա քսան հատ գիշերօթիկ աշակերտի պահել։

## Ապահունի գավառ կամ Մանազկերտ

Մանազկերտ դրացի է Հարք գավառին, անորմե ավելի ընդարձակ, որ արևելքեն կերկարի մինչև Քաջբերունի, Խամուր և Բատնոց գավառներ, երկիր արգավետ, բայց տեղվոյն քրդական ավազակաբարո փողանդներեն կեղեքված մշակներ երթալով նվազեր, որով և երկիրն գրեթե բոլորովին ամայի է, միայն հիշյալ բռնավոր քրդերու արոտավայր դարձած, որ բյուրավոր հոտ ու պաճարները կսնուցանեն, Մշո աշխարհի ամենեն թշվառ վիճակն է Մանազկերտ, մերազն եղբարք զրկված են մարդավայել բարիքներեն, բնավ դրպրոց և դաստիարակություն չունենալեն զատ կենաց և ընչից ապահովություն ալ չունին, այլ իբրև ջորտ՝ քրդաց բռնության մատնված են։

## Գյուղորայք Մանազկերտի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Բերդ | Թիվ հայոց 560 | | | |
| | | | | |
| | | | | |
| |

Միջադե՞պ թե դեպ և դեպ ասեմ, էլ մի հարցուներ, վանեցվոց ըսածին պես ուժս և ողջանձս փուր փսոր եղավ գրեթե ամիս ու կես ձիուն քամակ շրջեցա ապուշ ընկերիս հետ, որն որ յուր գլխո ըղեղն կքամեր ու կասեր տեղմ մնամք քանիմ օր խոնջերնիս առնիմք։ Ահ ես ալ կփափագիմ այն օր, կուզեմ արծվիկիմ պես քաշվիլ ու մտնալ քարիմ խորշ, հանդարտիցանիմ իմ հուզյալ միտքն ու գորով, զի ուր երթաս լաց ու աղաղակ, արտասունք ու կրակ, օ՜ֆ մաշեցանք ու հելացանք տեսնալով մեր տարաբախտ ազգայնոց չարաչար և դառն վիճակ իրեն արյուն կրակն ու տագնապ, հանգյալ եմ հանգյալ աղիքս կտոր-կտոր, սիրտս յուր նոսր մաշկին մեջ ջուր կտրեցավ, էլ լերդս ու լեղիս իրար խառնվեցան, թույն դարձա ես, չեմ կրնար հանդարտիլ նկատմունքներուս համար մանավանդ իմ սիրասուն հայ եղբարց կրած դատապարտ տառապանաց համար ադամանդյա սիրտերն անգամ իրենց անագորույն աղետից տապովն կմաշին և կհալին, երբ դիտեն իրենց ընտանեական կյանքն ու զրկանք ու թափված աղ ու կարմիր արյան հեղեղները շանթ ու փայլակ կդառնան, կսիրիմ առանձնանալ օրս ու աստվորս քթես ու բերնես հոսեցավ շոքեցավ, ա՜հ վանք մի լիներ անապատներու ծոց կամ լերանց խորշ անծանոթ սուղեի հոն քանիմ օր թուշնոց երամին հետ ապրեի անհոգ, որոց բնությունն կոժանդակն և կուտա կենաց երջանկություն, անդ առնեի դադար և գտնեի սրտակից ընկերներ, մոռնայի վայրկյանմ իմ

---

քակել, մուրջերուն հետ կովեին շեմուն քարերն ու կրակ ու բոց կարձակեին։

4 Մանազկերտի դժբախտ հայոց վիճակն ու կյանք, ոչ ոք չի կրնար ըստ պատշաճի տեղագրել լիովին, որք անմեղ հոտերու պես ամեհի քրդերեն չորեքդիմաց պաշարված են և ամեն խժդժական եղեռներու ենթակա, ընդ այն ո՜չ օրինավոր քահանա ունին և ո՜չ վարժարան, ո՜չ մելիք, և ո՜չ իշխան, միայն իրենց սաստիկ հայրենասիրություն և կրոնասիրություն կապեր կաշկանդեր է զիրենք մնալ իրենց հայրենի հողին վրա և չթողուլ իրենց հին հարց անմահ հիշատակներ թեև արևելյան առաջին պատերազմին միջոց երկրացվոց կեսեն ավելի գաղթեր են ի Ռուսաստան։



գիշերս ու ցավերս։ Ա՜հ, այս կլոր-կլոր, եղոան ու խորոտ գառնուկներին քանի հատ գառը ունենայի, զանեի գիրենք և խորովեի նստած պաղ-պաղ աղբյուրներու պռուկ եղոտ ու մեղրոտ մատներով ուտեի գլուխն ի քար աստվորիս բանին, քամուն տայինք մեր մելամաղձ սրտի դարդն ու հոգս, մնայինք ի շուք վարդի թփոց կենոք բերկրապարար գոնե աղատության մի օրվան։

Հունիս գվարթածադիկ ամսուն կեսուն հասանք և մեր կենաց շրջանին կեսեն անդին սահեցանք, չգիտցանք մեր կերածն ու խմած աղն ու արտասունք ո՞ր գնաց, գոլորշում պես հոգս ցնդեցավ մեր սերն ու ավին, մեր միսն ու արյուն մեռավ դարևոր թաղծության հոտին մեջ, ալ ո՞ր են մեր կենաց ծաղիկ օրեր։ Ա՜հ, մեն մի առավոտ ցողաշուրթն եղոյս մեղրն ու կարագ, փրփուր ձվածեղն ու սերն ուտեի նստած հոյլ ի հոյլ ծաղկանց ափնիներու տակ գե՜մ սրբվեր ժանգոտած սրտիս թույն, օ՜ֆ, էլ մինչև ե՞րբ պիտի տևեր մեր այս հալն ու մաշ. օ՜ֆ, օ՜ֆ, մեռանք ապրելով, հա՜յ, դու ապրած մնաս։ Ա՜խ իմ սրտի սեր հայրենիք, ամենքս քեզ համար շիվարեր ու ծոեր ենք, ինկած ի դաշտ ի սուտ հուսով բարորության քո, քո անգին սիրույդ համար։ Հիմա չի՞նե՞ր Մշո ոստին այգիներու պինդ ու կարմիր գինին, դմակով ու յուղով շաղախված գառն ու ոչխարի միսն ձեռքով կրակ վառեի ուզածիս պես բորբոքած ու բոլորած և զանոնք շուլուլեի ի շամփուրն սրտաշեկ այս ծփծփուն հովին սիրով խորոված շինեի տժտժալեն, որ մարդու սիրտ ու ակոտն կվառե, կտոր-կտոր կտրեի ու բոնի ու հետ գարնանահաց օդիկներուն ուտեի տաք-տաք և անուշ գինին ցողեի վեր հոգվոյս ի հավետ կենդանություն իմ անձկայրյաց ու անմահ հայրենիքին, մարդուս օրինավոր կյանքն այս չէ՞։ Այս երևակայությունիս բոլոր իրականի փոխվեցավ ի սբ. Դանիելի վանքն Կոփու, օծյալ նորին սրբազնություն Մշո առաջնորդ Գրիգորիս արքեպիսկոպոսի մտերմական սիրո հավաստիքն։

1878 թ. հունիս 14 ընդ արշալույս Կոփու վանուց ելա իմ ընկերիս հետ մնաս բարովն ըսի սրբազանին և այլոց

Բղնունյաց գավառն կերթամ, եղանակն փաղաքուշ և օդն անուշ էր, զվարթ սրտով և պայծառ արևով ահա Պլեճան սարին արևելին թիկունքեն կանցնիմք առանց հուզման թեև իմ վախկոտ ընկերս կսեր, թե սույն լեռան խորշերուն մեջ ավազակներ հոշյալ կան ընդմիշտ, բայց ես անվեհեր նույն սարի կատարին վրայի շենքերն կդիտեի հեռադիտակովս բնավին անվրդով և կու սիրեի նմա գլուխն ելլալ ու տեսնալ այն հին-հին ավերակներու մեծակերտ պարիսպներն, որո համար կսեին թե տեղվոյս Պլեճան անուն իշխանն շինած էր, որուն հետք պատմության մեջ չեմք կրնար նշմարիլ, իհարկե այսպիսի անձուկ միջոցիմ մեջ չէի կրնար Պլեճան սարին կատարն իլլնիլ ու մտրակ ի կուշտ իմ ազնիվ ջերմակ ձիուն կարշավիմք Խաչլուկա լճակին եղերքեն, որն որ գարնանածին խոտերով ու ծաղիկներով իբրև ընտիր գորգ նկարակերտ կծփծփար գեփյուռին մեջ հովովն, որո սոսսարաս ցողուններն մինչև երիվարիս ասպանդակն կբարձրանային գրեթե, և մենք ի ծով ծաղկանց կլողայինք, որո մեջ Ճերմակս կուզեր թավալիլ ու թռանալ կփրփրար և կամեր յուր կուռ սանձն ծամել լիխիլ սրվրուկ խոտիմ պես կամ թե արձակվիլ ու լափել այն ծաղկաշաղաք խոտերն, որք մարդուս հոգվոյն մեջ կեռա, կսիրեմ ասել, որ մենք ալ թե որ ամոթ չըլլա ասել նույն հաճույքն կզգայինք գրեթե, ուստի թե անասունին և թե ասունին համար սիրով պարտավորվեցանք իջնալ և վայրիկ մի հանգիստ առնիլ, ձիենն կայտառ թող տվինք ի դալարաղվարճն արոտ և մենք նըստեցանք կաթնաբուխ աղբյուրներու գլուխ և ճաշեցինք թարմ հավկիթ ու կարմրացրած վառեկ, որք մեզ նախաընթրիք տրված էր ընդ չոր սերի հացերուն, սեր հավկիթ ու հավ իբրև նախաճաշ ընթրեցինք ընդ դալար ջրի կարոսի, դաղձի և կոտեմի, բայց առանց գինիի, ինչ պետք էին մեզ գինի, զայն տրտմություն ունեցող քաղաքացիքն թող խմեն, այլ ինձ համար հազար կարժեր ու թանկագին էր քան զշամպանյացն ու բանաստեղծից կարծեցյալ նեքտառն Խաչլուա լճին[69] եղերք, զզղղուն աղբերաց ընթեր, չոր հաց ուտել, կենսատու օդը ծծել, ծաղկանց մեջ ընկղմիլ, կուց-կուց ձեռնաշաղախ



ջուր խմել, ավյուն առնիլ, կյանք նորոգել քան ոմանց բաղմախորտիկն սեղան և թոթոզուն գինոր կարասներն, միայն մի հիշատակ կար որ իմ սիրտս կհուզեր սույն լճին եղերք նստած ու քաղցր զմայլումներով կշտացած պահուս, այն զի կհիշեի մտովի իմ բնակասնունդ երկրին Քեշիշ կոլ[70] անուն լիճն, այո՛ լիճս անոր սեր կզարթնեցներ իհիս, հայրենիք, սիրելիք, մտերիմք կսեի ու կարտասվեի ամայության մեջ մրմունջներով, քան զքնարին թել թոթռուն էր իմ սիրտս, կհուզվեի հացն ու մսին հետ իմ միսս ալ կծամեի, պինդ-պինդ լեռուս կծծեի, արդյո՞ք զիս կհիշեին, թե ես հաց ուտելն մոռացեր էի, կամէի մտովի վազիլ, ելնալ ի կատար Պլեճան սարին, անտի դիտել ու տեսնալ Վարագա սարն[71], իմ սիրելի եղբարք ու ողջունել զիրենք լի կարոտով, որով սրտամաշ եղեր էի տասն և չորս տարիե ի վեր սրտմաշուք պանդխտության սև-սև ծալքերուն ներքև, ույց ցավերն տվի հովին ու ծովին, իմ սիրելի հայրենյաց գեփյուռսն սրբեր տարեր է զանոնք և հետքն անգամ թողուցած չէ, ափսոս, կասեի, ինչու՞ փետուր ու թև չունիմ, շիվարած կմնայի ու քարացած, խենթցեր էի, թեև սերն շատեր խենթեցուցեր է, զի շատ սիրելն կատարյալ խենթություն ըսել է։ Ալ սեղանն ու ճաշը թողուցի ընկերիս ու ինձ զինքս տվեցի դաշտ ծաղիկ ժողովելու անփարատ սուգերս փարատելու համար, կակաշ, կներբուկ, նարգիզ, լալա, անթառամ ծաղիկ ժողովեցի հարյուրավոր տեսակներ հոտ առի, զմայլեցա, ուր քարերն, լեռներ, անտառներ, հողն ու պակ, լիճն ու գետակ, ամենքն ալ ծաղիկ էին ծաղկեր զիս մխիթարելու համար...։

Է՜հ, պետք է թողունք բանաստեղծական վայրերն ու կամք երթալ աշխատիլ մեր բուն նպատակին, մանավանդ որ շատ երկար է մեր այսօրվան գալիք ճանապարհն զի Ախլաթա բոլոր գյուղերն կտրելով, միտք ունիմ Թեղուտա վանք հասնել շուտով, ահա հաջողությամբ սլանալով կհասնիմք Նազուկա[72] Նազելի ծովակին ծաղկածավալ եղերք, որ Բղնունյաց ծովի[73] գույնն ու ծփումն ունի յուր անուշակ ջուրն, սիրուն սփռված լայնաբերան հովտիմ մեջ բյուրատեսակ ու քանակ թևավոր թռչուններով ու ձկներով հարստացած, Պլեճան ու Նեմրուտ

լեռներու ծալեծալ գոտիներ ամրացած կպաշտպանեն զինք։ Ա՜հ, այս մանր-մանր ձկներու վեր-վեր խաղալուն հետ քու սիրտդ ալ չի կայտռիր, այս անթիվ թռչնոց ծուփ-ծուփ խաղալուն հետ քու սիրտդ ու զգացումդ ալ հափշտակվիր, թե դու մարդ ես, կիրք ունիս կրնա՞ս անտարբեր կերպով այս տեղերեն իբրև սոսկական շինական անցնիս, առանց հիշելու սույն կանաչ ու կարմիր վայրերուն նախընթաց պատմական կյանքն ու անցք, չես հիշեր երբեք, թե քանիցս և քանի բյուր հայկական զինվորներն Նեփրովթա ծարավի կոչերեն անցած հանան այս բուժակին, անուշ ջուրն խմեցին, շոշեն, արևն այրած մրկած. տեղացիքս կպատմեին, թե Նաղկա լճակին մեջ Հյուրիներ կան, բայց ես կասեմ կարմիր Վարդանա հրեղեն կունդն անշուշտ այս տեղեն սորացին ի Շավարշան, որոց հիշատակ կմնա ի սիրտս գյուղացվոց (Հյուրի) կամ թե հայ արի, եղեր է հյուրի, այլ ինչ և իցե, դու մի անգամ երեսդ լվա այս ծաղկածին ջրով, որ օտարության աղտն լվացվի ու թափանցիկ գեղդ տեղ գա, ձեռքերդ լվա, որ մեռաքսի փեր փրփրի ու կակղնա ու կերթանք այս կողմի վանքերն ու գյուղերն, սարերն ու ձորեր, որով երևակայությունդ տոչորվի, պիտի տեսնաս շարան-շարան ըղտաքարերն[74], քու միտքդ պիտի զարթնի, Նեմրուտի գլխո հրաբուժակները և այլն և այլն։ Կոխիմք ուրեմն ու անցնիմք հասկաթուռ ցորենի և ալեծածան առատ խոտերու, արտերու եզերքներն, որ Վասպուրական հովեն կտարուբերի, երթանք Փլխուս, Կժռակ, Ծղուկ և Թեղուտ գյուղերն, որ մեր դաղարն առնիմք նույն անուն սբ. Հովհաննու ըսված վանք, հայնժամ ես քեզ ցույց տամ իմ ամենասիրելի հայրենիքին զարդն ու փառք Վան քաղաք, ինչպէ մեր թ Թեղուտ գեղ գտնված նախածանոթ սիրելիներեն օժանդակվելով, մեզ պետք եղած գրավոր կրգուտը ժողովեցինք ու գիշերի կեսուն գնացինք քոսա Փամպու Ղաղար վարդապետի վանքն Թեղուտա։

## Ախլաթա կամ Բզնունյաց գավառ

Բզնունյաց գավառն մեր նախնի շեն գավառներեն մինն է, Մշո արևելյան և Վանա արևմտյան կողմ, յուր համանուն



սայաս գլեռաս և Սեփրովթ լեռ, հարավեն Դրկուռա սարն և Սալնոձորո Բաղեշ քաղաքն, իսկ հյուսիսեն Արձկե գավառն և Սիփան սարն, Մուշ քաղաքեն հեռի ժամ տասներկու և Բաղեշեն՝ վեց։ Գավառիս իշխանություն երբեմն Վանա կառավարության կվերաբերեր, այժմ Մշո գավառապետին, տեղս Գայմագամ կնստի և կեդրոնատեղին է Ախլաթ քաղաքավանն կամ ըստ այլոց՝ Վերան Շեհիր։ Գավառիս հողերն նոր ուղևորիմ անպետ կթվի յուր լերկ և ավազաշունչ լինելուն համար, բայց ընդհակառակ ըստ արդյանց՝ հոյժ արգասաբեր և պտղավետ։

## Գյուղորայք Բզնունյաց

| | | | | |
|---|---|---|---|---|
| Փլխուս | թիվ հայոց | 490 | եկեղեցի | մեկ սբ. Ստեփանոս |
| Թեղուտ | « | 840 | « | Ստեփանոս |
| Կամուրջ | « | 491 | երկու | սբ. Ստեփաննոս և Աստվածածին |
| Ծղուկ | « | 560 | « | սբ. Աստվածածին և Գևորգ |
| Կժռակ | « | 425 | մեկ | Գևորգ |
| Զորկոնք | « | 70 | « | Ներսես |
| Այմալու | « | 150 | « | ավեր |
| Թուխ | « | 175 | « | Իղոի Բուղոիի վանք |
| Ուրտափ | « | 350 | « | Աստվածածին |
| Զրհոր | « | 245 | « | Աստվածածին |
| Շամիրամ | « | 140 | « | սբ. Եկեղեցի |
| Սոխորդ | « | 125 | « | Աստվածածին |
| Տափավանք | « | 410 | « | Աստվածածին |
| Կոշտեան | « | 210 | « | սբ. Աստվածածին |
| Մինք | « | 212 | « | Նիկողոս |
| Ճրզիրոկ | « | 35 | « | Ստեփանոս |
| Խուլիկ | « | 82 | | |
| Սրպոաձոր | « | 170 | | |
| Ծաղկե | « | 105 | | |

Ծանոթություն.

1 Խուլիկ, Սրպոաձոր և Ծաղկե անուն հայ գեղեր եկեղեցի չունին, այլ գետնափոր տուներու մեջ ժամատացությունք կլինին երբեմն։

## Վանորայք Բզնունյաց

Թեղուտա կամ սբ. Հովհաննու վանք, սույն մենաստան շինված է Նեփրովթ լեռան արևելյան կողմ սփռված դարադաշտիմ վրա, որո առաջ կտարածի ընդարձակ դաշտմ Բզնունյաց ծովն, լեռներ և անտառներ, հիանալի տեսարան մի ունի, որ մեր Հայաստանի ո՛չ մի վանք նույն ամենահայաց տեսարանն ու դիրքը չունի, Վանա ծովն ու կղզիներ, Մոկաց, Շատախու, Ոստանա և Վարագա լեռներն ամենն ալ շարան-շարան յուր աչիչ առաջն ունի, նույն ծովեն ու սարերու ծովեն ու հոտեն պարուրած կնստի իբրև թագուհի մենաստանաց կաղամախ, բարդի ու թեղոզի երկնաբարձ անտառիմ մեջ, որ յուր անմահ շուքն կրկնապատկե։

Թեղուտա վանքն ունի հնաշեն ու տձև մատուռմ և 8—10 կրկնահարկ ընտիր սենյակներ, առաջնորդարանմ, համար մի, մարաք և այլ շատմ զքիչ ու վայելուչ շենքեր, որք համակ կոփածու քարերով կերտված են, ունի ընտիր քարհանդ մի, որ այն կողմի քարերեն ամենեն հարգի է։ Վանացս վանահայրն է էջմիածնա աթոռեն փախստական Փամփուխ քոսա մականուն հռչակավոր Ղազար վարդապետն, ընդարու և ընդ էգ ունի քսան երեք միաբան, մշակ, հովիվ, պահապան։ Ունի երկու հարյուր ոչխար, 25 եզ, 18 կով, 4 գոմեշ, 16 աջառ, 9 ավանակ, 2 ձի ու մատակ և այլն, ունի նաև ամենեն հարգի և պատվական, ունի նաև 3600 Կ. Պոլսո քիլայի տեղ սերմանելի արտորայք ի բաց առյալ յուր լեռնային ընդարձակ սահմանն, որ կրնա նորա արոտով ու մացառներու տերևներով հազարավոր ոչխարները բուծանել, վանուց յուր անասուններով վարած ու ցանածեն ետք ունի 250 նույնպես Պոլսո քիլա իր թեմական գյուղերեն պտղիի ցորեն, ավելորդ է ըսել, որ հիշյալ վանք յուր թե ներքին և թե արտաքին եկամուտներով կրնա քսան ու հինգ գիշերօթիկ աշակերտներ ունենալ, յուր պարագաներով, որ այժմ մեկ փոխանցուց մի չունի և չենք գիտեր այն մեծաքանակ արդյունքն ուր կնկղմի. ա՜հ, իմ հեք հայրենիք, դու մինչև ցարդ չկրցիր մինչև անգամ քու սրբավայրերն բարեկարգել, կամաչիմ ասել մեկ-մեկ ավազակաց այր դարձեր են սուտ ու փուտ մարդկանց ձեռք, որոցմե ոմանք, ազգասեր, հայրենասեր, ուսումնասեր մակդիրներ ալ ունեցեր են ու զքեզ միշտ խաբեր ու քու կենացդ ուղը ծծեր են միշտ։

Ա՜հ, ցավով սրտի Թեղուտա վանուց լույս աղբյուրի ընթեր նստած ափ ի ճակատ մելամաղձոտած և խուռն ու խառն զգացումներով տոգորված կը շարշարվեի խիստ սառստիկ կերպով, կամեի վշտատագնապ սրտես անցածներն ու մըտքիս վկայություններ, հոգվոյս հուրն և ամեն ազդեցիկ իրերը և դառն ու քաղցր, տաք ու պաղ, լույսն ու խավարն ամենն ալ հատիկ հատիկ նստիմ գրեմ ու կդառնայի ինքս իրենս կասեի թե ինձ կերևի որ շատերն այնպես կնեն, այսինքն շատերն իրենց զգացածները գրելով միայն կրնան մխիթարվիլ, ապա թե ո՛չ ի՞նչպես կրնա սեր ունեցող, սիրտ ունեցող, եղբ ու տրոփում ունեցող, ավյուն ու միտք ունեցող մարդն անտարբեր մնալ ու չզգացվիլ ու ծխալ և մխալ, ո՞չ ապաքեն կրակ ու բոց կելլա յուր գլխեն ու զինքը կվառե։ Բայց և այնպես այս ալ կշափեի ու կրկշռեի յուրովի, թե գա օր իմ որ ոմանք իմ գրածներս կարդան, ի՞նչ պիտի ըսեն ու ինձ պիտի չսին, պիտի զիս չմեղադրե՞ն. Է՜հ, ի՞նչ կսե այս հայ փողահարն՝ նստեր սարեն, ձորեն, քարեն, դաշտեն, ծովեն, ցամաքեն, հոտեն, պուրակեն, ծառեն, ծաղիկեն, գետեն, հովիտեն, գեղեն, քաղաքեն, սրտի տրոփումեն, երակի զարկեն, ավյունի եռալեն, հոգվո ազդումեն, գլխո շոգիեն, երկրի կառավարիչեն, քրտու ոխութենեն, վանահարց մեղկութենեն, վարժապետաց պակասութենեն կըպարի ու գլխեն դուրս կուտա։ Ինչէ քանի որ ես ազատության սիրահար մի եմ, կուզեմ որ ամեն մարդ իմ գաղափարն ունենա, բանադատն ինչ կուզե թող այն ըսե. ահա Մշո

---

2 Կիրս, Խածուկ, Տավալք, Յողուրտ, Իեմեզ և Աղճավերան անուն հինգ հայկական գյուղերն ասկե չորս հինգ տարի առաջ բարբարոս քրդերն բռնի հափշտակեր են հայոց ձեռքեն ու հալածեր են զիրենք, որոց քարաշեն եկեղեցիք տակավին կանգուն կը կենան։

ընդարձակ աշխարհին հորիզոնն կամփոփվի ինձ համա-
ես ի Սալնոձոր և անտի խերքթեթ կուղևորվիմ։

Մշո քաղաքի և իր դաշտի ու Զուխուռա ընդհանուր
գյուղորայք և շունչ.

Գյուղորայք հայոց 90
« խառն 10
Ընդհանուր թիվ հայոց 29207

Գյուղորայք Բռնաշենու

« հայոց 1
« խառն 9
Ընդհանուր թիվ հայոց 597

Գյուղորայք Խոբա

« հայոց 5
« խառն 12
Ընդհանուր թիվ հայոց 1227

Գյուղորայք Շատախի

« հայոց 5
« խառն 1
Ընդհանուր թիվ հայոց 832

Գյուղորայք Կավառի

« հայոց 11
« խառն 1
Ընդհանուր թիվ Կավառի
« հայոց 1387

Գյուղորայք Վարդովա

« հայոց 11
Ընդհանուր թիվ հայոց 2417



Գյուղորայք Խնուսա

« հայոց 20
« խառն 2
Ընդհանուր թիվ հայոց 8424

Գյուղորայք Վերին Պուլանըխի

« հայոց 14
« խառն 6
Ընդհանուր թիվ հայոց 10449

Գյուղորայք Ներքին Պուլանըխի

« հայոց 4
« խառն 6
Ընդհանուր թիվ հայոց 4414

Գյուղորայք Մանազկերտի

« հայոց 3
« խառն 13
Ընդհանուր թիվ հայոց 2687

Գյուղորայք Բզնունյաց

« հայոց 17
« խառն 1
Ընդհանուր թիվ հայոց 5077

Մշո աշխարհի ընդհանուր գյուղորեից և մարդաթվաց
ցուցակն.

Թիվ ամբողջ հայկական գյուղից 184
« խառն « 60
Ընդհանուր մարդաթիվ հայկական ցեղի 66808
« « քրդական « 57345

Հունիս 16 կերթամ ի Սալնոձոր թող տալով ետևես հա-
յոց դրախտն Սիփանա պարթև սարն և Բզնունյաց գավառը,

մեր առաջ կիյնա Վանա կապուտիկ ու ծփծփիկ ծովա-
Վարագա թուխաշուի սարն, Արտոսա Սպլուխ լեռն ու Մա-
կաց և Շատախու սարերն և աջկողմերնիս Նեփրովթա և
Գրկուռ լեռներ, որք շուրջանակի պար բոլորած Վանա ծո-
վուն եզերքն վեհորեն Հայաստանի բարեբորոգման համար
խորհուրդ կնեն. ա՜հ, այս սիրելի հափշտակութիւններ կհու-
ղեին զիս հիշելով իրենց հին-հին դարավոր հիշատակներ
մոմուռեն սիրտս կգալարվեր ու մահվան քրտինք գիս կը
պաշարեր, սիրելի հայ զավակ, այս ամեն հուզելի ու բնա-
կան երկիր տեսնաս չե՞ս կսկծար, մեր հայրենյաց այս
անառիկ ու փառազուրկ վայրերն տեսնաս չե՞ս ողբար, հի-
շելով իրենց նախնական փառքն ու բարին։ Ա՜հ, դու մարդ
չե՞ս, սեր չունի՞ս, սիրտ չունի՞ս, զգացում չունի՞ս, կյանք
չունի՞ս, ա՜հ, սեր ունեցիր քուկդ չըլլա, սիրտ ունեցիր պա-
ղած ըլլա, զգացումդ մեռած ըլլա, հոգիտ քուկդ չըլլա և
հայրենիքդ օտարին ըլլա, տես ու մտածե ինքնախորով
կրակով վառվիր, թող ծուխն ու մուխ մազերեդ բղխե և դու
գալարիր, խորովվիր և մեռիր, գնա յուրովի առանց կարե-
նալու օգնել քու հոգվոյդ հոգուն հայրենիքին։

Ահա այս զգացումներով ու սիրով կերթայի ու կուլայի
ի ծածուկ, որ ո՛չ ոք չնշմարեր զայն, ահա Վասպուրական
աշխարհ կծածկվեր աչքերես, որուն նվիրեցի իմ կարոտ
աչաց աղի արտասունք, համբույր քեզ իմ նազելի ու չը-
նաշխարհիկ հայրենիք, մնաս բարով, քեզ հավիտյան կա-
րոտով կերթամ առանց երաշխավորի, ո՞վ գիտե պիտի կըր-
նամ անձուկս քեզմե առնիլ տակավին կենդանի մնալով, զի
ես մահվան հետ ընկերացած ճանապարհ կառնիմ, է՜հ, հի-
շե թե ապրիմ, մեռնիմ դարձյալ ես քուկդ իմ։ Զի վերջի
սոսկալի ռուս թուրքական պատերազմն ամեն տեղ մահվան
տարափն տարածեր էր և ես կերթայի ոստիկանիմ հետ,
ինչպես գնաց Աբելն ի դաշտ յուր Կայեն եղբոր հետ երբեմն,
կալանամք շուտով ի Սալնոձոր, որտ ուղին խոնված են եր-
թևեկներով, բոլորն ալ բարձված են բեռներով, մարդն յուր
իշուկներով, ասոնք խլաթցիք են, որ իրենց շալակներով
գրեթե ամեն օր, հավ ու հավկիթ յուղ ու կարագ, մեղր ու



մածուն գառն ու խորովու և այլն կտանին Բաղեշ քաղաքի
Հոլերաց,[75], փոխարեն առնելով իրենց քանիմ կանգուն կը-
տավ ու կարմիր շիլա և Ռահվայի սրտամեռ ճանապարհն
սև ու սպիտակ կուտա մարդկանց բազմութենեն։ Ռահվայի
գողասահ անապատն տարվոյս տարօրինակ առատ անձ-
րևներու բացառիկ շնորհիվ իբրև ծաղկավետ բուրաստան
դարձեր էր, զի նորա և Զրհոր գյուղի սահմաններ ավա-
զուտ են և անջրդի, շատ քիչ տարի սույն զուգադիպություն
և բացառություն կըլլա իրենց որ անձրև լինի և իրենք կրնան
վար ու ցան ընել, սույն տարիս իրենց հազար-հազար բա-
րի տարին էր, տարեկնկի արտերն ու գարի և ցորենի ան-
դաստանները իրենց լայն-լայն տերևներով և ուռած հասկե-
րով կծածանեին կիրգ իրան օրիորդներու պես, որով աղ-
քատ շինականն ուրախ էր և կհուսային, որ շարաշուք պա-
տերազմի աղետից փոխարեն աստված ուզեր էր զիրենք
մխիթարել, զի շատ ու շատ չարչարված է այն միջոց ոխե-
րիմ քուրդերեն։

Կեսօրվան արևոյն տապն անցունելու համար Զրհոր
գյուղն իջանք և հոգնությունիս առնելով ակռաստ կերանք
մեր նախածանոթ երեսփոխանին տուն, ալ չեմք աճապա-
ռեր քաղաք գնալ, Բաղեշ մոտ է, ճանապարհն ընտրել, որտ
համար կասկած չունիմք ուստիք, միայն հետիս ձիավոր
ժանտարման անհնարին երկյուղով պաշարված է և ես զինք
կսրտապնդիմ, որ ավազակներեն չվախենա, որք ինքնահա-
լած կորեր էին Բաղեշ կանոնավոր զորքը գտնվելուն համար,
զարմանալի բան, այս տեսակ վատասիրտներով կուզեն որ
աշխարհ կառավարեն, ինչ և իցե հեծանք ու Պաշխուան մի-
ջեն և Փափշեն խաներն անցանք հարյուրավոր ուղևորներ
մեր ետեն ձգելով և ահա Բաղեշ քաղաքի թաղագլուխ հա-
սած եմք, որ կնստէին տերության զինվորներ վրաններով,
որոնց շատերն կվազեին և կուգային մեզ տեղեկությունները
հարցնելու (պատերազմի նկատմամբ), բայց ես տաճիկ ըն-
կերին պատվիրած էի ասել թե Մուշեն կուգամք, հետևաբար
պատերազմի համար տեղեկություն մի չունիմք, վերջապես
հասանք մեր իջևանն, Ամրտոլու վանք, ուր տասն և չորս

տարի առաջ արդեն երկար միջոց մնացեր էի պաշտոնով, հայնժամ անցած էր անմիջապես Ճանապարհի բոլոր նեղութիւնները և ամայութիւնը, նոցա տեղ փոխանակած էին փունջ-փունջ նախկին բարեկամներս, որք մեր գալուստն լսելով փութացեր էին ի տեսութեան նվիրելով իրենց ջերմ սիրո հավաստիքներ, անմիջապես տեղվույն վանուց երեսփոխան Սիմեոն աղան, մեզ հատուկ սենյակ պատրաստել տվավ, անդ որ կնստեր երբեմն իրենց նախկին առաջնորդ Գեր. Երեմիա սրբազան, զի արդի փոխ առաջնորդն այնքան պատիվ չուներ դափազի[76] վրա նստած թռչնո պես այսօր վաղ թռչելու վրա էր անոր համար յուր սենյակն մեզ կրտային։

Չորս օր կեցա տեղս, շատ գործ տեսա, բարեկամներ ընդունեցի և ընդունվեցա, որոց պարտական եմ միշտ թե իրենց բարոյապես օժանդակութեան և թե իրենց սիրույն համար։ Անմոռանալի են ինչ Խաչմանուկյան, Շողիգյան, Խանչալյան և Քենտերկյան էֆենդիներ, մանավանդ Եղիշե վարդապետ իմ կարգակից և սրտակից եղբայրն, որ պաշտելու չափ սիրո արժանի է, չեմ կրնար մոռանալ նաև Սողոյան Գրիգոր պատվելին և իր աշակերտ մեծարա Մելքոն վարդապետն, որք արդեն իմ համարված էին, որեէ սբ. են անոնք իրենց անկեղծ հոգով և սրբանվեր իրենց պաշտոնով ինչևիցէ դառնանք Բաղեշ ի քաղաքն նկարագրելու ու շուտով գնալու։

Քաղաքս տասն և մեկ ժամ հեռի ի Մշո ավանեն, նորա հարավային արևելք Տորոս լեռան խիտ առ խիտ շղթաներու ջրառատ ձորակիմ մեջ գետեղված է, կամ թե բարձրաբերձ բլուրներու ծովում, խոր իբրև շահավետ նավ մի, նավակ մի է ակաղձուն. վաճառականական ընտիր ընտիր տարերքներով և քանիմ քաղաքաց տիրապես ամբար համարված է, որ հորդառատ կտեղան Շամա, Հալեպի, Տիգրանակերտի, Մերտինի, Սղերդի, Խիզանու, Պոհտանու երկրներեն պարբերաբար և անտի կտարածին Մուշ, Կարին, Պայազիտ, Վան և այլուր տեղեր և ոսկին կժողովե իրեն հարուստ բովին մեջ։ Բաղեշի քաղաքն հիրավի դիրքով և անունով թեև փոքր ու աննշան



համարված է, բայց մեր Հայաստանին համար իբրև տոնավաճառ կամ թե իբրև արվեստահանդես մի համարվելու կարևորութիւնն ունի շահովն ու ոսկովն։ Բնակիչք ընդհանրապես չարքաշ են և շահամուտ, որոց մեջ շատ քիչ անգործ մարդ կրնա նկատվիլ, ամենքն ալ զբաղված են, խիստ աշքաբաց են ու քարմուտ, որոց համար պետէ ասել բանվոր մարդիկ են, որ շատ գովելի է հիրավի, բայց ասոր հակառակ իրենց նյութական շահուն առատութեան չի համապատասխաներ իրենց բարոյական շահն, որո մասին շատ աղքատ են և կարծես հետզհետե ետ կմնան, կամաչե ու գետնի տակ կմտնա ճշմարիտ հայն, երբ սխալի ասոնց եկեղեցիներեն ու դպրոցներեն ներս մտնալ...։ Կաղաչեմ ներեն ինձ ճշմարիտ ասելուս համար, այս մասին շատ պարտաղանց են ու թերացեր են ամեն օրինավորութենե և պարտուց, զոր աններելի հանցանք է իրենց, պատվոյն արատ և հայ անվան կեղտ ու զորս թեև երեք դպրոց ունեին, բայց մեկ շարժեր ընտելարան կամ ծաղկոց բսվելու, ուսման մասին շատ անտարբեր, որ նույն է բոլորովին մեռած կհամարվեին։ Ինչպես բազիշեցիք, նույնպես և շատ գավառներ դաստիարակն իբրև փոքրավոր կնկատին և վարժապետներ իրենց կամաց ու քմաց կգերին, որոց պետք է կուրորեն հնազանդին, եթե ոչ իրենց ամսական անուն սին գումարն կկորսնցունին և հետևաբար կզրկվին պատառմ աշտուճ հացեն, ողորմելի դրութիւն Սողոյան Գրիգորն, որ տեղվոյն հայերեն դասատուն է երեսուն ու քառասուն տարիե ի վեր, որ հին Հայկաբանութեան մասին լավ հմտութիւն ունի, ամիս հարյուր տաճկական վարձք միայն կստանա աղքեն, առանց բարոյական այլ նպաստի, հորմէ արդի վաճառական բաղեշցի ազգայինք միայն սորված են հեգել հայերեն աթուԹայն. թե Գրիգոր պատվելին իբրև մարդ մսեղեն յուր թերի կողմերն ալ ունի, բայց այս ալ անուրանալի է, թե եթե ազգն դինք շահե ու խրախուսե՞, շատ օգտակար ծառայութիւն կրնա ընել ազգիս, բայց նա հակամա կամս կըշեղի յուր շրջանեն շատ անգամ յուր ընտանեկան հացի խնդրույն համար...։

Ա՜հ, ե՞րբ կլինի որ մեր ազգային դաստիարակներու ընտանեկան կանոնավորություն երաշխավորվեր, հացին համար կսիմ, որ մենք անոթի վարժապետներեն լեցուն դաղափար և պատարան ջանք չհուսայինք, այլ նախ նյութապես զինք շահեինք և իրավամբ յուր պարտուց պահանջն խնդրեինք և առնեինք իրմե, ա՜հ, դաստիարակին կսեն մերկ ու քաղցած կեցիր ու մեր զավակներ կրթե ու զարդարե այսպիսի զարդուզի դարդմ ու բաստչի կրնար արդարանալ որևիցե խղճի արդար ատենիմ մեջ, որո համար դուրսեն ալ ուրիշ վարժապետ չեն կրնար բերել թերևս իրենց նախատելի դրություն ծածկելու համար։

Ըսինք որ քանի դպրոց ունին, ուր միայն հայերե այբ ու բեն կսորվին հարյուրավոր հայ տղայք, այն ալ խեց ու բիկ կերպով, եղին համեմատ ձվաձեղ զի այդպես կուզեն տղոց հայրեր, միայն պարզ կարդալ, գրել և թվաբանութենե մեկ երկու գործողություն սերտեն հայնժամ բավ է, այսինքն գիտնալ թե հարյուր կանգուն կարմիր կտավ երեք դահեկանեն քանի՞. եթե լիտր չամիչ քառասուն դահեկան արժե, քառասուն լիտրն քանի՞. մեկ փաստաֆ չուխան քանի կանգուն է, ինն ու կես կանգուն ծախեցինք այսօր մնացածն մնաց քանի՞ և այլն գիտնա բավական է։ Կհուսամ թե կրցի հասկցունել, թե հայ հայրերն կուզեն, որ տղան իրենց պահանջածն սորվի և ո՛չ թե ժամանակին, հայրենիքին և տրղաքնին դպրոցեն կհանեն շուտով ոսկիի պարկ շինելու, քան թե օրինավոր մարդ մի լինելու համար։ Երանի՞ քեզ Հայաստան։

Բաղեշ քաղաքն ունեցեր էր մեկ-երկու բարենպատակ ընկերություններ, բայց կրակ ու բոց սփռող տաճկական մոլեռանդ պատերազմ այրած էր իրենց նորաբուսիկ սիրուն թևերը ու ցրվեր էին, կհուսամ, որ այն անիրավ ձախիշ կրակեն իբրև փյունիկ դարձյալ պիտի նորոգին նույն միությունները։ Ունի չորս ընտելարան կամ վարժարան առաջին ի Կարմրակ, ուր կուսանին 128 աշակերտք։ Երկրորդ ի սբ. Սարգիս, ուր կան 130 ուսանողք, երրորդ ավեր Մեյտան՝



81 աշակերտ և չորրորդ Համրտոլվա վանք՝ 60 աշակերտ, ընդամեն՝ 399։

Վարժարաններու սեանկարն հանեցինք արդեն, առաջնորդական տեսչության վիճակն ալ նույն և նման է դպրոցաց աղարտված վիճակին, ամեն բան աննպատակ ու անկարգ տեղվոյն վարչություն (եթե կա) ո՛չ նիստ ունի և ոչ օրինավոր կետրոնատեղի, որով ո՛չ որոշյալ ատյան և ոչ արձանագիր, ամեն բան հասնողն անուշի կը կապեր ու կը թողուր, այսինքն եթե ազգային և կամ որևիցե անհատական գործ մի պատահի աղաներու կամ էֆենտիներու սենյակներեն մինն կլինի ժողովատեղի, կուզե նախագահ կամ ատենապետ լինի կամ չլինի, քանիմ անձիք կժողովին ու խնդիրն կքննեն և ըստ քմաց կորոշեն և եթե պետք լինի կառավարության դիմել անոնցմե մեկն կստանձնե զայն գայմագամին ներկայիլ և հանուն ազգին դարման խնդրել, ամեն բան դյուրին կերպով շուտով կրկարգադրեն ու կելլան կցրվին։ Հեք Պետրոս վարդապետն, որ ձայն չունի, շարական կերգե և խորագիտություն չունի առաջնորդիմ կսե... որոն բնավ կարևորությունը տվող չկար, իզուր տեղ նստեր Համրտոլու վանք զոր տարեկան լոլիկ կրկրծեր ու կրկարծեր, թե ինքն է առաջնորդ. օ՜հ, հովիվ մովիվն ո՞վ կրհարցունե, տեղվոյս ժողովուրդն ինքնավարական կերպով իրեն գործ տեսնալու իմաստությունն ունի։ Եղիշե հայր սուրբն ալ իրեն դերը կխաղայր, որ թեև վանահայր, բայց ազգային հանրական և մասնական գործերու կխառնվեր, ինքնագլուխ կառավարություն կերթար, թաքրիրները[77] կը գրեր և այլն։ Օ՜ֆ, ասոնք իմ պաշտոնիս չեն վերաբերիր, բայց սակայն սրտիս ցավեն գրեցի, զի ինձ համար սրտի բաներ են, միով բանիվ ամեն բարեկարգություն խանգարված ազգային ամեն կենսական խնդիրներ մոռացված ու մեռած վիճակի մեջ կմնար, որոց մասին պետք եղած պիտանի մարդոց խոսեցա ու խրախուսեցի, բայց անօգուտ, վասնզի պատերազմի արհավիրք զիրենք շփոթած էր, իրենց կենաց ու ընչից ապահովության բառնալովն...։

Բաղեշ քաղաք գլխավորաբար երեք ձոր ունի, ուր շինված են բնակչաց տուներ խառն ընդ թրքաբրդաց, հայք չորս եկեղեցի ունի, Կարմրակ սբ. Աստվածածին, սբ. Սարգիս, Հինգ խորան և սբ. Գևորգ, չորսն ալ ընտիր քարերով շինված հորմե շատ տեսակ հանգեր կան, որով ամբողջ տները նույն քարերեն շինված են, ոմանք հին և ոմանք նոր ճաշակով, քաղաքին կենտրոն հին ու ավիրակ բերդ մի կա, ում մեջ այժմ քանի աղքատ տնվոր տաճիկներ կբնակին միայն, որն որ բնավ հին հիշատակարանմ և արձանագիր մի չունի։ Քաղաքս ունի երկու լոգարան և չորս շեն ու ավեր մզկիթ ու մինարե։ Ունի 97 խանութ, երկու իջևան ամբողջ քարակերտ, բայց անշուք ու գետնափոր։ Ամենեն ընտիրն է քաղաքիս օդն ու ջուր, որն որ ամեն թաղ և ամեն տան քով կբգտնվի մշտաբուխ աղբյուրակներ, ոմանք գեղեցիկ պարտեզներ ունին, ուր ամեն մրգերեն կգտնվի առատօրեն։

Սալնոձորցոց արհեստներն են գլխավորապես վաճառականություն, հողագործ, ներկարար (տեղվոյս կարմիր շիլայն անվանի է), կտավագործ, խաղախորդ, ատաղձագործ, պայտար, քաղատոս, դերձակ, կոշկակար, ոսկերիչ, դարբին, գինագործ, շալագործ և այլն (սույն արհեստավորք հայք են ընդհանրապես միայն տոպաղն տաճիկներն են և մսագործ)։

Գլխավոր բերքերն են. մեղր, քաղցր կամ (ըոուպ) թուզ, կաղին, նուռ, պաստեղ, ընկույզ, տորոն, քղթոր, ոչխար, յուղ, պանիր, բուրդ, էշ, կով, գոմեշ, ձի, այծ, շուռ, կաշի, փայտ, քար, երկաթ, կապար (Կճեյա քարն ամենեն պատվականագույն է, որո հանք մոտ ի Թաղագլուխն հայոց, ուր տեղեն ուզողն կերթա ու պետք եղածին չափ հանել կուտա ձրիաբար, միայն սարակներուն վարձք կը վճարե, այսպես է նաև երկաթի հանքն) ունի նաև հարյուրավոր հանքային տաք ու պաղ, թթու, կծու, քաղցր ու դառն, լեղի ու աղի ջրերը, որք շատ օգտակար են այլ և այլ ցավոց ու հիվանդությունից (քաղաքս բժիշկ չունի և վերոհիշյալ ջերմուկներն են իրենց դեղն ու դարման, որք կամ խմելով և կամ թե մեջ լողալով կապաքինի իրենց ախտերեն)։



## Քաղաքիս բնակչաց ընդհանուր թիվն է

| | | | | |
|---|---|---|---|---|
| » | » | հայք | 5964 | Համագումարն է 7896 |
| » | » | թուրք | 2932 | |

## Բաղեշո շրջակա գյուղեր

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 Կուլթիկ | թիվ հայոց | 2400 | եկեղեցի | երկու | սբ. | Գևորգ և Հովհաննես ավետարան |
| Փարխանդ | « | 300 | « | մեկ | « | Կիրակոս |
| Համզ | « | 68 | « | | « | Հակոբ |
| Խըմպլցուր | « | 95 | « | | « | Հովհաննես |
| Մարգոկ | « | 460 | երկու | | | Պողոս և սբ. Պետրոս |
| 2 Կորվու | « | 390 | « | | | Հովհաննու վանք |
| Հորմիզ | « | 194 | « | | | Քիստափոր |
| Հարգդող | « | 118 | « | | | Գևորգ |
| 3 Գոմս | « | 150 | « | | | Աստվածածին |
| Մզրե | « | 105 | « | | | Գևորգ |
| Փափշեն | « | 220 | « | | | Չարխափան Աստվածածին |
| 4 Պոռ | « | 249 | « | | | Նարեկացի |
| Կամախ | « | 250 | « | | | Բառասուն մանուկ |
| Զվար | « | 300 | « | | | Սարգիս |
| Խախռեվ | « | 220 | « | | | Հակոբ |
| Ալամեք | « | 25 | « | | | Սարգիս |

Ծանոթություն.

1 Կուլթիկ գյուղավանն ունի յուր մերձ հարուստ երկաթի հանք մի, որն որ ազատորեն կհանեն և կգործածեն անարգել և իրենց ապրուստն մեծ մասամբ նույն մետաղագործեն է։

2 Սույն վանք այժմ եկեղեցի է նույն Կորվու գյուղին և հիշատակություն չկա, որ ատեն և ում ձեռոք շինվելուն, միայն տեղացիք վանք անուն կուտան նմա։

3. Գոմս գյուղեն կամ վանքեն 3 ժամ հեռու է. նորա հյուսիս Տորոս լեռանց մեջ ընտրելագույն արծաթ հանք մի կա անծանոթ հասարակության ամբոխեն, որոցմե ոմանք միայն գիտեն և շատ անգամ գաղտնի հողն բերեր ու հալեր են և փորձով ճանաչեր, այս հանքահողին փորձ ես ալ տեսեր իմ տասներկու և տասներեք տարի հառաջ, որ նույն քաղաքն էի կիսատ պաշտոնով մի, այս հանքին մոտ անտառներ ալ կան։

## Վանորայք Բաղեշի շուրջ

Գոմուց սբ. Աստվածածնի վանք, որ գրեթե կից է նույն քաղաքին արևմտյան հյուսիսի կողմ, վանահայր Վարդան վարդապետ, գեղեցիկ ձորակիմ բերան, տեղն ու դիրք անձուկ, բայց հովասուն, ջրավետ, որո պարսպաց տակեն կվազե փոքրանակի Գոմուց վտակն ի քաղաք, ա՜հ, տայր ինձ թե խմեի նորա խաղատեսկ անուն մեղրահամ ջուրն, սույն վանքն ունի քսան արտավար հող, 8—10 գյուղ թեմ, արտորայք թափու չի եղած դեռ, ունի 9 եզ, 4 կով, 3 ավանակ, 4 երինջ, 2 աշառ և 20 ոչխար և տասնեն մինչև տասն ու հինգ հազար զուրուշ եկամուտ, որով կշահվին վանահայրն և յուր պարագայք։

Ամրտոլու կամ Ամրդոլվո սբ. Հովհաննու վանք, որ նույն համանուն թաղին եկեղեցին համարված է, ուր կնստի տեղվոյն առաջնորդ, ընտիր կամարաշեն և գմբեթավոր եկեղեցիմ ունի և քանի օրինավոր սենյակներ, սույն վանքի արդյունք առաջնորդին կվերաբերվի, ունի 8—10 գյուղ թեմեր, 1 ջրաղաց, 3—4 կրպակ և յուր շուրջ պարտի ընտիր ծառաստան, ամենասիրուն տեսարան մի ունի, օդն ու ջուր առողջարար։

Ծապոկորու սբ. Կարապետի վանք, քաղաքին կից համանուն թաղին մոտ, սույն մենաստանիս հողերը նույն քաղաքին մոլեռանդ մյուֆթին ամբողջովին գրավեր և վանք այժմ բոլորովին ավերակ է։

Ավեխու վանք, որ քաղաքեն կես ժամ հեռու է նորա արևելք օդն ու ջուր առատ ու զվարթ, ունի նսեմ եկեղեցիմ քանիմ կիսավեր սենյակներ և 10 արտավար հող, վանահայրն է մոտկանցի Շուշտակ Պողոս վարդապետ, որն որ երկուերեք մշակ, 4 ավանակ, 20 ոչխար, 3 եզ, 2 կով և այլն մանր որթիկները։ Տարին 9—10 հազար զուրուշ եկամուտ ունի, այն ալ յուր վանահոր օղիին իվ, իվ հազիվ բավե։

---

4 Պոռա գյուղին մերձ վանք մի կա, որո նկատմամբ իրենց շարքին կիսոսիմ, որն որ նույն գյուղին եկեղեցին դարձած է այժմ։



Պոռա սբ. Նարեկի վանք, քաղաքեն արևելք, իրմե ժամ ու կես հեռու, սքանչելի է յուր օդն ու ջուր, անտառն ու լեռ, տեղն ու դերն մանավանդ, յուր բյուրաբեղուն հողերն, վանք ունի քարակոփ փոքրիկ բայց գեղեցիկ տաճար մի և քանի մշտական խղիկներ, վանահայրն է նույն գյուղի տեր Հարությունյան քահանայն, ունի 40 արտավար սերման հող ցանելի և ընդարձակ ոչխար արծելու լեռնասահման, ունի 59 ոչխար, 12 եզ ու կով, նույնչափ գառ ու հորթ, քանիմ ավանակ և այլն մանր տավարներ, սույն վանահայր վանուց արտյաց փոխարեն Պոռ գյուղին ձրի քահանայություն կնե։

Խնդիրկատար սբ. Աստվածածնի վանք, քաղաքիս հարավային կող իրմե կես ժամ հեռի, որո օդն ու ջուր մյուս մենաստաններու քաղցրության հետ համեմատելով այնքան բարի ու սքանչելի չէ, վանահայրն է վանեցի տեր Մեսրոբյան Եղիշե վարդապետն, ունի փոքրիկ, բայց փայլուն եկեղեցիմ ու դարպաս մի հոյակապ զանգակատնով, որն որ բաղեշցի տեր Մովսես քահանան կերտած է, ունի նաև երեսունեն ավելի քարաշեն երկահարկ սենյակներ, մարագ, ախոռ անտեսատուն և այլն, ունի ութ ու տասն գործավորներ, 90 ոչխար և նույնին կիսո չափ գառ, 10 եզ, 7 կով, 6 ավանակ, 1 ձի, 5 կտոր տուն որք վարձու կտրվին, 22 խանութ և այլն, ունի նաև 50 օրավար ցանելի հող և ընդարձակ լեռնասահման, մեկ երկու կտոր մշակված ծառաստաններ, 7—8 գյուղ թեմական ժողովուրդ և այլն։ Վանքս տարին 24 հազար զուրուշ եկամուտ ունի և եթե օրինավոր խնամվի կրկին կունենա։

Շիխիս վանք, սույն մենաստանն տեղվոյն մոլեռանդ թուրքեր գրավեր են գրեթե երկու դար առաջ և այժմ իբրև դպրեվանք կհամարվի թրքաց, ուր կրկրթվին իրենց հաթիպ ուսանողք և կելլին որպես տեվրիշ և մրուտներ, սույն վանույս եկեղեցվոյն մեջ քանի անհայտ սրբոց շիրիմներ կան, զոր ականատեսներն ինձ պատմեցին, ըղձալի էր ինձ զայնս տեսնել, բայց անկարելի եղավ, ժամանակի փափկության և խստակրոն թրքաց մոլեռանդություն արգելք եղած էին ինձ անհնարին կերպով։

Հոյակապ եկեղեցիմ ևս Ամրտոլու վանքին կից կա սբ. Սիոն անուն, սա ևս թուրքեր մոտ տարիներս գրավեր են, 290 տարվան շենք կհամարվի, որ թրքերն տարին քանիմ անգամ աղոթի կուգան, երեսի վրա կմնա և փափագողն կրնա մտնալ ասոր մեջ և տեսնել, տեսա և ես ու շատ կարոտով դիտեցի թեև շուներն ալ ազատ էին հոն եր ու մուտ ընելու։ Ահագին բարձրություն ունի, կամարաշեն և առանց սեան, մարդս կսքանչանա նկատելով, երբ ուշի ուշով դիտե նույն կամարներու ընդարձակությունը և հաստատությունը, որոնք սեղանն սիրատարած մորմ գրկի պես լայնաբաց է, որոնց վրա քանիմ անսուրբ մեռյալներ թաղեր են, նույնպես աջակողմյան ավանդատան մեջ քանիմ փաթթավորներ խորեր են, ամբողջ եկեղեցվոյն կամարներն ու պատեր խաչանիշ կերտվածներով լիքն են, տեղ-տեղ հայկական գրերով զարդարված, բայց ինչպես խաչի նշաններն շատեր եղծեր են, նույնպես նույն գրերն ավերեր են, այնպես որ անընթեռնելի եղած են, թեև կամարակապներու մեջ կան գրեր, բայց և նույնպես կարելի չէ կարդացվիլ, որոնք ջուրն ու խոնավն առանց մուրջի եղծեր են մեծ մասամբ։

Մի եկեղեցի ալ տեղվոյս Մուֆթին գրավեր ու իրեն նախնյաց շիրիմ համարեր է, սույն սևադեմ մարդն ինչպես հասարակաց կարծիքն է, թե օձն յուր թույն սողսողիկեն կառնե նույնպես տեղվոյս քրիստոնյաստ թրքերն ալ իրենց աղուն ու լեղուն սույն անհոգիեն կստանան, որն որ սաստիկ հայատյաց է, բնավ քրիստոնեի բարև չի տար, մինչև անգամ երեսնին չուզեր նայել, երկրապիշ ու եղեռնավոր ոգիմն է։

Եկեղեցատիպ ընդարձակ ու հոյակապ կերտված մի ավեր Մեյտան ըսված տեղ կա, որուն համար ավանդությամբ կսվի, թե հայոցն է եղեր, սյունազարդ և նկարակերտ շենք մի է՝ հրաշալի քանդակներով զարդարված վայելուչ դիրքիմ վրա քաղաքին բարձրագույն տեղվոյմ վրա, որ մարդու ուշ կգրավե խպատ, ափսոս որ այս շենքն ալ անխնամ կմնա, ուր հազիվ ուրեմն միայն աղոթքի կուգան մերձակա թուրքերն ու կգնան թողլով զինքը ամայության մեջ։



## Բաղիշո Շատախ գավառ

Սույն գավառս հիշյալ քաղաքի արևմտյան հյուսիս Տորոս լեռանց մեջ կիյնա իրմե չորս ժամ հեռու։ Տեղն հովասուն ու ջրաշատ, բայց լեռնոտ են ընդհանրապես և մշակելի հողերն քիչ, այսուամենայնիվ ընդարձակ լեռներ ու խոտավետ վայրեր ունին ոչխարեղենք սնուցանելու համար բնակիչք ընդհանրապես քուրտեր են։

## Տատիկ գավառ

Սույն գավառ Բաղեշի քաղաքեն երեք ժամ միայն հեռի է նորա հարավ արևելք Տորոսի փոքր շղթաներուն մեջ իբրև պարզ հովիտմ, քաղցրաբույր են իրեն օդն ու ջուր, լեռներ անտառներով և մացառներով պճնված և լիուլի ջրերով առատ, հողերն թեև սակավ այլ արդավետ են հույժ և եթե շարաղետ իրմ մի կա՞, որ տեղացվոց կյանք կդառնացուցանե, այն է միայն, որ գարնան եղանակին Սղերտի ու Տիգրանակերտի վրանաբնակ քուրդերն կուգան այս լեռանց մեջ և կնեղեն տեղացիներն, որուն համար մեր հոն տեղացի հայերն մուրացիկիմ պես աղքատ են ու թշվառ։

## Գյուղորայք Տատիկու

| | | | | |
|---|---|---|---|---|
| Սասիկ | թիվ հայոց | 130 | եկեղեցի մեկ սբ. | Վարդան |
| Վանիկ | « | 580 | « | Խաչ |
| Կոմս | « | 70 | « | Թաթեոս |
| Ծղկաշ | « | 210 | « | Թեոդորոս |
| Կիբխ | « | 151 | « | Աստվածածին |
| Կալհոկ | « | 155 | « | Պետրոս |
| Մոճկունք | « | 390 | « | Գևորգ |
| Պաս | « | 460 | « | Սարգիս |
| Ռասին | « | 28 | « | Լուսավորիչ |

## Կյուզել Տերե գավառ

Արդեն սույն գավառակն սիրուն յուր անունն իր մեջն ունի, երկու ժամ հեռու է Բաղեշեն, նորա արևելյան կողմ Վանա լճակի հարավային լերանց ամենաչքնաղ հովիտ մի, ընտիր մշակելի հողեր, որք պարարտարոտ լեռներով ու անտառներով փողփողած է, օդն ու ջուր եղեմային, տեղացիքն իրենց երկրին պես կայտառ են թեև աղքատության պատճառով շատ անգամ տարեկան ու գարի հաց կուտեն, բայց իրենց մանուկներ կարմիր վարդի պես գիղավոր են, ափսոս ու բյուր ավաղ, որ սույն գավառակս ալ Տատիկ գավառին նման անոդոքելի քրդաց ճիրաններուն մատնված է զի Սղերտի վրանահարկ քրդերն գարնանե մինչև աշուն ասոնց կուսագեղ լերանց ու հոտաց համն ու հոտ կտանին, թեև տեղացվոց կեսն այլ քուրտ ցեղին են, բայց նոքա ալ հայոց պես հարստահարված են համարյա թե իրենց մեծերուն բռնությամբ։

### Գյուղաբայք Կյուզել Տերեի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հորձուտ | թիվ հայոց | 39 | եկեղեցի մեկ սբ. | Աստվածածին |
| Տաշտուք | « | 48 | | |
| Ցուք | « | 68 | « | Կարապետ |
| Հանդ | « | 165 | « | Աստվածածին |
| Սազ | « | 228 | « | Թուխմանուկ |
| Նել | « | 98 | | |
| Կարփ | « | 180 | « | Լուսավորիչ |
| Ուսթաղ | « | 41 | | |
| Կութ Խարգիթ | « | 273 | « | Աստվածածին |
| Գոմս | « | 165 | « | Թուխմանուկ |
| Ճըլկան | « | 30 | եկեղեցի չունին | |
| Սքնտյան | « | 103 | | |
| Ճաբերդ | « | 64 | | |
| Հիսու | « | 31 | | |
| Խարդ | « | 65 | | |
| Կոսմ ճկոյթ | « | 28 | | |



## Մոտկան գավառ

Սույն այս անվանի գավառն բուն Սալնոճորո կից նորա արևմտյան կողմն է, Բաղիշի քաղաքեն երեք ժամ հեռի, Տորոս լեռանց ամենեն խտացյալ և վտանգավոր տեղ, որն որ նույն սարին համախմբած փունջն կներկոյին ու հարավն կիյնա Մշո Շատախ գավառն, Բռնաշեն և նոյթ արևմուտքեն կերկարի ու կընդարձակի մինչև Տուժիկներ, իսկ հարավեն Սղերդ երկիրմ, որ պատսպարված է սեպասաղարթ լեռներով և խոր ու խիտ անտառներով, բոլորովին անմատչելի թշնամյաց կարծես բնության պարսպեր ու ամրացուցեր է զայն իսպառ անառիկ շինելու պայմանավ, որո օդն ու կլիման խիստ առողջարար է, քիչ տեղ սերմ-սերմանելի հողեր ունի, այլ բերքն ու պտուղներ հարստահիլ են, նամանավանդ ոչխարաց հարմար տեղերն անօյուտ են, ուր քանիմ բյուր արոտականք կրնան տածվիլ տիրապես։ Տեղացիքն կարի սիրահար են ազատության, պանդխտություն չգիտեն և կառավարություն չեն ճանաչեր և բնավ տուրք չեն տար նմա և նա կառավարության շատ անգամ ուզած է զիրենք նվաճիլ բազմատեսակ փորձերով ու կռիվով և միշտ անհաջող գտնված է։ Իմ Սալնոճոր գտնված միջոցին քանիմ օր առաջ կրկին նույն փորձերն կրկնվեր էր, բայց և նորեն վնասով հետս մղվեր էին տաճկական արապ զորքերն քանի հատ մատաղ տալով մոտկանցոց կորովի բազկին, զի ինչպես ըսինք իրենց կիրճերն որպես պահակ դուռն ամուր կպաշտպանեն զիրենք և իրենք նեղի եկած պահուն գիտեն արծվորեն քարեր սլանալ ու սուզիլ, զինավարժության մեջ շատ հաջողակ են, ընտիր վառոդ սորված են շինել։ Ինչ որ ըսինք համառոտ քրդաց համար, նույն պետք է իմանալ նաև մոտկանցի հայոց համար, որք նույնպես իբրև լեռանց որդի ամենքն ալ քաջակորով են և սրտոտ, որք զուտ հայերեն կխոսին թեև ժամ պատարագ, դպրոց ու դաստիարակ չունին, գիտեն որ քրիստոնյա են, ի կրոնս ջերմ են ու աղոթասեր, պահք չեն լուծեր և տարին անգամ սբ. հաղորդությունը կառնին անխափան, 2—3 քահանա ունին իրենց համամիտ, որք

հայր մեր հերգինս գիտեն արտասանել մեքենայորեն և այն բավական համարված է։ Մոտկան չկրցի երթալ պատճառն կրկնել պետք չէ, այլ այս համառոտ տեղեկությունները քաղեցի յուր բնիկներեն, որք ինձ ծանոթ էին արդեն և հավատարմության մասին երաշխավորված։

## Գյուղորայք Մոտկանու

| | | | | |
|---|---|---|---|---|
| Բրուտք | թիվ հայոց | 149 | եկեղեցի մեկ | սր. Հակոբ |
| Մղունք | « | 75 | « | Ստեփանոս |
| Օձենք | « | 71 | « | Գևորգ |
| Նազիմ | « | 140 | « | Կիրակոս |
| Վերի թաղ | « | 41 | « | Բրիստափոր |
| Հայու թաղ | « | 105 | « | Աստվածածին |
| Վերին Աղբներ | « | 142 | « | Թուխմանուկ |
| Ներքին Աղբներ | « | 150 | « | Ստեփանոս |
| Խուտ | « | 140 | « | Էջմիածին |
| Գնցու | « | 315 | « | Գևորգ |
| Բաշախ | « | 175 | « | Հակոբ |
| Մրցի | « | 148 | « | Սարգիս |
| Գոկնուտ | « | 108 | « | Աստվածածին |
| Մրցոնք | « | 105 | « | Գևորգ |
| Շենք | « | 176 | « | Աստվածածին |
| Արվի | « | 217 | « | Թուխմանուկ |
| Գրխու | « | 460 | « | Տերնակ |
| Մեծ ձոր | թիվ հայոց | 35 | | |
| Տարեկավան | « | 9 | | |
| Տոլկ | « | 49 | | |
| Տոլան | « | 180 | եկեղեցի չունին | |
| Մգրե | « | 69 | | |
| Թավեք | « | 905 | | |
| Ղանտար | « | 84 | | |
| Ջիարեթ | « | 902 | | |

Ծանոթություն.

1 Մոտկան գավառի ամբողջ քուրտերն երեք գլխավոր գերդաստանե հառաջ վաղած են, այն է՝ Սրձունյանց, Իմղեկցվոց ու Դասնանցվոց տուներ են, հայախառն կխոսին, որ առանց այն խառնուրդին զոզցես կատարյալ քրդեր են խոսելով անկարելի է ամբողջապես կրնան բանմ խոսիլ, որք ինչպես թագավոր չունին, նույնպես և իրենց լեզվին



## Բաղեշ քաղաքի, յուր շրջագայից և գավառաց ընդհանուր գյուղորայք

Ընդհանուր գյուղորայք հայոց 67

Ընդհանուր թիվ Բաղեշ քաղաքի բնակչաց

« հայոց 5964
« քրդաց 2932

Ընդհանուր թիվ Բաղեշի շրջակա անձանց

« հայոց 5544

Ընդհանուր թիվ Տատիկ գավառի բնակչաց

« հայոց 2394

Ընդհանուր թիվ Կյուզել Տերեի բնակչաց

« հայոց 1621

Ընդհանուր թիվ Մոտկան գավառի բնակչաց

« հայոց 4950
« քրդաց 2720

Համագումարն 7670

---

կապ ու հանգույց ալ չունին, ոչ գիր ունին և ոչ դպրություն համարյա թե ո՛չ ազոթատեղ և ոչ մաղթանքի, այսինքն ո՛չ շեխ կամ մոլլա ու ո՛չ ճամի կամ մետրեսե։ Սույն խառնատարը քրդաց համար ավանդություն կսե, թե իրենց ազատությունը չկորցնելու համար լեզունին կորած են, շատերն հայոց պես եկեղեցյաց խունկ ու մոմ կտանին վառեն ու կծխեն, միայն երեսնին խաչակնքել չեն գիտեր, ու կսին քուրտ եմք։

2 Գավառիս մեջ Լուսավորիչ անունով մենաստան կամ վանք մի կա քրդաց ձեռք, ինչպես նաև բազմաթիվ եկեղեցիք, որոց երկնահանգույն տաճարներ ու դարպասներ մարդուս աչք ու միտք կշլացնեն իրենց հրաշակերտությամբ, որ տարին մի անգամ որոշյալ օրեր կերթան ու մատաղներ կրկտրեն. ա՜հ, անմոռանալի հիշատակներ, ո՞վ կրնա տարակուսել, թե այսոնք ամենն ալ հայ են և ո՞ր սիրտ չի տրորվիր, երբ լսե ու տեսնա սույն հայ եղբարց այն ցեղական և կրոնական պաշտամունք։ Ա՜խ, ո՞վ պիտի օրմ մեր ազգին ըսե թե դուք այսուհետև ազատ եք. ա՜հ, ես հազար անգամ մատաղ լինեմ նրա անմահ հոգուն։

Սալնոձորո աշխարհի ընդհանուր ծննդոց թիվ

« հայոց 20473
« քրդաց 10640 համագումարն 31113

29 հունիս. Բաղեշեն հեռագիր մի քաշել տվի ի Կ. Պոլիս սրբազան պատրիարքին իմացունելով իրեն, որ ինչպես Մուշեն, նույնպես և այստեղեն շփոթության պատճառավ թղթատար չգտնվելոյն պատճառավ ստիպված եմ երթալ ի Սղերտ և անտի տեղեկագիրնիս ղրկել, ուստի փութով մնաս բարովն ըսի Սալնոձորո և տեղվոյն գայմագամին ոստիկանմ առի (հիշյալ գայմագամն վանցի Թիմուր Օղլուներեն էր, որո եղբայրն Մուշի մյութեսարրֆ ինձ արդեն հանձնարարություն տված էր իբրև նախածանոթ հայրենակից) ում շնորհիվ անտարակույս էի ամեն արկածներեն պարզերես ազատվելուս։

Ահա տապախարշ օրմ է և մենք Բաղէշ քաղաքի արևմտյան ձորակեն առ կողս քերելով Տելիքլի թաղեն կանցնիմք արևուն կրակեն եռալով, որո տաքություն արտաքո կարգի ազդեցություն կնե ի մեզ, տեղվոյս լերինք ընտիր-ընտիր մացառներով զարդարված են, որոց նայելով տաքն ու տագնապը կմոռնամ և Մոտկանա ամեհի լերանց կմոտիմք, որոց ստորոտներեն շարն ի շարն խումբ-խումբ Շերուան քրդերի նպատակաբարձ ձիք ու ջորիներու կարավանն սարն ու ձոր քերելով կուգան նեղ ու խրթին ուղիները, որոլերն գահավեժ լեռներ են և ներքև խորանդունդ հեղեղատ ու Բաղիշո գետակ, սույն ճանապարհներն խիստ նեղ լինելուն, ճորով մի մարդու անցք կուտա, իսկ իմ հետիս տիրասեր ոստիկանն, ամբողջ ուղևորք կրկեցուներ և մենք կանցնեինք ապահով (մարաց ժողովուրդն սաստիկ կվախենա զինվորներե իմ զգեստս ալ զինվորականի էր) ուստի քուրդեր լեղապատառ կասանեին մեզմե, որ ատեն արդեն մեր սիրտ երկյուղեն կորեկիմ հատի պես մաշված էր։

Երկու ժամ ու կես եղավ քաղաքեն ելլնիս ու կանցնիմք շքեղ ձորակեմ ուր խառն բուսած են զանազան մրգերու ծառեր, ուղեկիցս կասեր ինձ, թե այս ծառաստանք, այգիներն են, որոց տերք քրդաց ավիրման վիրնալով տակալ գյուղերնին բրեշակ թողեր ու խույս տված էին, կաղնի ծառիմ հաստությամբ բարունակներ կային լեցուն ողկույզներով, որք մատաղ մանուկիմ պես վայրենի ծառերուն ծալեծալ փաթթվեր էին, կարծես իրենց երկյուղեն, սույն հովտիս մեջ կըմընային մեկ սահ տաճկական զորք Սղերտի անցք ու Բաղեշ քաղաքն պաշտպանելու մոտկան քրդերի հրոսներեն, էհ, ձիանց նյուսեն գեռաս ու թութ քաղել ուտելով կերթամք սրտի, առանց որևէ բան նկատելու մինչև այն վայրն, ուրտեղ Պիթլիզի ջուրն կընթանա հարևմուտս և մեն չայն անցնելով գիմենք ի հարավ։ Ահ, ցավ էր մեզ այս գետակեն հեռանալ, որ յուր խոշյունով ու ծուփծփկներով ըզմեզ կգրվարճացներ իբրև կատակասեր ընկեր, հայնժամ գլուխս ուրիշ բան կզգար և ուրիշ կարոտ, կիմանայի թե անոթի եմ, ընկերս ալ նույն վերջին կիրք կրկրեր, որուն համար իջանք գետին գեղեցիկ եղերք, ձիեր սանձարձակ թողին արոտ և մենք մնացինք քանիմ ժամ անձնամայի ու ահալի տեղ, ալ մի՛ հարցուներ, թե ի՞նչ կերանք ու խմեցինք, Սալնոձորո կարմիր խորոված ու ոգելիքն ազնիվ մեզ լեղի ու զառնություն կթվեր ու կդառնանար մեր սարսափահար սիրտն, բյուրավոր խորհուրդներով պաշարված։

Ձերկարիմք, կրկին ելանք ու կերթամք անտառոտ գայլի ու արջու լեռնոտ որջերեն ու կարիպին կյանք մեկ սոխի արժեքն հազիվ թե ունի (այս այն կատաղի ու անել լեռներն են, զոր երբեմն Քսենոփոն հունական բյուրներով կրպաշարվեր) ու մեր ձիերն թաթիկ-թաթիկ և տոտիկ-տոտիկ, աջ ու հաջ ծածանելով ու կլորվելով նոր ոտք ելած տղայիմ պես հազիվ կշորորային ու մահվան քրտինքով Կորթվաց թխպոտ ու նենգավոր սարերեն ճամբա կառնեինք, ուր վանեցվոց ըսածին պես «օձն յուր պորտով, հավքն յուր թևովն» հազիվ կսահի ու կանցնի։ Բայց մեր դեմ քրդական քեռչեր կուգային իբրև մոզերու երամ տղալով վզալով կանցնեին անհոգ, որք իրենց տուն տեղ կրիայի պես առանձ իրենց շալակ, կանայքն իրենց որդն ու որեթ լեցուցած կիսաթեռ ճուալն նետած քամակ իբրն մատակ գամփռ ոչխարներու

հանեն (սոքա են ահա, որ կերթան Բաղեշի պատուարու, Մոկաց ու Շատախի լեռներ և Քոչար կսվին, ասոնք թափառիկ կյանք կանցունին, տարին բոլոր, ամառ ցուրտ երկրներ, ձմեռ տաք վայրեր գնալով)։ Է՜հ, անոնց վայրենի կեցութիւն կնպաստե իրենց, բայց մեր ծունկն ու ոտներ կբեկվին, վերջապես այսօր տասներկու ժամ անընդհատ քալելով, իյնալով, կայնելով և մեռնելով ու ապրելով, հայրենակցացս ըսածին ի պես ճորով-ճորով, հազար ճորով, հասանք այն ստվար կարավանին, որք մեզմե երկու օր հառաջ ելած էին Բաղիշեն, ալ մեզ վրա կարողութիւն չէր մնացեր, բայց և այնպես սրտերնիս գոհ էր, նկատելով, որ ալ այնուհետև ապահով էինք ավազակաց երկյուղեն, զի սույն կարավարի ուղեվորքն ամենքն ալ զինվորված էին նոր-նոր զենքերով և վստահ ամենեին, ուր գտա իմ նախածանոթ տեր Եղիշե Գորնյան, որ 4 օր առաջ գնացեր ի Մուշ և Մամբրե եպիսկոպոսեն ձեռնադրված էր քահանա Սղերտ քաղաքին, ընդ որս նստանք անուշիկ ու պաղ աղբյուրիմ գլուխ, կրկին նորոգված ի սեր մտերմության։ Ո՞վ կրնա թարգմանել մեր սրտի բերկրութիւն ու ոգեպարար կյանքն, որ այն օր ի համայության վայելից ընտելացանք։

Վերջապես ընկանք մեռանք քան թե քնացանք նույն գիշեր լերան վրա և արշալույս էր ձայն տվին ելանք դարձյալ անհուն լեռներ ու իջանք և լույս էր ու ի մոտո և ի հեռավոր կրդնմարվեր Սղերտի գյուղօրեից ցան և ցիր տուներ ուր կբնակին Տետերցի, Սլկոնցի, Կճկունցի, Իզտնանցի, Խալկոնցի, Ալանցի, և Տայանցի ցեղ քուրտք Սղերտու, կարծես ամենքն ալ ավերակ էին, զի ինչպես ըսած եմ արդեն, լեռներու հովասուն տեղեր սուզեր էին բնակիչք։ Արև քանիմ տեգասպարեզ բարձրացած էր և մեք կեռայինք նորա ամպհով կրակեն և որ անտանելին է թունախայթ մոզակներ, ու մժիկներ ու ճանճեր մեր աչքն ու երես կը խորովեին իրենց սրածայր խայթոցներով։ Սղերտի հյուսիսակողմեն անհնարին անդունդիմ մեջ մտանք, ուրտեղեն կհոսի սրարձավ Սերթ անուն դիվահար գետն և կերթա կխառնվի Բաղեշեն հոսած վտակներու հետ, որք կմիանան Շատախի ջրերուն հետ, կրկազմեն անվանի գետն Տիգրիս։

Սույն գետն անցնելով ստիպվեցանք մեր կարավանն թողուլ, որ համր կբալեր ու ըսկսանք թեավորվիլ ու թռչիլ, նկատելով, որ մնացած մեկ-երկու ժամվան ճանապարհն ապահով էր և լավ կհարմարվեինք մարդակերպ մոզ-եղներու ձեռքն իյնալ, քան թե տեղվոյս խտացյալ խիստ մոզերեն ու մժղուկներեն արյունաքամ լինել, որք կուրորեն և անխնա ուր որ հասնին գոռ կնին ու կմտնին, թե ականջ, թե քիթ և թե բերան, շունչ առնել չէին տար մարդուս, ի՞նչ հարկ կա այս ամենն ասել, փայլակիմ պես ցոլալ ու անցնիլ պետք էր ազատվելու համար այն անիրավ ու անիծյալ կոր մժիկներեն և տապախարշ օդեն, որով ծով դարձեր էինք կրակ ու բոց քրտինքին մեջ, իմ փուշտեպանն քան զիս ավելի կնեղվեր ու կաճապարեր, այլ ես կզգուշացնեի նմա, որ իմ ձիս կմնա,—հոգ չէ կսեր իմ երիվարս հեծիր, արդեն խեղճ անասուններ քրտինքի մեջ կը լողային, բայց իմ ջերմակս յուր պայտերն իր ուժին հետ կորսնցունելեն ետք յուր թելն ու դերձանն կտրեցավ, ուժաբեկ եղավ ու լեռան կատարն, հասանք չհասանք ալ կեցավ մնաց և երբեք ոտնփոխ չկրցավ առնիլ, անդ թողուցի զինք ոստիկանին հետ և ես նորա ձին աշտանակած սլացա դեպի Սղերտ, որ մոտ էր և կերևնար, ուրկե մինչև քաղաք երկու քառորդի ճանապարհ էր։

Այլ ինչևէ, մենք շուտով հասանք Սղերտ, ուր խուռն բազմությունք ասա և անդ կը եռային և շատեր մեզմե կը հարցունեին թե դուք ո՞վ եք և ո՞ր տեղեն կուգայք, որոց մերթ ընդ մերթ անտարբեր պատասխանելով անցանք քաղաքամեջըս (կսվեր եղեր թե քննիչ պիտի գա եղեր Բ. դրոնեն, շատերն կարծեր էին, թե ես այն եմ) առաջնորդարան Հայոց Սղերտի։

## Սղերտ կամ Խերթեթ քաղաք

Քաղաքիս կառավարիչ մյութասարֆ է և Տիգրանկերտի կուսակալին իշխանության կվերաբերի, նույն քաղաքեն չորս

օրվան ու Բաղիշեն երկու օրվան ճանապարհ հեռի Տորոս լեռանց կամ Կորդվաց սարերու հարավային ապառաժքիմ կամ գեղեցիկ դարևանդիմ վրա շինված է, որո առաջ փոքրիկ այլ գեղեցիկ դաշտ մի կտարածի, որ երթալով դեպի արևմուտք կընդարձակի ու կծովանա և այնքան կընդարձակի յուր ընդարձակ ծավալն, որ ամբողջ հորիզոնն ու երկիրն իբրև օվկյան մի կերևա աչաց տեսլյան, նույնպես հարավն ու արևելյան կողմերն, որոց առաջինն կտանի ի Մերդին և երկրորդ կհայի ի Բաբելոն կամ Սինարա դաշտն։ Յուր ամբողջ լեռներն ու բլուրներ խիստ ճոխ կերպով զարդարված է անտառներով, մացառներով և խաղողի ու մրգեղյանց այգիներուն, ամենն ալ ոստին կամ անջրդի են, որքան ցորեկվան ջինջիրյալ արևն կհալե ու կիզե նոցա տնկական նյութն ու հյութն, բայց սակայն գիշերվան դարմատարմ տեղն սիվք զիրենք անակնկալ կերպով կը ցողե ու կզվարթացունե, որով հողագործությունն ալ շատ արտասովոր է, նկատելով իրեն խորտ ու բորտ, կրակոտ ու լեռնոտ սահմանին, միով բանիվ բազմաբեղուն է ամեն մասամբ ու մեղվաբուխ։ Քաղաքս այս կամ Սղերտ ավանն շինության մասին շատ ըստորին է ու տգեղ, օտարականմ տեսված ատեն կկարծե թե զառամեր, ծերացեր ու հոգեվարքի վերջին ճգնաժամին մեջ կտքա, կրակ ու մոխիր մաղված է վրան, կարծես համատիեզերական հրաբուխն զինք ծներ է նախապես կամ Հեփեստոսն[78] յուր դժնդակ հուրն դրեր սույն քաղաքին հիման տակ ու կվառե զայն հոտից ցգլուխ, ատելի ու աղտեղի ապավառներով լեցված է քաղաքին ծուռ ու շիտակ փողոցներ, դժոխքի հոտ կբուրե իրմե, ճամբաներ տներու ու դռներու շրջագայք հոտած տիղմերով, նեխած կոյուղիներով, խաղախորդներու լպիրշ գործատուններով ապականված, որո համար տեղացիք, քաղաքացիք ամենքն ալ գրեթե փիսոտ են ու ճպռոտ, անլվա և աղտոտ, անմաքուր ու անհամբույր, արապի կողը ունին, ափախավար, լուսնոտ, կույր, կուզ ու շաչալ են, կհուսամ որ զեն ցավեր կարդալով կամ ո՛չ ի նպաստ իրենց գրելուս, է՞հ, որի՞ հոգ, կուզես դևահարին, իրենց հաշվոյն ո՞վ պիտի նայի, ա՞հ, հիրավի



կայծակ կը ցոլա մարդու ուղեղեն նկատելով սույն երկրացվոց լքյալ վիճակ, միով բանիվ քաղաքիս բնակիչներ ամենքն ալ առանց բացառության արաբախոս են, փոքր մանուկներն անգամ, քրտաթրքերեն ոմանք իրենց մայրենի լեզուն գիտեն, իսկ հայերն ամենևին, միայն մեկ-երկու անձինք կան, որ հայկական լեզուն ծեքծեքումով հաղիվ թե կխոսին։ Զափազանց շահասեր են ու կծծի, տուներու շենքերն անպիտան, իրենց կերակուրն անճաշակ, ավելորդ է ասել հավասարապես աննպատակ մարդիք են, իրենց միակ ու կենսական նպատակն ու կյանք ամենայն կեղտոտությամբ քանիմ փող շահելնին է միայն։

Տեղվոյս ազգային ունին քարակոփ ու տգեղաշեն սբ. Սարգիս անունով եկեղեցիմ, որո ներս մարդս որքան որ կրնա երևակայիլ խավար ու խոնավն, արքան մութն ու գեհին է ու անղարդ և անսաղարթ և այն պետք է վեր առնել նյութապես և բարոյապես թշվառ ու անբաղդ։ Դպրոց չունին, թե արաբախոս վարժապետ մի ունին, որ կնմանի եսֆայի ֆելլահներ, անպատսպար մանուկներ ձմեռ այն եկեղեցվոյն մեջ դասերնին կառնին և ամառն նորա երեսբացն, որուն միայն վրան հողածածք կա միայն, աշակերտք հեգարան, սաղմոս և ժամագիրք կուսանեին, առանց հասկանալու, իրենց դաստիարակն ալ չէր հասկնար ի՞նչ որ կը խոսեր, ա՞խ, կարեկցության արժանի վիճակ, կրակ կը լցվի նկատողի սրտին ու լերդին վրա, ա՞հ, կենդանի մեռյալներ տեր տեսցե և այց ընե ձեզ։

Քաղաքիս քրդաթուրք ազգե ոմանց տուներն բավական վայելուչ ճաշակով շինված են, մանավանդ կառավարիչին բնակածն ու Համիտ աղային, որք երկրացվոց բռնի շինել տված են, ապա թե ո՞չ մյուսներն ալ հայոցս տուներու նման անպիտան են...։ Հագարացիքն որքան տգետ այնքան ալ մոլեռանդ են ու դյուրագրգիռ, մարդ մի մեռուցանել կոքով մի կոտրելու չափ արժեք ունի իրենց քով, մերաղնյաց հետ բնավ քաղցրությամբ խոսել չգիտեն իբրև իրենց կեավուր կամ ըստրուկ կհամարեն զիրենք, միայն մեկ բան կա, որ հայոց նեղվիլը փոքր ինչ

կթեթևացունե, այն է, որ այս քրդերու գլխուպետներ միմյանց համաձայն չեն ու իրարու հակառակ են ընդմիշտ։

Տաճիկներ մինարեով երեք ճամիներ ունին, ուր կը կարդացունեն իրենց տղայք, Ռուշտրեի դպրոց ևս ունին, տաճկերեն սորվացունելու համար, բայց բարեբախտաբար ինք կար անուն չկար, շատ ընդարձակ կլինի պատմել տեղույս գավառապետին Համիտ աղային հետ տեսնվելու և նորա առիթներն մի ըստ միոջե պատմելն, ինչպես նաև քաղաքիս ամեն կողմ և մեսճեետներն պտտիլը, մանավանդ թե եթե ուզիմ չեմ կրնար գրել, վասնզի գրած գրության ամբողջ կտղկվի ձեռքես ու ճանկես վաղած վտակորեն քրտինքես, օ՜ֆ։

Սղերտի բերքերեն են՝ տորոն, կաթտան, կղթոր, աղ, նուռ, թուզ, խաղող, չամիչ, մեղր, ըռուպ, ձեթ, ոչխար, այծ, եզ, գոմեշ, էշ, բուրթ, ձի, ջորի, շալ, քաղախիկ, ապա և չուռ։

Արհեստներն են՝ խաղախորդ, զինագործ, ատաղձագործ, դարբին, շալագործ, դերձակ, որմնադիր, քաղատոս, հողագործ, ոսկերիչ և այլն, բացի հյուսնութենեն և տապաղեն մյուս արհեստներն հետևյալ են ու աննշան գի սղերտցիքն ընդհանրապես դատարկապորտ են և ծույլ, շատակեր և դժգույն ու կերմաշ կենդանիք են, շատ խոսել շատ կսիրեն մանավանդ թե սուտ խոսելու համար հատուկ հաճույք մի ունեն, կարճամիտ և ապուշ են, եթե գովելի ձիրք մի ունեն այն ալ հայհոյել առանց աջ և ահիակ նայելու զարնել, կոտրել և գողնալն է, վերջին մասն հառաջ գնացեր է և որպես օրինավոր արհեստ համարված է իրենց համար (քրդաց) ի մի բան սոքա կարծես բնավ գեղեցիկին բարվոյն ու ազնվագունին փափագ չունին։

## Սղերտ և յուր շրջակա գյուղօրայք

| | | | |
|---|---|---|---|
| Սղերտ քաղաք | Թիվ հայոց | 2400 | եկեղեցի մեկ սբ. Սարգիս |
| Այն Մըլք | « | 24 | |
| Կազար | « | 16 | |
| Գնուլ | « | 17 | |
| Խոշյան | « | 32 | |



## Շիրվան՝ գավառ Սղերտի

Սղերտեն ութ ժամ հեռու նորա արևելք երկիր բարեբեր, որո լեռներ անտառներով ու խաղողի բարունակներով զարդարված, ընտիր խաղող, չամիչ և քաղցր կելլա, օդն տաք, ջուրն առատ, բնակիչքն մեծ մասամբ քուրտեր են։

## Գյուղօրայք Շիրվանու

| | | | | |
|---|---|---|---|---|
| Կելի | Թիվ հայոց | 24 | | |
| Կոբենա | « | 320 | եկեղեցի մեկ | սբ. Հակոբ |
| Հաղվան | « | 160 | | |
| Մսղոբան | « | 162 | | |
| Զղղիկ | « | 11 | | |
| Խանդուկ | « | 80 | | |
| Ֆուքբան | « | 18 | | |
| Սավ | « | 80 | | |
| Մզբե | « | 56 | եկ. | Ամենափրկիչ |
| Ճում | « | 49 | | Աստվածածին |
| Նապայքն | « | 160 | եկեղեցի մեկ | սբ. Գեորգ |
| Սահրաս | « | 120 | « | Թուխմանուկ |
| Հավին | « | 162 | « | Աստվածածին |
| Մատան | « | 140 | « | Գեորգ |
| Կարվե | « | 80 | եկեղեցի երեք | անուն |

## Սղերտի Խարզան կամ Պշերի գավառ

Սույն գավառակն կիյնա Սղերտի արևմտյան կողմն իրմե յոթ ժամ հեռի, դիրք լեռնային և մեծ մասն դաշտային է, օդն ու ջուր խիստ են, բայց երկիրն բարեբեր։

## Գյուղօրայք Խարզանի

| | | |
|---|---|---|
| Այն կասար | Թիվ հայոց | 240 |

Ծանոթություն

Շիրվան գավառն ունի ամենաբնտիր ոսկիի հանք մի, որ շատ քիչեր գիտեն և դիտմամբ այլոց չեն ուզեր հայտնել, որ չինի թե կառավարություն իմանա ու գործածե և զիրենք չարչարե։

| | | | | |
|---|---|---|---|---|
| Մելհայ | թիվ հայոց | 230 | եկեղեցի սբ. | Աստվածածին |
| Պալունի | « | 200 | « | Մինաս |
| Կբրե Հասան | « | 56 | | |
| Խուպե տարե | « | 200 | | |
| Հարքալ | « | 210 | | |
| Ֆառաճ | « | 120 | | |
| Սբպբհի | « | 9 | | |
| Կոլոմասկ | « | 210 | | |
| Կոնտե Նու | « | 38 | | |
| Մամլայե | « | 104 | | |
| Վերին Պարզան | « | 200 | | |
| Ներքին | « | 175 | | |
| Ցժժկան | « | 74 | | |
| Մալա Կուշան | « | 49 | | |
| Նասարա | « | 50 | | |
| Սեվկա | « | 145 | | |
| Հարզալուս | « | 310 | | |
| Պբվիխի | « | 35 | | |
| Տլպե | « | 40 | | |
| Զբժդ | « | 600 | | |
| Պդեգի | « | 64 | | |
| Կանի Պարդա | « | 172 | | |
| Մալաֆա | « | 400 | | |
| Մարմարունա | « | 64 | | |
| Ճաֆան | « | 160 | | |
| Խարե մալա | « | 32 | | |
| Զինավֆ | « | 126 | եկեղեցի | սբ. Մինաս |
| Սեյիտ մեյրեմ | « | 32 | | |
| Պետո | « | 80 | | |
| Վարի հափմիկ | « | 80 | | |
| Վերի հափմիկ | « | 42 | | |
| Տրմսուկ | « | 160 | | |
| Քոխա | « | 56 | | |
| Ճոշ | « | 80 | | |
| Զիարաթ | « | 24 | | |
| Սբլբնպ | « | 96 | | |
| Նորշեն | « | 200 | | |
| Ճոմանի | « | 840 | | |
| Հաղո | « | 2400 | եկեղեցի մեկ | սբ. Աստվածածին |
| Վերին Պալաբմ | « | 160 | « | Մինաս |
| Վարի Պալաբմ | « | 200 | « | Հակոբ |



| | | | | |
|---|---|---|---|---|
| Ճալտակո | « | 120 | եկեղեցի | չունին |
| Միլկա | « | 80 | եկեղեցի | չունին |
| Զանկավի | « | 64 | | |

## Տրի՝ գավառ Սղերտի

Սոյն գավառս Սղերտի կողմանորմե ժամ հեռի դեպի ի երկիր* պատվական ու զվարճալի, բայց շրջապատված է դրժբախտաբար քուրտ հեներե, որո բնիկ հայեր իբրև ամեն հայկաղաններե քաջակորով և կտրիճ են ի զեն և ի զարդ, որուն հենլով կփխրեն իրենց սեպհական հողերն ու կապրին, ընտիր պտուղներ կրնան հարբունս գալ ու արգասավորիլ, այլ ինչպես ըսի ավազակներու սև սարսափն կարգելե զիրենք այն անուշութենեն, միայն հողագործությամբ կապրին և երբեք պանդխտության չեն գնար։

## Գյուղորայք Տրի գավառի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Տրի | թիվ հայոց | 2400 | եկեղեցի երեք | սբ. Աստվածածին, Հովհաննես սբ. Լուսավորիչ |
| Խասե | « | 120 | | |
| Տենիս | « | 120 | | |
| Հարդվինա | « | 320 | եկեղեցի մեկ | սբ. Մինաս |
| Ուսպան Օկան | « | 165 | | |
| Սուտաս | « | 108 | | |
| Տերշ | « | 58 | | |
| Տեր Մարդաս | « | 104 | | |
| Կոսմկո | « | 240 | | |
| Հատիտ | « | 160 | | |
| Կուան | « | 40 | | |
| Պարես | « | 149 | | |
| Պարաշա | « | 245 | | |
| Մսերֆո | « | 60 | | |
| Ալելու | « | 32 | | |
| Օֆիմ | « | 800 | | |
| Տարհամ | « | 24 | | |
| Թբլե | « | 240 | եկեղեցի | սբ. Աստվածածին |
| Պենկոֆ | « | 136 | | |
| Մուզիվքեա | « | 700 | | |

* Հեղինակի բացթողումներն են (Հ. Պ.)։

## Սղերտի Բուսանց կամ Հազուան գավառ

Հազուան գավառ Սղերտեն ութ ժամ հեռի է նորա հյուսիս, երկիր լեռնոտ ու բարեբուխ, տեղացի հայերն ալ իրենց նախնի անունն ու քաջություն ունին, ասոնք մինչև քանիմ տարի միշտ կես անկախ կերպով կապրեին իրենց դրացի քուրդերեն, բայց մոտ օրերս կառավարություն յուր ուշադրություն դարձուց ինչպես ասոնց նույնպես ամբողջ Սղերտի գավառներու վրա, այժմ ամեն տեղ գյուղապետ և գավառապետներ կարգած է, որով խիստ շատ կնեղվին մերազնայք։

### Գյուղօրայք Հազուան կամ Սասուն գավառի

| Կող | Թիվ հայոց | 220 | եկեղեցի մեկ սբ. Մանուկ |
|---|---|---|---|
| Հով | « | 48 | |
| Նատոպու | « | 80 | |
| Պարմուտ | « | 96 | |
| Կեռեր | « | 16 | |
| Հատնի | « | 48 | |
| Հուութ | « | 120 | |
| Փիր շենք | « | 160 | |
| Կողիկ | « | 22 | |
| Թզի | « | 16 | |
| Տնկեր | « | 240 | |
| Առվտոց | « | 40 | |
| Մանգկուտ | « | 160 | |
| Նոր գեղ | « | 120 | |
| Կել Հասան | « | 20 | |
| Պելու | « | 160 | |
| Մանիկ | « | 40 | |
| Այմալո | « | 41 | |
| Շեխու գեղ | « | 38 | |
| Զորաղբի | « | 370 | |
| Արիզ դեմ | « | 40 | |
| Ճակոտ | « | 18 | |
| Կապլհոզ | « | 160 | |
| Կանե կուլ | « | 81 | |
| Պի մէր | « | 96 | |



| | | |
|---|---|---|
| Հարֆոզ | « | 120 |
| Տճպտրիկ | « | 56 |
| Մարսատ | « | 40 |
| Միրեք | « | 160 |
| Մարֆոզ | « | 163 |
| Բաշքինք | « | 161 |
| Կորնկեզ | « | 30 |
| Պատնք | « | 161 |
| Զանտակերտ | « | 18 |
| Տերա | « | 70 |
| Պալտրան | « | 160 |
| Շալմ | « | 171 |
| Կզլան | « | 189 |
| Միլիկոն | « | 200 |
| Ճայտկան | « | 141 |
| Պաճուկ | « | 51 |
| Վառընճ | « | 160 |
| Կրե Հասան | « | 162 |
| Բարուք | « | 161 |
| Պրսե տու | « | 40 |
| Մըշ գյուղ | « | 210 |
| Խնձորիկ | « | 136 |
| Շրանիկ | « | 110 |
| Գլորինք | « | 120 |
| Տալնոր | « | 123 |
| Կրե ձոր | « | 32 |
| Մազրե | « | 56 |
| Կոնք | « | 210 |

## Պարվար՝ գավառ Սղերտի

Գավառս կիյնա Սղերտի հարավային արևելք անորմե տասն և ութ ժամ հեռի, լեռնային երկիր որ բնակիչներ վերջին աշտիճան թշվառ են և ինչպես Սղերտի ընդհանուր գավառներն ոչ դպրոց ունին և օրինավոր կառավարական տեսչություն։

### Գյուղօրայք Պարվարի

| | | |
|---|---|---|
| Հայ | Թիվ հայոց | 92 |

| | | |
|---|---|---|
| Վելաս | « | 200 |
| Նորաշեն | « | 80 |
| Կարիճ | « | 164 |
| Առաջկանս | « | 180 |
| Ֆընտըք | « | 300 |

## Նաղկիպան՝ Գավառ Սղերտի

Սույն գավառ կիյնա Սղերտի արևմտյան կողմ վեց ժամ իրմե հեռի, որն որ լեռնային ու դաշտային է, երկիրն բարեբեր և մարդիկ անպիտան, քրիստոնյայք երկրագործությամբ կապրին և ոչքրիստոնյայք իրենց հայրենատուր ավազակությամբ։

## Գյուղօրայք Նազկիպան գավառի

| | | | |
|---|---|---|---|
| Հաթաթք | Թիվ հայոց | 140 | եկեղեցի չունին |
| Տրպե սայ | « | 50 | |
| Տապի | « | 30 | |
| Հաղնամէր | – | 50 | |
| Թախարի | « | 65 | |
| Կալհոկ | « | 82 | |
| Խոպե կակո | « | 125 | |
| Պեմերան | « | 50 | |
| Տլուն | « | 31 | |
| Կուպին | « | 160 | |
| Հոպ | « | 211 | |
| Սալաշ | « | 90 | |
| Խընդուկ | « | 105 | |
| Ճաֆոնան | « | 42 | |
| Պելոկ | « | 28 | |
| Պարզա | « | 120 | |
| Ներքին Պարզա | « | 78 | |
| Ճըման | « | 20 | |
| Մամլո | « | 80 | |
| Ճանչե | « | 38 | |
| Սճոն | « | 29 | |
| Թրոժկան | « | 17 | |
| Ավիշկ | « | 20 | |



| | | | |
|---|---|---|---|
| Ալունչ | « | 39 | |
| Մնտուան | « | 72 | եկեղեցի սբ. Հակոբ |
| Տոսարաք | « | 82 | |
| Սիլափոռ | « | 105 | |
| Խոնքկ | « | 40 | |
| Ավթե ներքին | « | 138 | |
| Թըշա Նավսո | « | 126 | |
| « | « | 16 | |
| Հասունի | « | 60 | |
| Ճմշարկ | « | 84 | |

## Սղերտի էրուն գավառ

Սույն գավառս կիյնա Սղերտի հյուսիսայի արևելք իրմե ութ ժամ ու կես հեռի, հույժ բարեբեր է և օդն ու ջուր առատ ու զվարճալի, ուր բազմամարդ են քրիստոնյայք և բարեկեցիկ մյուս գավառներու համեմատությամբ, որք ընդհանրապես հողագործ են ու ժրաջան։

## Գյուղօրայք գավառի

| | | |
|---|---|---|
| Սիզեռ | Թիվ հայոց | 160 |
| Ճուն | « | 80 |
| Մաղրե | « | 120 |
| Ավին | « | 119 |

## Սաղկան՝ գավառ Սղերտի

Նույն քաղաքեն արևմուտք Պիշերի գավռին մասը համարված ութ ժամ հեռու Սղերտեն, ունի ընդարձակ սահմաններ և ընտիր ընտիր մշկելի հողեր, այլ անխնամ մնացած, որն որ տեղացիք միայն իրենց ուտելի մի բուռ բան կցանեն։

## Գյուղօրայք Սաղկան գավառի

| | | | |
|---|---|---|---|
| Մերինան | Թիվ հայոց | 160 | եկեղեցի մեկ սբ. Սահակ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Լիճբկ | « | 48 | | |
| Քերբք | « | 140 | « | Խաչ |
| Կոնաե Սրկո | « | 120 | « | Հինգ Խորան |
| Տավուտ | « | 64 | | |
| Թզկոք | « | 28 | | |
| Հալկամբ | « | 40 | | |
| Շահնատերբկ | « | 240 | եկեղեցի մեկ | սբ. Թուխմանուկ |
| Էլհա | « | 664 | եկեղեցի | սբ. Աստվածածին |
| Թյմիշ | « | 120 | | |
| Գլեատոր | « | 460 | եկեղեցի | սբ. Մինաս |
| Գարսբկ | « | 61 | | |
| Գավառզո | « | 113 | | |
| Վերին Գավառզո | « | 80 | | |
| Գազպութ | « | 20 | | |
| Ղբմբշ | « | 43 | | |
| « | « | 50 | | |
| Ճակիաալու | « | 250 | եկեղեցի | սբ. Աստվածածին |
| Ավ | « | 20 | | |
| Քրեաեի | « | 120 | եկեղեցի | սբ. Սահակ |
| Ամսոս | « | 255 | եկեղեցի | սբ. Աստվածածին |
| Գատորք | « | 123 | | |
| Ըշքիտակ | « | 81 | | |
| Քորբկ | « | 120 | | |
| Թբմանճ | « | 64 | | |
| Ճնաշքիար | « | 96 | | |
| Վերին ազբկ | « | 40 | | |
| Ներքին ազբկ | « | 80 | | |
| Մազբա բռաշ | « | 194 | | |
| Գառճալ | « | 220 | եկեղեցի | սբ. Սարգիս |
| Գնարդակ | « | 186 | | |
| Վախբմս | « | 30 | | |
| Զեվբկ | « | 140 | | |
| Տուշա | « | 31 | | |
| Գումպարաք | « | 23 | | |

## Սղերտի Սուշան գավառ

Սույն գավառ չկրցինք գնալ ու անձամբ ստույգ տեղեկանալ, թեստ վտանգավոր լինելուն համար, այլ Սղերտի արդի առաջնորդ Արսլանյան Հակոբ և նախկին առաջնորդ կալհոկցի Պետրոս գեր. վարդապետներեն քաղեցինք սույն համառոտ ծանոթություն. այս է, տեղվոյն բնակիչներ մեծագույն մասամբ քուրդ են և աննշան մասն մեր հայ ազգեն են, թեև նույն գավառակն ալ աննշան և անկարևոր վայր մի է։



## Սղերտի Զոկոն գավառ

Նույնպես սույն գավառակս երթալ անկարելի եղավ պատերազմի կրակ ու բոց վառված ատեն հանդիպելուս համար, սորա նկատմամբ ևս հիշյալ արժանահավատ հայրերեն քաղած եմ տեղեկություններիս, ինչպես նաև մեկ քանի մոտավոր գավառներեն իրենցմե, ինձ-ինձ հավաստի տեղեկություն և հմտություն ունեցած իմ։

Զոկոն գավառն Սղերտի արևելյան հյուսիսային կողմ կիյնա, ընդհանրապես երկիրն լեռնային է ու անտառային, օդն ու ջուր ամենապարզ, բայց բերքն ոչ այնքան բարելի է։

Բնակիչք Զոկոն գավառի թիվ հայոց 807

Վերոհիշյալ հազար հարյուր քսան և հինգ տուն քրտերն իրենց ընտանյոք ու ամբողջ անասուններով գարնան գուդան Մշո արևմտյան լեռներն կսուզին և կապականին Տարոնո դրախտապերճ երկիրն։ Ավելորդ է ասել, որ սոքա վար ու ցանք չունին, այլ ամառն իրենց կեանքն փարած ընտիր-ընտիր ձիերու քամակ, աստի ու անտի կոփելով ու ճոփելով կապրին...։

## Շիրվանա Քոշարf

Ստուրկցի և մահմատկցիք (համագումար տունք 130)

Սույն երկու քրտական սերունդն ալ գարնան սկզբեն ցվերջ աշունն կուգան ու կորջանան Բաղիշի Տատիկի և շուրջ Խիզանի վայելուչ լեռներն ու տեղացի քրիստոնեից նեղություն կուտան, գողությամբ ու սպանությամբ. կառավարություն թույլ կուտա իրենց շատ անգամ, որ փախչին ու ազատին։

## Պոնտանու Խոշարք

Միրանցիք տունք 400

Պատուանցիք Ալկան և Տիվտերկցիք տունք 300

Վերոգրյալ չորս հարյուր տուն աշիրեթներն ալ գարնան դուռ բացվածին պես կուգան Խիզանու և Վանա ծովուն հարավային կողմի լեռներն ու վայրեր մարախի պես կշապկեն ու վնասներով կտառապեցունին տեղվոյն հայ քրիստոնիաներ, որո շարիացոպարտ գլուխներն կհամարվին Պըկզատու տուն, Շերիֆ, Տերվիշ, Իսմայիլ, Ֆետահ և Օսման անուն պեյեր, որոց կարբանեկին նաև քանիմ մոլեռանդ ընթերցողներ և ձելլալետին համբավավոր չար շեյխ։ Սոքա բոլորովին սանձարձակ թողտված են և ըստ հաճույս կտիրանան ու կբռնանան աղքատ ժողովրդյան, կամաց, ընչից և կենաց վրա, թե հայոց, թե ասորոց և թե մասմի քրդաց ամենայն և ամենայնն իրենց գերի եղած է, որք գրեթե անկյանք կշնչին, կապրին իբրև անբան անասուն։

Ա՜հ, մարդուս սիրտ կձգտի կտոր-կտոր կլինի, երբ նկատե Սղերտի աշխարհին բնական հարստություն, յուր արևմուտք Կիթմոս գյուղի կողի հանք, իր հարավային Պոհտակի Տմորկ գյուղի քարի և կաթրանի հանքն ու աղբյուր, արևելյան կող Շիրվան և Հիզան գավառներու միջև եղած ոսկիհանք և հյուսիսային կողմի Զոկոն նահանգին վերաբերյալ, Քֆրո, Պասլեն, Մնաց, Սերյան և Մտուս գյուղերու մեջեն ելած ազնիվ-ազնիվ աղերու հանքերն, որք կրնան երկիրն քանիմ տարվան մեջ բոլորովին կերպարանափոխել հատուցանել ու բարգավաճիլ, բայց ո՞վ այս սրբենի հանգամանքները նկատե ու գործածե ժողովուրդ զարգացնելու համար, է՜հ։

## Վանորայք Սղերտի

1. Սբ. Գամաղիելի վանք, որո վանահայրն տեր Վարդան զոր իբրև ագարակ իրեն կմշակե նորա հարյուր հիսուն արտավար սեպհական հողերն ու այգին ու կալվածներ, որք յուր վրա թափու եղած են։



2. Բարձր Զորո վանք, սույն մենաստանն ալ իբրև վերնոյն վիճակակից ու փառակից աշխարհական հայ մի կվարե, կցանե կուտե ու կպտե զինք։

3. Սբ. Խաչ վանք, սմա վանահայրն է Սահակ Պիտակ անուն վարդապետն, որն որ Սղերտի նախկին առաջնորդ Քել մականուն Հովհաննես վարդապետն ուղեց սպաննել քուրտ պետիմ հրահանգով, բայց իրեն նպատակին չկրցավ հասնիլ, միայն կրցեր էր զայն վիրավորել և ոչ մահառիթ կերպով, այն է ում ի հաճույս նվիրված է հիշյալ բարեճով մենաստան։

4. Սորուա վանք, տեր Ավետիս անուն քահանամ կնստի, ուր իր գերդաստանովն կապրի շատ խորոտ կերպով, մնալով միշտ երախտապարտ հայոց ազգին և ի սրտե աղոթարար։

Իմ խոսք. չեմ կրնար հուսալ, որ իմ ազգայիններե ոմանք դիս մեղադրեն, զի չեմ կրնար լիուլի տեղեկություն տալ իրենց, որով մասնակի տեղագրեի ինչպես խերքեթ աշխարհի գերեզմանատուններ, եկեղեցիք, սրբավայրք և մենաստանք, նույնպես ազգիս արդի թշվառ վիճակն ու իրենց առանձին-առանձին հանգամանքներ, թե ես այն կոչումն չունեի և թե կտրճություն և միջոցն, զի ինչոր պետքն էր և ժամանակս կներե այն միայն գաղափարելու և գրելու բաղդավորություն ունեցա քանիմ օրվան մեջ, զի այն ամեն, որ օգտակար է ժամանակիս ազգային տեսակետով, գլխավորներն հազիվ կրցի ժողովել իբրև համառոտ ծանոթություն, իսկ ապագային թողլով օրինավոր տեղագրիմ, որ ելլա ի հայն Հայաստան և գրե ինչ որ պետքն կպահանջե, որք ստվար քարտեզներու ծալքերու կը կարոտի այն ու խոհական գրիչներու, զի միայն ճամե Կարե ըսված գավառին, որն որ Սղերտի ու Ճզիքու մեջ եղած երկիրմ է, երեք հարյուրեն ավելի վանք ու եկեղեցիներ կա հայոցս վերաբերյալ, որոց շատերն ապաքեն ավար ու ավեր դարձեր են և մնացյալ մասնավոր քրտաց ձեռք կան, պետք չէ մոռանալ, որ իհարկե այնքան ալ հայ ժողովուրդ եղած է անդ, բայց այժմ, ցավ ի սիրտ կսեին, որ բնավ հայազն քրիստոնյամ ոչ

գտնվիր։ Հորոց ոմանք կրոնափոխ և այլք ասա և անդ ցրվեր ու մնացածներ ո՞վ գիտե, ուր, ահա այս և ասորնման կենսական իրերն քննելու համար կմնա ազգիս կնդողի մասին, որո անմահ սրտին գերին եմ ես։

## Սղերտ քաղաքի և իր շրջակա գյուղօրայք և շունչ

Սղերտ քաղաքի ընդհանուր թիվ հայոց 2400

Սղերտի շրջակա գյուղօրեք

« հայոց 1
« խառն 4

Գյուղօրայք Շիրվանի

« հայոց 9
« խառն 4

Ընդհանուր թիվ Շիրվանի գավառայնոց.

« հայոց 1569

Գյուղօրայք Խարզան գավառի

« հայոց 13

Ընդհանուր թիվ Խարզանի բնակչաց

« հայք 8280

Գյուղօրայք Տըհ գավառի

« հայոց 10
« խառն 3

Ընդհանուր թիվ Տըհի բնակչաց

« հայոց 6201

Գյուղօրայք Բուսանց գավառի

« հայոց 35
« խառն 23



Ընդհանուր թիվ Հաղուան կամ Բուսանց գավառի բնակչաց

« հայոց 5836

Գյուղօրայք Պարվար գավառի

« հայոց 4
« խառն 1

Ընդհանուր թիվ Պարվարի բնակչաց

« հայոց 686

Գյուղօրայք Նաղկիպան գավառի

« հայոց 13
« խառն 2

Ընդհանուր թիվ Նաղկիպան բնակչաց

« հայոց 2975

Գյուղօրայք Էրուն գավառի

« հայոց 4

Ընդհանուր թիվ Էրունի բնակչաց

« հայոց 479

Գյուղօրայք Սաղկոն գավառի

« հայոց 10
« խառն 29

Ընդհանուր թիվ Սաղկոնի բնակչաց

« հայոց 4524

Ամփոփում ընդհանուր գյուղօրեից և ծննդոց Խերքեթ աշխարհի.

Գյուղօրայք հայոց 99
« խառն 86

Ընդհանուր ծնունդք

« հայոց 29038

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Հերսեք—Հերցոգովինայի Թուրքերեն անունը։ Այստեղ հեղինակը ի նկատի ունի նաև 1875 թ. գարնանը Հերցոգովինայում և շատ չանցած նաև Բոսնիայում բռնկված ապստամբությունը՝ ընդդեմ թուրքական տիրապետության։ Այդ ժամանակ ապստամբներին օգնության հասնելու շարժում սկսվեց նաև Սերբիայում և այլ վայրերում։ Դրությունը ավելի շիկացավ, երբ 1876 թ. ապրիլին ապստամբության դրոշ պարզեց նաև բուլղար ժողովուրդը։ Ռուսաստանը ելնելով Բալկաններում վարած իր արտաքին քաղաքականությունից, պաշտպանում էր բալկանյան ժողովուրդների բոլոր պոռթկումները՝ ընդդեմ Թուրքիայի։

2 Պոսնիա—Բոսնիա։

3 Սև լեռ կամ Կարադաղ— այդպես էին անվանում Չեռնոգորիային։

4 1875 թ. ցար Ալեքսանդր Երկրորդը իր միսիայով մեկնեց Բեռլին՝ գերմանական Վիլհելմ Առաջինի և Բիսմարկի հետ երկու պետությունների փոխհարաբերությունների մասին բանակցելու։ Առաջնակարգ խնդիրն այն էր, թե Ֆրանսիայի վրա Գերմանիայի հարձակման դեպքում ի՞նչ դիրք կբռնի Ռուսաստանը։ Հանդիպման ժամանակ Բիսմարկի համար պարզ եղավ, որ Ֆրանսիայի վրա հարձակվելու գործը կհասնի Ռուսաստանի հետ բախման (История СССР, т. 5, стр. 242—243)։

5 Սերվիա—Սերբիա։

6 Պարխարա լեռներ— Տրապիզոնի նահանգում Սև ծովի ափին ձգվող լեռնաշղթա։

7 Սուրբ Եղիայի (св. Илия) լեռ—գտնվում է Ամերիկայի և Ալյասկայի սահմանում, համանուն լեռնաշղթայի ամենաբարձր գագաթն է։ Վերջին ժայթքումը տեղի է ունեցել 1847 թ. (Большая Энциклопедия, т. 17, СПб., стр. 189)։

8 Անա-պապա կյունիվ (Թրք.)—ահեղ իրավիճակ։

9 Յոթնաբլուրյան ամրարտակ—Կոստանդնուպոլիսը գտնվում է 7 բլուրների վրա, որոնցից մեկի գլխին դեռևս բյուզանդական ժամանակաշրջանում միջնաբերդ էր կառուցված։

10 Ի նկատի ունի ռուսական բանակում եղած կորնետներին։ Ռուսական հեծելազորում սպայական առաջին այդ չինը սահմանվել է 1801 թ. և 1882 թ. այն տարածվեց ամբողջ հեծելազորայինների վրա։



11 Վերաբերում է Ռուսաստանի զորաբանակներում եղած լեյբ դրագունյան գնդերին։ 1882 թ. ռուսական բանակում կային այդպիսի 70 գնդեր, որոնցից երկուսը՝ գվարդիական։

12 Եգերացոց աշխարհ կամ Կողբիս (Կոլխիդա)—գտնվել է Արևմտյան Վրաստանի Ռիոն գետի հովտում (Հայկ. Հանր. Հ. 5, էջ 513)։

13 Խաղտիք կամ Խաղտյաց երկիր—գտնվել է Սև ծովի հարավարևելյան ափին, որի տարածքը համապատասխանել է Լազիստանին։ Խաղտիքը շրջապատված է եղել Պարխարի, Համշենի և Դերջանի լեռներով, նրա միջով անցնում էր Ճորոխ գետը (Հայկ. Հանր. հ. 5, էջ 7)։

14 Իպրաիլ—Բրըիլա (Braila)—բնակավայր Ռումինիայում։

15 Ձեմնիցա—Ձեմինձա—Բնակավայր Ռումինիայում։

16 Տոքմաճա—բնակավայր Կոստանդնուպոլսի մոտ։

17 Քրղանլըք—բնակավայր Կոստանդնուպոլսի մոտ, որտեղ առաջին անգամ սկսվեցին 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի զինադադարի նախնական բանակցությունները։

18 Սրոպ Իպերտին—բնակավայր Կոստանդնուպոլսի մոտ։

19 Ա. Տեկանցը այստեղ սխալվում է, քանի որ Հայկական պատվիրակությունը, այսինքն՝ Մ. Խրիմյանը և նրա թարգման Մ. Չերազը Կ. Պոլսից մեկնել են ոչ թե 1878 թ. հունվարի 18-ին, այլ մարտի 8/20-ին։

20 Եղինո—թաղ Կոստանդնուպոլսում, որի եկեղեցու հովվի պաշտոնն է վարել Ա. Տեկանցը։

21 Զոոլու—Կոստանդնուպոլսի մոտ գտնվող վայր։

22 Սիլիվրի—Կոստանդնուպոլսի մոտ, Մարմարա ծովի ափին գտնվող մի գյուղաքաղաք։

23 Ուսկյուտար—Կոստանդնուպոլսի թաղամասերից մեկը։

24 Գրուբ, Կրուպ Ֆրիդրիխ—գերմանական զենք արտադրող ֆիրմայի հիմնադիրը։ Նրա ֆիրման հիմնադրվել է 1810 թ. և արտադրում էր ժամանակի հիանալի պողպատը։ Կրուպի թնդանոթները հայտնի էին աշխարհում։ Ֆիրման արտադրում էր նաև մեքենաների մասեր, թափանիվներ, երկաթուղային տրանսպորտում և նավերի վրա օգտագործվող պողպատի հիանալի տեսակներ։ 1846 թ. այդ ֆիրման առաջին անգամ արտադրեց երեք գծանի հրանոթներ և մինչև 1885 թ. 34 երկրների տվեց ավելի քան 700 հազար հրանոթ։ XIX դարի վերջին քառորդին, երբ Օսմանյան Թուրքիայի և Գերմանիայի հարաբերությունները լավ էին, ֆիրման սկսեց Թուրքիային մատակարարել մեծ քանակությամբ հրանոթներ, որոնցից մի քանիսը նույնիսկ հասան Ձեյթուն և դրվեցին այնտեղ կառուցված զորանոցում։

25 Միթրայողներ—Ֆրանսիայում գործող զինագործություն, որը պատկանում էր «Միջերկրականի երկաթագործության շինհրապարակներ» ընկերությանը „Forgs et chantiersde Ia Mediterranes„.

26 Չարգամպա— Սամսոնի մոտ գտնվող բնակավայր։

27 Պոնտոս քաղաք—մինչև XIX դարի վերջերը Տրապիզոնին անվանում էին իր անունով՝ Պոնտոս։

28 Լավեժ—քրդական երգատեսակ։

29 Նահո՞ տուրուն (Թրք.)—այ մարդի՛կ, կանգնե՛ք։

30 Ուլահ—Վալախիա։

31 Պուղտան—Մոլդավիա։

32 Լիմպոս—ըստ Տաթևացուց Հ. Աճառյանի բերած քաղվածքի՝ «նախաքրիստոնեական արդարների և այժմ անկնունք մեռնող մարդկանց հոգիների օթևանը» (Հ. Աճառյան, Ա. Բ. հ. 2, էջ 283)։ Ա. Տեկանցը ի նկատի ունի այն խառնաշփոթ վիճակը, որ եղել է 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Կարին քաղաքում։

33 Պաքոս (հուն.)—Զևսի և Սելեմեի որդին, Դիոնիսիոս աստծո կրկնակ անունը (Հ. Մ. Դալլասյան, Դիցաբանական անունների և դարձվածքների համառոտ բառարան, Երևան, 1966, էջ 29)։

34 Սրուանտարյաց Միքայել—նկատի ունի Գ. Սրվանձտյանի կրտսեր եղբորը՝ Միքայել Սրվանձտյանին, որն այդ ժամանակ գտնվում էր Կարինում։

35 Հովսեփ Պոպով—անհայտ անձնավորություն։

36 Նիկողոսյան Գրիգոր—հայ հասարակական-քաղաքական գործիչ։

37 Տիգրանյան Լևոն (1842—1906)—բժիշկ, 1875 թ. ավարտելով Դորպատի համալսարանը, 1879 թ. գալիս է հայրենի Երևան քաղաքը։ 1890 թ. մի քանի այլ անձանց հետ, մեծ ջանքերի գնով, բաց է անում Երևանի առաջին բուժարանը։ Երևան քաղաքի դպրոցական բժիշկն էր, քաղաքային վարչության առողջապահական և սանիտարական հանձնաժողովների նախագահը։ Երևանում գրել և հրատարակել է մի շարք աշխատություններ՝ «Անատոմիական բառարան» (1879), «Բառարան բժշկական բույսերի լատիներենից հայերեն և ռուսերեն» (1883), «Մարդակազմություն» (1881) և այլն։ Լ. Տիգրանյանը 1880—1884 թթ. խմբագրել և հրատարակել է «Առողջապահական թերթ» միամյա հանդեսը։

38 Արտանկուլյան—անհայտ։

39 Մաթուսաղա—Աստվածաշնչի մեջ նշված Ենովքի որդին, Ղամեքի հայրը, որը իբրև թե ապրել է 969 տարի։

40 Անկասկած այս Խբիթը Մարմարա ծովի ափին գտնվող հայաշատ Իզմիթն է։

41 Աշարճի—աշարը կամ տասանորդը Թուրքիայում հացահատիկից վերցվող հարկերից էր։ Գյուղացին պետք է վճարեր իր բերքի (հացահատիկի) 10 տոկոսը, սակայն, իբրև կանոն, ավելի շատ էին վճարում։ Հարկի գանձումը տրվում էր կապալով և հավաքողին կոչում էին աշարճի։

42 Մյութասարրֆ—Օսմանյան Թուրքիան վարչական տեսակետից բաժանված էր վիլայեթների (նահանգ), որոնք իրենց հերթին՝ սանջակների, որոնք էլ՝ կազաների, իսկ վերջիններս նահիյեների (գյուղախումբ)։ Վիլայեթների կառավարիչները կոչվում էին Վալի (նահանգապետ), սանջակներինը՝ սանջակաբեյեր կամ մյութասարիֆներ, կազաները ղեկավարում էին կայմակամները, իսկ նահիյեները՝ մյուդիրները։

43 Պլեճան—Բլեջան (Թրք.) այդպես էին անվանում Թուրքերը Գրգուր լեռան։

44 Շամբ—Սիփան, Նեմրութ, Գրգուր և Մոտկան լեռներից ջուրը ներծծվելով դուրս էր գալիս Մշո մոտ՝ կազմելով մի ընդարձակ ճահիճ, որին տեղի բնակիչները անվանում էին Շամբ։ Շամբից սկիզբ էր առնում Մեղրագետը և անցնելով Մշո դաշտով, խառնվում էր Արածանիի (Մուրադ) հետ։

45 Ակռաստ—գործավորներին և հատկապես դաշտի աշխատավորներին տրվող նախաճաշ։

46 Տափու կամ թափու (կայքագիր)—Թուրքական կառավարությունը մարդկանց հող տրամադրելիս գումար էր պահանջում, տալով պայմանագրեր, որոնք կոչվում էին թափու։

47 Տմպլկեցիներ կամ դմլիկներ—ցեղ է, որոնց նիստն ու կացը և կրոնը տարբեր է քրդական մնացած ցեղերից։ Ապրել են Խնուս (Հարք) գավառի արևմտյան մասերում։ Պարբերական մամուլում տպագրված հոդվածներից հայտնի է դառնում, որ այդ ցեղի լեզուն մոտ էր պարսկերենին և կոչվում էր Զազա, որի պատճառով էլ նրանց անվանում էին նաև Զազա։ Ունեցել են իրենց խոսակցական լեզուն, սակայն ուրիշների հետ խոսել են քրդերեն։ Նրանց կրոնը զրադաշտական, քրիստոնեական և մահմեդական կրոնների խառնուրդ էր («Լումա», գիրք Բ, 1898)։

48 Շիլա—կտավ—կարմիր շիլա, կարմիր ներկված կտավ։

49 Սոսասառաս—վայելչագեղ (Հ. Խ. Բաբսեղյան, «Հայերեն ուղղ. ուղղախոսական տերմինաբանական բառարան», Երևան, 1973, էջ 840)։

50 Ս. Մարինե և Պրուտի թաղեր—Մուշ քաղաքը ունեցել է 8 թաղ, որոնցից 5-ը՝ հայկական։ Նրանցից մեկը կոչվել է Ս. Մարինե, իսկ մյուսը՝ Բրտի թաղ։

51 Քաղատոս—Գաղատոս—այդպես էին անվանում Վասպուրականում քար կտրող վարպետներին։

52 Խաղախորդ—կաշեգործ։ Թուրքերն անվանում էին նաև տապաղլրք։

53 Գազպե—Մուշի և Սասունի անտառներում, ծաղկաշատ տարիներին, կաղնու ծառերի տերևների վրա նստում է սպիտակ շաքարափոշի՝ ծառերի տերևները պատելով շաքարով։ Գյուղացիները այդ տերևները ջրով լվանում էին և ապա ստանում սննդի համար շատ կարևոր գազպա, որին անվանում էին նաև մանանա։

54 Տեր Սարգսենց Երեմիա (Տեկանց) (1829—1885)—Արիստակես Տեկանցի ավագ եղբայրը։

55 Խոսքը Էրզրումի ռուսական հյուպատոս Նիկոլայ Գրիգորևիչ Իվանովի մասին է։ Ըստ Ա. Տեկանցի, Ն. Գ. Իվանովը 18 տարի առաջ, այսինքն 1860 թ. պահանջել է Ե. Տեկանցից տեղեկություններ հաղորդել իբրև թե ավելի քան 250 տարի ապրող մարդիկցի Մարգարի մասին, սակայն այդ ժամա-

նակ էրզրումի ռուսական հյուպատոսը ոչ թե Ն. Դ. Իվանովն էր, այլ Ավգուստ Դեմենտևիչ Ժաբան, նշանակում է, Ա. Տևկանցը շփոթում է տարեթիվը, քանի որ Իվանովը կոնսուլի պաշտոնը սկսել է վարել 1866 թվականից («Кавказский календарь, 1867, четвертый отдел стр. 74»)։ Երկարակյաց Մարգարի մասին տեղեկություններ է տալիս Դ. Սրվանձտյանը, ասելով, որ Ե. Տևկանցի հետ Մարգարին տեսել է 1866 թ. և նրա մասին գրում է. «Սա յուր կենդանությանը կը պատմեր, թե 250 տարեկան էր ինքն. մենք տեսանք զինքն 1866-ին, յուր ջիղերը պինդ, երկու անգամ նորոգված էին ակռաները և դեռ այն տարիքին մեջ կտեսնար քաջ, կը լսեր, կը խոսեր, կուտեր, կարթնանար երիտասարդի մը պես. և ամեն առավոտ լերան մացառներեն շոր փայտ կչարդեր, կը շալկեր բերեր Մուշ, կը վաճառեր ձյուն օրեր» (Դ. Սրվանձտյան, երկեր 1, Երևան, 1978, էջ 45)։

56 Սուլթան Մուրադ—ի նկատի ունի Սուլթան Մուրադ չորրորդին (1623—1640), որը 1638 թ. պարսիկներից գրավեց Երևանը, Թավրիզը և Բաղդադը և այդ ժամանակ էլ անցել է Մշո դաշտով։

57 Լենկ Թեմուրը Աշտիշատի տաճարի քարերից Սուլուխ գետի վրա համանուն գյուղի մոտ մի կամուրջ կառուցեց, որը պահպանվել էր մինչև առաջին համաշխարհային պատերազմը։

58 Աշտիշատ—հին հեթանոսական ժամանակներում Քարքե լեռան վրա գտնվող ավան, որը գտնվել է Մշո սբ. Կարապետի վանքից դեպի արևմուտք։ Այդտեղ էր հին ժամանակներում հռչակավոր հեթանոսական մեհյանը՝ բաղկացած երեք սենյակներից։ Նրանցից առաջինը կոչվել է Վահեվահյան, մյուսը՝ Անահիտի և երրորդը՝ Վահագնի սենյակ, որի մեջ էր Աստղիկի ոսկեձուլ արձանը։ Քրիստոնեության մուտքի հետ այդ մեհյանները կործանվեցին և նրանց փլատակների վրա կառուցվեց Աշտիշատի հայտնի վանքը։ Հին հեթանոսական ժամանակներում այդ ավանում ճոխությամբ տոնվում էր նավասարդի տոնը, մեհյանների ծխաններից դուրս էր գալիս անուշահոտ յուղերի ծուխը, թնդում էին թմբուկները, տեղի էին ունենում զորահանդեսներ, արտասանվում էին բանաստեղծություններ, երգում էին երգեր, իրենց գործիքների վրա նվագում էին գուսանները, իսկ ամբոխը պարում էր և այլն։

59 Ամրդոլու վանք—գտնվել է Բաղեշ (Բիթլիս) քաղաքում, որի դիրքը շատ գեղեցիկ էր։ Միջնադարում այդտեղ նստում էին Բաղեշի հոգևոր առաջնորդները, որոնք XIX դարում իրենց աթոռանիստը փոխադրեցին Կարմրակ եկեղեցի։ Սկսած XVII դարից Ամրդոլու վանքը դարձավ Արևմտյան Հայաստանի ամենանշանավոր մշակութային կենտրոններից մեկը, որտեղ գործում էր ժամանակի ամենալավագույն դպրոցներից մեկը՝ Ամրդոլու դպրոցը։ Կարմրակ եկեղեցու բակում է թաղված Տարոնի 1880-ական թթ. ազատագրական շարժումների ակտիվ մասնակիցներից մեկը՝ Մարգար վարժապետը։ 1889 թ., երբ կազմակերպվեց Աղբյուր



Սերոբի (Սերոբ Վարանյան) սպանությունը, նրա գլուխը բերվեց Բաղեշ և թաղվեց Կարմրակ եկեղեցու բակում։

60 Մշո ս. Կարապետի, Իննակնյան կամ Գլակա վանք—գտնվում էր Մուշ քաղաքից 7—8 ժամ հեռավորության վրա, Քարքե (Բազմասար) լեռան կողին, Ծիրինկատար սարի կանաչագեղ ստորոտի վրա։ Վանքը գոյություն ուներ 4-րդ դարից և իր առաջին վանահայր՝ Զենոբ Գլակի անունով կոչվել է նաև Գլակա վանք։ Քանի որ վանքի մոտ հին ժամանակներում կար նաև իննակնյան մեհյանը և 9 աղբյուրներ, վանքը կոչվել է նաև Իննակնյան։ Այս վանքը ուխտի են գնացել Թուրքիայի, Պարսկաստանի, Ռուսաստանի կողմերից եկած շատ ուխտավորներ։ Նոր Նախիջևանի հայ բնակիչները անցնում էին հազարավոր կիլոմետր ճանապարհ և նվերներով գալիս էին ս. Կարապետի վանքը՝ շմոռանալով իհարկե վերադարձի ճանապարհին այցելել իրենց նախնիների քաղաքը՝ Անի։ Թուրքերը վանքն անվանում էին Զանլի Քիլիսե (զանգակավոր եկեղեցի)։ Ժողովրդի մոտ ստեղծած ավանդության համաձայն, վանքի զորությամբ մարդիկ ձեռք էին բերում երգելու, նվագելու և լարախաղացության շնորհք։ Սայաթ-Նովան իր «Շատ սիրուն իս» խաղի տողատակում Մշո ս. Կարապետի վանքի մասին ասել է. «Ամեն աստված, լիս մղդում վուրթի Արութինս, պրստուց ինչ որ յարսուն տարին գլուխ դրի ամենայն խաղին, ամա սուրբ Կարապետի կարողութենով սովրեցա քամանչեն ու չոնգուրն ու սմբուրեն»։ (Ս. Նովա, Երևան, 1959, էջ 10)։ Մի ուրիշ «Խմեցուր ձեռիդ թասեմեն» տաղում դիմելով գոզալին Սայաթ Նովան ասում է.

«Ով որ ինձ շինեց դիվանա
Սուրբ Կարապիտեն խիվանա» (էջ 47)

Վերջապես հանրահռչակ երգիչը և բանաստեղծը գրել է «Մշու Սուլթան Սուրբ Կարապիտ» տաղը (էջ 80)։ Ամենայն հավանականությամբ երգիչը եղել է այդ վանքում։

61 Ճիտաշի—այդպես էին անվանում որմնանկարիչներին Վասպուրականում։

62 Ս. Հովհաննու կամ Եղրդուտի վանք—գտնվում է Մշո ս. Կարապետի վանքից ոչ շատ հեռու, Մուշ քաղաքից 4 ժամ հեռավորության վրա, Սիմ լեռան լանջին, կոչվել է նաև Եղեգնի ս. Հովհաննես կամ Շիշ յուղո վանք։

63 Առաքելոց վանք—կոչվել է նաև Ղազարու, Երկոտասան առաքելոց վանք, Առաքյալք, Թարգմանչաց վանք, Արեգնածագ, Տիրինկատարի վանք, Թադեի վանք անուններով։ Գտնվում էր Մուշից ոչ շատ հեռու՝ Ծիրինկատար լեռան ստորոտին։ Այստեղ են գտնվում Մ. Խորենացու, Դ. Անհաղթի, Մամբրե Վերծանողի, Եղնիկ Կողբացու, Ղազար Փարպե-

ցու, Ասողիկ Տարոնացու, իշխաններ Գրիգոր և Սահակ Մամիկոնյանների ու այլոց գերեզմանները։

64 Մատնավանք—գտնվում է Մուշից ոչ հեռու, Աշտիշատի մոտ։

65 Սբ. Աղբերիկի վանք—գտնվել է Սասունի Խութ գավառակում, Բռնաշեն ավանի մոտ։ Վանքի մոտից բխող աղբյուրի պատճառով կոչվել է Աղբերիկ և սասունցիների ամենասիրած ուխտատեղին էր։

66 Պելեքեցի, Տափեցի, Ղութեցի, Սասունցի և Շեկոյի ցեղեր։ Քրդական այս ցեղերը ապրում էին Մշո դաշտի մոտ ընկած տարածքում։ Ա. Տեկանցը նշում է նաև Բնշնարցի, Ձեղկութանցի, Պեքրանցի, Քոչաբ քրդերի մասին։ Սրանք գարնան հետ միասին իրենց անասնահոտերով, վրաններով ու ընտանիքներով հարթավայրից շարժվում էին դեպի Տարոնի լեռնային արոտավայրերը և հեռանում միայն ուշ աշնանը։

67 Շատախ գավառ—խոսքը այստեղ ոչ թե Վասպուրականի Շատախի այլ Սասունի Շատախի մասին է, որն ընկած է «Տորոս լեռանց մեջ իբրև վարդի կլոր փունջմ», շրջապատված լեռներով և սաղարթախիտ անտառներով, հիանալի հովասուն օդերով, որի պատճառով էլ «տեղացիք կայտառ են ու կտրիճ, լեռնական քրդաց հետ մաքառող ու տոկուն»։ Սասունի Շատախի բնակիչները ինքնապաշտպանական կռիվների ժամանակ միշտ էլ աչքի էին ընկնում իրենց արիությամբ և համարձակությամբ։ Այդպիսին էին նաև Վասպուրականի Շատախի բնակիչները։

68 Պինկյոլ-Բինգյոլ, Բյուրակնյան լեռներ—Արևմտյան Հայաստանի ջրերի բաշխման կենտրոնը, որտեղից սկզբնավորվում են Մուրադ (Եփրատի մի վտակը) և Արաքս գետերը։ Հազարավոր գետակների և լճերի, բյուրավոր ծաղիկների, կանաչների ու ծաղկաստանների մի ամբողջ աշխարհ է Բինգյոլը, որի լեռնագագաթները պատած են հավերժական ձյունով։ Այդ լեռների մասին ժողովրդի մոտ ստեղծվել են ու սերնդից սերունդ փոխանցվել բազմաթիվ ավանդություններ, որոնցից մեկում ասված է, որ մի հովիվ նկատում է, որ Բինգյոլի աղբյուրներից մեկին են մոտենում հիվանդ ու ծերացած երեք օձեր, որոնք մտնելով աղբյուրի մեջ երիտասարդանում ու հեռանում են։ Հովիվը բուժվելու նպատակով այնտեղ է բերում իր հիվանդ տղային և անհամար լճերի կողքին այդ լիճը շգտնելով ասում է.

Բինգյոլ հզար գյոլ,
Ըզ չի զանըմ քիժան գյոլ։
(Բինգյոլը հազար լիճ ունի,
Ես ի՞նչ իմանամ թե որ լիճն է) (Գ. Սրվանձտյան, հ. I, էջ 66, 67)։

Բազմաթիվ անգամ Բյուրակնյան (Բինգյոլ) լեռներին այցելության գնացած Գ. Սրվանձտյանը հիացած նրա գեղեցկությամբ գրում է. «Ձրարբի մարգեր, ամենաղալար բանջարներ և խոտեր իրենց արմատներով, ուտելու բուժվելու, գույն գույն ներկելու կը գործածեն. յուր վայրի կենդանիները առյուծ և վագր չեն, այլ եղնիկ և այծամեն»։ (Հ. 1, էջ 65)։

69 Խաչլուա լիճ—գտնվում է Վանա լճից դեպի հյուսիս-արևմուտք, Նազիկ քաղցրահամ լճից դեպի հյուսիս՝ Մանազկերտի մոտ։ Գ. Սրվանձտյանը Խաչլուա լիճն անվանում է «Խորհրդավոր և ուշո արժանի», քանի որ «Այս լիճը բրոր ու պղտոր է միշտ և յուր խորեն կը հուզվի ու ձայներ կարձակե...» (հ. 1, էջ 394)։

70 Քեշիշ գյոլ—Վան քաղաքից դեպի արևելք լեռների մեջ գտնվող մի լիճ է։ Կառուցվել է ուրարտական ժամանակներում, ամբարտակը ունի 3 մետր լայնություն և 8 մետր բարձրություն, նրա ջրով ոռոգվում էին Վանի Այգեստան թաղամասի այգիները։ Կոչվում էր նաև «Մենուասծու» և կառուցվել էր Մենուայի ժամանակ մ. թ. ա. 815—870 թվականներին։ Դարերի ընթացքում նրա մեջ մեծ քանակությամբ տիղմ էր հավաքվել։ XIX դարի սկզբում լճի մոտ նոր ամբարտակ կառուցվեց, որը 1843 թ. փլվեց և քաղաքին մեծ վնասներ հասցրեց։ Թուրքական կառավարությունը այդ լճի ջուրը վաճառում էր և տարեկան մի քանի հարյուր ոսկու օգուտ ստանում։

71 Վարագա լեռ—գտնվում է Վան քաղաքից ոչ շատ հեռու, ունի երկու կատարներ, որոնցից մեկը կոչվում է Գալիլեյա, իսկ մյուսը՝ Աստղական բերդ. վերջինիս վրա հեթանոսական ժամանակաշրջանից մնացած մի բերդի կամ տաճարի ավերակներ կային և ժողովրդական ավանդության համաձայն Աստղիկ դիցուհու Մեհյաններից մեկն էր։ Լեռան վրա էր գտնվում Վերին Վարագը, որտեղ կային փլատակների վերածված երկու եկեղեցիներ։ Ներքին Վարագը հայտնի Վարագա վանքն էր, որը յոթ եկեղեցիների միախառնում էր, որին թուրքերը անվանում էին Եոտիքիլիսե (յոթ եկեղեցի)։ Վարագա վանքը գոյություն ուներ հին ժամանակներից։ Թ. Արծրունին նրան անվանում է «Մայրաքաղաք ամենայն մենաստանեաց Վասպուրականի»։ 1857 թ. Մ. Խրիմյանը այդ վանքում ստեղծեց ժառանգավորաց վարժարանը, տպարան և ապա սկսեց հրատարակել «Արծուի Վասպուրականի» պարբերականը։ Այդ դպրոցը աշակերտներին կրթում էր նոր, առաջավոր մեթոդներով, այնտեղ ուսանելու էին գալիս Կոստանդնուպոլսից, Կովկասից, Պարսկաստանից և այլ վայրերից։

72 Նազիկ կամ Փրխուս լիճ—գտնվում է Վանա լճից դեպի արևմուտք։ Ունի քաղցրահամ ջուր և ականատեսների վկայությամբ նրա մեջ խայտում են մեծ քանակությամբ ձկներ, իսկ լճի հայելու վրա կան շատ վայրի թռչուններ՝ իրենց ձագերով։ Գ. Սրվանձտյանը այդ լճի մասին գրում է. «Նազիկն նազելի է անվանմամբ և տեսքով, փափուկ և անուշ է իր ջրովն ու ձկերով...» (Գ. Սրվանձտյան, հ. 1, էջ 394)։

73 Բզնունյաց ծով կամ Վանա լիճ—ծովի մակերևույթից բարձր գտնվող երկրագնդի լճերից ամենամեծն է։ Լիճը ունեցել է նաև հետևյալ անունները՝ ծով Վասպուրականի, Ծով ազի, կամ Ծովակ ազվո, Վանա ծով, Վանա լիճ, Աղթամարա ծով, Նաիրի ծով, Բիայնայի ծով, Շամիրամա

ծով, Տոսպա լիճ, Բզնունյաց ծով, Խլաթի լիճ, Արճեշի ծով, Ռշտունյաց ծով և այլն։ Լիճն ուներ չորս կղզիներ՝ Աղթամար, Լիմ, Կտուց, Արտեր։ Լճի շուրջ ադի է, նրանից ստացվում է բորակ (աղ), որը արտահանվում էր Բիթլիս, Սղերդ, Պարսկաստան և այլ վայրեր։ Լճի մեջ աճում էր մեծ քանակությամբ տառեխ կոչված ձուկը, որը որսում էին գետերից՝ մայիս-հունիս ամիսներին։ Լիճը ունի 100 մետր խորություն և գտնվում է ծովի մակերևույթից 1650 մետր բարձրության վրա ու զբաղում է 3690 քառ. կմ տարածություն։

74 Ըղտաքարեր—ըստ Մ. Խորենացու, Հայկը սպանեց Բելին, նրա դին թաղեց Նեմրութ լեռան մոտ։ Ավանդության համաձայն, այդ տեսնելով, բռնակալի զորքերը ցրվեցին, իսկ նրա ուղտապանները վախից և զարմանքից քարացան։ Նեմրութ լեռան ստորոտին կային մեծ-մեծ քարերի մի ամբողջ շարան, ժողովուրդը նրանց անվանում էր Բելի ուղտեր և ուղտապաններ։

75 Ձոլեր—այդպես էին անվանում Վասպուրականում և Բաղեշում առևտրականներին։

76 Ղափազ (թրք.)—վանդակ։

77 Թաքրիր (թրք.)—նշանակում է դիմում կամ խնդրագիր։ Օսմանյան արքունիք ուղարկվող բոլոր դիմում-խնդրագրերը կոչվում էին թաքրիրներ։ Պահպանվել են Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի բազմաթիվ թաքրիրների թուրքերեն և հայերեն տեքստերը, որոնց մեջ օսմանյան երկրի հայոց հոգևոր պետը տեղյակ էր պահում կառավարությանը ի ժողովրդի կրած տառապանքների մասին։ Սակայն կառավարությունը, իբրև կանոն, միշտ էլ դրանք թողնում էր անհետևանք։

78 Հեփեստոս—Հունական դիցաբանության համաձայն, Զևսի որդին էր և համարվում էր կրակի ու դարբնության աստվածը։



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1 Արիստակես Տեկանց . . . . . 5
2 Այցելություն ի Հայաստան 1878 թ. . . . . 15
3 Ծանոթագրություններ . . . . . 128

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՏԵՎԿԱՆՑ

# ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՀԱՅԱՍՏԱՆ
# 1878 Թ.

*Հրատ. խմբագիր՝ Ջ. Խ. Օրմանյան*
*Գեղ. խմբագիր՝ Հ. Ն. Գործակալյան*
*Նկարիչ՝ Յ. Հ. Ղանդիլյան*
*Տեխ. խմբագիր՝ Լ. Կ. Հարությունյան*
*Սրբագրիչներ՝ Ա. Ա. Ավանեսյան, Գ. Ս. Ստեփանյան*

ИБ № 1026

*Հանձնված է շարվածքի 18. 04. 1985 թ.: Ստորագրված է տպագրության 17. 10. 1985 թ.: ՎՖ 05236: Չափը 84×108 1/32, թուղթ № 1: Տառատեսակ «Գրքի սովորական», բարձր տպագրություն: Պայմ. 7,24 մամ., տպագր. 8,63 մամուլ: Ներկ. մամուլ 7,24: Հրատ.-հաշվարկ. 6,1 մամուլ: Տպաքանակ 3000: Հրատ. № 6419: Պատվեր № 405: Գինը 95 կ.*
*ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 375019, Երևան,*
*Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.:*

Издательство АН Арм. ССР, 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна, 24 г.

*ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչության տպարան, 375019, Երևան,*
*Մարշալ Բաղրամյան պող. 24:*

Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна, 24.